ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԱՒՐԲ ԳՐՈՑ

ԴՀԻՆ ԵՒ ԴՆՈՐԿՑԱԿԱՐԱՆԱՑ·

ԱՀԹԱՑԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱԼԱՏԱՆԵԱՆ

Մեր յաշակերտաց

ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՄԱՐԱՆԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ· ՏՆ· ՆԵՐՍԻՍԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ
ԵՒ
ՑԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՑ
ՏՆ· ՑՈՎՀԱՆՆՈՒ ՍՈՒՐԵՆԵԱՆ
ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ի ԿԱԼԿԱԹ·
1846

1698

25

Printed in Turkey

12004

1536 466-ԼԿԿ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԱՒՐԲ ԳՐՈՑ

ԴԱՒԻԹ ԵՒ ԻՆՈՐԿՏԱԿԵՐԱՆԱՑ,

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱԼՍՏԱՆԵԱՆ

վերոյ յաշակերտաց

ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

ԻՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՏՆՏՆԵՐՍԻՍԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ
ԵՒ
ՑԱՌԱՔԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՔՈՒՂԱՑ
ՏՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՈՒՐԲԵՆԵԱՆ
ԱՐՔԵ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱՍՊԵՏ

94021-57

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ի ԿԱԼԿԱԹԱ·
1846

Printed in Turkey

ԻՄԱՀԱՐԶԱՆ ՑԱՒԻԺԱԿԱՆ ՑԻՇԱՏԱԿԻ
ՊԱՐՈՆ ԱՒԵՏԻ ԱՂԱԲԻԳԵԱՆ
ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԵՒ ԱՋԳԱՍԷՐ
ՊԱՇՏԱՋԱՏԻ

ԵՒ

ՀԱՅՐԱԿՆԱՄԻ ՔԵՌԻՒՈՅ ՈՐ ՔՐԻՍՏՈՆԷԱՊԱՅԵԼ ԸՆՏՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՄՆՈՅՑ ՉՄԵՉ ԱՆՈՐԻՇ ՅՈՐԳԻՒՈՅ ԻՒՐՈՅ

ՉԱՑՍ ԳՈՒՉՆԱՔԵԱՅ ՏՐԻՏՈՒՐ

ԵՐԵԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԻԳԻՄԱՑ ԻՒՐ ԵՒ ԵՂԲԱՐՑ

ՑԱՐՈՒՑԱՆԷ

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ՔԵՌՈՐԳԻ ԻՒՐ ԵՒ ԾԱՌԱՅ

ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՍՏԱՆԵԱՆ

Printed in Turkey

ԳԱՏՄՈՒԹԻՒՆ ՈՒՐԲ ԳՐՈՑ ։

ՀԱՆԵԱԼՔ

Ի ՀԻՆ ԵՒ Ի ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ ։

Սպէղծումն Մարդոյ ։

ՍՏԵՂԾ Աստուած զմարդն Հող յերկրէ, և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի ։ և եղև մարդն Հոգի կենդանի ։ Եւ տնկեաց Աստուած զդրախտն յԵդեմ ընդ Արևելս. և եդ անդ զմարդն զոր ստեղծ ։ Եւ պատուիրեաց Աստուած Ադամայ, և ասէ ։ յամենայն ծառոց որք են ի դրախտիդ, ուտելով կերիցես ։ Բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի մի՛ ուտիցէք ։ զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ մահու մեռանիցիք ։

Եւ ստեղծ Աստուած զամենայն գազանս վայրի. և զամենայն թռչունս երկնից: Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց, և ամենայն թռչնոց երկնից, և ամենայն գազանաց վայրի. բայց Ադամայ ոչ գտաւ նման նմա: Եւ էարկ Աստուած թմբութիւն 'ի վերայ Ադամայ, և ննջեաց. և էառ մի 'ի կողից նորա, և եղից ընդ այնր մարմին: Եւ շինեաց Աստուած զկողն զոր էառ յԱդամայ 'ի կին. և էած զնա առ Ադամ: Եւ ասէ Ադամ. այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին 'ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ: Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկուքն 'ի մարմին մի:

Անկումն Արդոյ:

Եւ օձն էր խմաստնագոյն քան զամենայն գազանս որ 'ի վերայ երկրի, զոր արար Տէր Աստուած. և ասէ օձն ցկինն. զի՞ է. զի ասաց Աստուած թէ յամենայն ծառոց որք իցեն 'ի ներքս 'ի դրախտի այդր՝ մի՛ ուտիցէք: Եւ ասէ կինն ցօձն. 'ի պտղոյ ծառոց դրախտիդ

կերիցուք. բայց ի պտղոյ ծառոյն, որ է ի մէջ դրախտի, ասաց Աստուած մի՛ ուտիցէք ի նմանէ. և մի՛ հպա՛ս լինիցիք՝ զի մի՛ մեռանիցիք: Եւ ասէ օձն ցկինն, ոչ եթէ մահու մեռանիցիք: Զի գիտէր Աստուած, թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ բանայցեն աչք ձեր, և լինիցիք իբրև զաստուած՝ ճանաչէլ զբարի և զչար: Եւ տեսեալ կինն, զի բարի էր ծառն ի կերակուր, և գեղեցիկ ի տեսանել աչաց. և էառ ի պտղոյ նորա և եկեր, և ետ առն իւրում ընդ իւր, և կերան:

Եւ կոչեաց Տէր Աստուած զԱդամ և ասէ ցնա. ի ծառոյն յորմէ պատուիրեցի քեզ անտի չուտել՝ մի՞ թէ կերեր արդեօք ի նմանէ: Եւ ասէ Ադամ. կինն զոր ետուր ընդիս սա՛ ետ ինձ ի ծառոյ անտի՝ և կերի: Եւ ասէ Տէր Աստուած ցկինն. Զի՞նչ գործեցեր զայդ. և ասէ կինն օձն խաբեաց զիս և կերի: Եւ ասէ տէր Աստուած ցօձն փոխանակ զի արարեր դու զայն անիծեալ լիջի՛ր դու յամենայն անասնոց և ամենայն գազանաց երկրի. ի վերայ լանջաց քոց և որովայնի քոյ գնասցես, և հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց: Եւ ցկինն ասէ. բազմացուցանելով բազմացուցից

զտրտմութիւնս քո և զՀեծութիւնս. տրտմութեամբ ծնցես որդի. և առ այր քո դարձ քո. և նա տիրեսցէ քեզ: Եւ ցԱդամ ասէ. փոխանակ զի լուար ձայնի կնոջդ քոյ, և կերեր ի ծառոյն անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի չուտել, և կերեր ի նմանէ. անիծեալ լեցի երկիր ի գործս քո, տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց: Փուշ և տատասկ բուսուսցէ քեզ. և կերիցես զբանջար վայրի: Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յերկիր, ուստի առար. զի հող էիր և ի հող դարձցիս: Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ կեանս. զի նա է մայր ամենայն կենդանեաց:

Կայէն և Հաբէլ:

ԵՄՈՒՏ Ադամ առ Եւայ կին իւր, և յըղացաւ. և ծնաւ զԿայէն. և ասէ. ստացայ մարդ Աստուծով: Եւ յաւել ծնանել զեղբայր նորա զՀաբէլ. և եղև Հաբէլ հովիւ խաշանց և Կայէն գործէր զերկիր: Եւ եղև յետ աւուրց եբեր Կայէն ի պտղոյ երկրի պատարագ Աստուծոյ: Էած և Հաբէլ յանդրանկաց խաշանց իւրոց և ի պարարտաց

նոցա. և հայեցաւ Աստուած ի Հաբէլ և պատարագ նորա: Եւ ի Կային և ի զոհս նորա ոչ նայեցաւ, և տրտմեցաւ, Կային յոյժ. և խոնարհեցան և անկան երեսք իւր: ... Եւ ասէ Կային ցՀաբէլ եղբայր իւր եկ երթիցուք ի դաշտ, և եղև իբրև չոգան ի դաշտ անդր՝ յարեաւ Կային ի վերայ Հաբելի եղբօր իւրոյ՝ և սպան զնա:

Եւ ասէ Աստուած ցԿային. զի՞նչ գործեցեր զայդ. գոչումն արեան եղբօր քոյ բողոքէ առիս յերկրէ: Եւ արդ անիծեալ լիջիր դու ի վերայ երկրի, որ երբաց զբերան իւր ընդունել զարիւն եղբօր քոյ ի ձեռաց քոց:

Զի գործեսցես զերկիր և ոչ յաւելցի տալ քեզ զշօրութիւն իւր. երերեալ և տատանեալ եղիցես ի վերայ երկրի:

Եւ եդ Տէր Աստուած նշան ի Կային, և եկ Կային յերեսաց Տեառն. և բնակեցաւ յերկրին Նայիդ յանդիման Եդեմայ,

ԶԻՐԵՂԵՂ:

Եի եղև իբրև սկսան մարդիկ բազմանալ ի վերայ երկրի, և դստերք ծնան նոցա, տե-

սեալ որդւոցն Աստուծոյ դստերսն մարդկան, զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս յամենեցունց՝ զորս ընտրեցին: Հսկայք էին ի վերայ երկրի յաւուրսն յայնոսիկ՝ և յետ այնորիկ իբրև մտանէին որդիքն Աստուծոյ առ դստերս մարդկան. և ծնան իւրեանց որդիս. նոքա էին հսկայքն, որ յաւիտենից արք անուանիք: Եւ իբրև տեսս Տէր Աստուած, եթէ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի և ամենայն ոք խորհէր ի սրտի իւրում խնամով ի չարիս զամենայն աւուրս: Եւ ասէ Տէր Աստուած. ջնջեցից զմարդն, զոր արարի յերեսաց երկրի. ի մարդոյ մինչև յանասունս և ի սողնոց մինչև ի թռչունս երկնից. զի ստրջացայ զի արարի զնոսա: Բայց Նոյ եգիտ շնորհս առաջի Տեառն Աստուծոյ:

Նոյ այր արդար կատարեալ էր յազգի անդ իւրում. և հաճոյ եղև Նոյ Աստուծոյ: Եւ ասէ Տէր Աստուած ցՆոյ. ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ. զի լցաւ երկիր անիրաւութեամբք ի նոցանէ. և ահա ես ապականեցից զնոսա և զերկիր: Արդ արա դու քեզ տապան չորեքկուսի

փայտից. խորշս խորշս գործեսցես զտապան. և նաւթիւ ծեփեսցես զնա ներքոյ և արտաքոյ: Եւ ես ահա ածից զրհեղեղ զրոյ ի վերայ երկրի, ապականել զամենայն մարմին, յորում շունչ կենդանի ի ներքոյ երկնից. և ինչ որ իցէ ի վերայ երկրի սատակեսցի Բայց եդից զուխտ իմ ընդ քեզ. և մտցես ի տապանն. դու և որդիք քո. և կին քոյ, և կանայք որդւոց քոց ընդ քեզ: Եւ յամենայն անասնոց, և յամենայն գազանաց, և յամենայն մարմնոց, երկուս երկուս յամենայնէ մուծցես ի տապանն բուծանել ընդ քեզ արու և էգ լինիցին:

Եւ դու առնուցուս քեզ յամենայն կերակրոց՝ զոր ուտիցէք. և ժողովեսցես դու առ քեզ և եղիցի քեզ և նոցա կերակուր: Եւ այլ ևս եօթն օր, և ածից ես անձրև ի վերայ երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր; և ջնջեցից զամենայն հասակ զոր արարի յերեսաց երկրի: Եւ արար Նոյ զամենայն զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր Աստուած: Եւ եղև անձրև ի վերայ երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, և զօրացաւ և բազմացաւ յոյժ ի վերայ երկրի. և շրջէր

տապանն ի վերայ ջրոց. և ստուգացաւ ջուրն յոյժ յոյժ ի վերայ երկրի. և ծածկեաց ջուրն զամենայն լերինս բարձունս, որք էին ի ներքոյ երկնից:

Եւ մեռաւ ամենայն մարմին շարժուն ի վերայ երկրի. թռչնոց, և անասնոց, և գազանաց, և ամենայն սողնոց զերունոց ի վերայ երկրի, և ամենայն մարդ: Եւ ամենայն որ ունէր շունչ կենդանի յռնգունս իւր և ամենայն որ ինչ էր ի վերայ ցամաքի՝ մեռաւ: Եւ ջնջեաց զամենայն որ էր ի վերայ երեսաց երկրի ի մարդոյ մինչև յանասուն և ի սողնոց մինչև ի թռչունս երկնից և ջնջեցան յերկրէ և մնաց միայն Նոյ և որք ընդ նմա էին ի տապանի անդ: Եւ բարձրացաւ ջուրն ի վերայ երկրի աւուրս հարիւր և յիսուն:

Ո-էՈ ԸՆԴ ՆՈՅԷ:

Եւ յիշեաց Աստուած զՆոյ, և զամենայն գազանս և զամենայն անասուն, և զամենայն թռչունս որք էին ընդ նմա ի տապանի անդ. և էած Աստուած հողմ ի վերայ երկրի և դա-

դարեաց ջուրն: Եւ նստաւ տապանն յեօթ երորդումամսեանն ի քսան և եօթ ամսոյն ի լերինն Արարատայ: Եւ եղև վեց հարիւրորդի ի միում ամի կենաց Նոյի ամսեանն առաջնում, որ օր մի էր ամսոյն, նուազեաց ջուրըն յերեսաց երկրի. և եբաց Նոյ զձեղունն տապանին զոր արար. և ետես զի նուազեալ էր ջուրն ի վերայ երկրի: Եւ խօսեցաւ Տէր Աստուած ընդ Նոյի, և ասէ. Ել ի տապանէ այդի, դու և կին քոյ. և որդիք քոյ. և կանայք որդւոց քոց ընդ քեզ: Եւ ամենայն մարմին թռչնոց մինչև ցանասունս. և զամենայն սողուն զեռուն երկրի հան ընդ քեզ, և զեռասցեն ի վերայ երկրի. և աճեցէք և բազմացարուք ի վերայ երկրի:

Եւ օրհնեաց Աստուած զՆոյ և զորդիս նորա և ասէ աճեցէք և բազմացարուք և լըցէք զերկիր և տիրեցէք դմա: Եւ ահ և երկիւղ ձեր եղիցի ի վերայ գազանաց երկրի, և ի վերայ ամենայն թռչնոց երկնից, և ի վերայ ամենայն զեռնոց երկրի. և ի վերայ ձկանց ծովու. զոր ընդ ձեռամբ ձերով ետու: Եւ խօսեցաւ Տէր Աստուած ընդ Նոյի և ընդ որդիսն նորա որք ընդ նմա էին և ասէ. ահա-

ասիկ ես Հաստատեմ զուխտ ընդ ձեզ և ընդ զաւակի ձերումյետ ձեր : Եւ ընդ ամենայն շնչոյ կենդանւոյ որք ընդ քեզ են , և թռչնոց և յանասնոց և յամենայն գազանաց երկրի որք ընդ ձեզ . և յամենեցունց որք ելին ի տապանէ անտի . և ամենայն անասնոց երկրի : Եւ Հաստատեցից զուխտ իմ ընդ ձեզ . ոչ ևս մեռցի ամենայն մարմին ի ջրհեղեղէ . ոչ եղիցի ջրհեղեղ ջուրց ապականել զամենայն երկիր : Եւ ասէ Տէր Աստուած ցնոյ և ցորդիս նորա , այս է նշան ուխտին , զոր ես տաց ընդ իս և ընդ ձեզ՝ յաղագս յաւիտենից :

Զաղեղն իմ եդիցս յամպս , և եղիցի ի նշանակ յաւիտենական ուխտին ընդ իս և ընդ ամենայն երկիր : Եւ եղիցի գումարել ինձ զամպս ի վերայ երկրի , երևեսցի Աղեղն իմ յամպս : Եւ յիշեցից զուխտ իմ որ ընդիս և ընդ ձեզ . ի մէջ ամենայն շնչոյ կենդանւոյ յամենայն մարմնոյ . և ոչ ևս եղիցի ջրհեղեղ ի սատակել զամենայն մարմին : Եւ եղիցի աղեղն յամպս . և տեսից յիշել զուխտն յաւիտենական ի մէջ իմ և ի մէջ ամենայն շնչոյ կենդանւոյ յամենայն մարմնոյ որ է ի վերայ երկրի : Եւ ասէ Աստուած ցնոյ . սա է նշան

ուխտին . զոր ես ուխտեցի՝ ընդ իս և ընդ ձեզ . և ի մէջ ամենայն մարմնոյ որ է ի վերայ երկրի : Եւ էին որդիք Նոյի . որք ելին ի տապանէ անտի, Սէմ, Քամ, Յաբեթ : Քամ էր հայր Քանանու : Երեքին սոքա էին որդիք Նոյի . և ի նոցանէ սփռեցան ընդ ամենայն երկիր :

Շինուածն Բաբելոնի :

Եւ էր ամենայն երկիր լեզու մի, և բարբառ մի ամենեցուն : Եւ եղև ի խաղալն նոցա յարևելից, գտին դաշտ մի յերկրին Սենաար, և բնակեցան անդ : Եւ ասեն այր ցընկեր իւր . եկայք արկցուք աղիս . թրծեսցուք զայն հրով . և եղև աղիւսն ի տեղի քարի . և կուպր ի տեղի շաղախոյ : Եւ ասեն եկայք շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ, որոյ լինիցի գլուխ մինչև յերկինս . և արասցուք մեզ անուն յառաջ քան զսփռիլ ի վերայ երեսաց ամենայն երկրի : Եւ էջ Տէր տեսանել զքաղաքն և աշտարակն, զոր շինեցին որդիք մարդկան :

Եւ ասէ Տէր . ահա ազգ մի, և լեզու մի ամենեցուն . և զայդ սկսան գործել . և ոչինչ

պակասի 'ի նոցանէ զամենայն զոր ինչ յօժարիցին գործել: Եկայք իջցուք և խառնակեսցուք անդ զլեզուս նոցա . զի մի՝ լուիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ : Եւ սփռեաց զնոսա Տէր անտի ընդ երեսս ամենայն երկրի . և դադարեցին 'ի շինելոյ զքաղաքն և զաշտարակն : Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա խառնակութիւն . զի անդ խառնակեաց Տէր զլեզուս ամենայն երկրի , և անտի ցրուեաց Տէր ընդ երեսս ամենայն երկրի :

Աբրահամ :

Եւ ասէ Աստուած ցԱբրահամ, ել դու յերկրէ քումմէ , և յազգէ քումմէ , և 'ի տանէ հօր քոյ , և եկ յերկիր զոր ցուցից քեզ : Եւ արարիցից զքեզ յազգ մեծ , օրհնեցից զքեզ և մեծացուցից զանուն քոյ . և եղիցիս օրհնեալ : Եւ գնաց Աբրահամ որպէս խօսեցաւ ընդ նմա Աստուած . և Աբրահամ էր ամաց եօթանասնից և հնգից , յորժամ ել 'ի Խառանէ : Եւ էառ Աբրահամ զՍառայ զկին իւր , և զՂովտ զեղբօր որդի իւր , և զամենայն զինչս իւրեանց՝ զորս ստացան , և զամենայն ոգիս

զորս ստացան 'ի խառանէ. և Եղէն գնացին յերկիրն քանանացւոց: Եւ ասէ Աստուած ցԱբրահամ. Հայեաց աչօք քովք, և տես 'ի տեղւոջէ յայդմանէ յորում դու ես, 'ի կողմանէ հիւսիսոյ և հարաւոյ, և յարևելից և 'ի ծովու: Զի զամենայն երկիրդ զոր տեսանես, քեզ տաց զդա:

Եւ արարից զզաւակ քոյ իբրև զաւազ երկրի. եթէ կարիցէ ոք թուել զաւազ երկրի ապա և քո զաւակ ընդ թիւ մտցէ: Եւ արդ՝ արի շրջեա՛ց ընդ երկիրդ յերկայնութիւն զորա, զի քեզ տաց զդա: Եւ ասէ Աբրահամ. որովհետև ինձ ոչ եատուր զաւակ, ընդ-ծոծինն իմ ժառանգեսցէ զիս: Եւ եհան զնա արտաքս՝ և ասէ ցնա. Նայեա՛ց ընդ երկինս, և թուեա՛ զաստեղս, եթէ կարասցես թուել զնոսա. և ասէ ցնա, այնպէս եղիցի զաւակ քո:

Եւ վասն Սառայի կնոջ քոյ օրհնեցից զնա. և տաց քեզ 'ի նմանէ որդի, և օրհնեցից զնա. և թագաւորք ազգաց 'ի նմանէ եղիցին: Եւ ասէ Աբրահամ ցԱստուած. Իսմայէլս այս կեցցէ առաջի քո: Եւ ասէ Աստուած ցԱբրահամ. այո՛. ահա Սառա կին քո ծնցի քեզ

որդի։ և կոչեսցես զանուն նորա Իսահակ։ և հաստատեցից զուխտ իմ ընդ նմա՝ յուխտ յաւիտենական։ և ընդ զաւակի նորա։ Եւ վասն Իսմայէլի ահա լուայ քեզ։ և օրհնեցից զնա և բազմացուցից զնա յոյժ։ և տաց զնա յազգ մեծ։

Ծնունդ Իսահակայ։

Եւ երևեցաւ նմա Աստուած առ կաղնեաւն Մամբրէի, մինչ դեռ նստէր առ դուրս խորանին իւրոյ 'ի միջօրէի։ Ամբարձեալ զաչս իւր ետես։ և ահա արք երեք կային 'ի վերոյ քան զնա։ և իբրև ետես ընթացաւ ընդ առաջ նոցա 'ի դրանէ խորանին իւրոյ։ և երկիր եպագ 'ի վերայ երկրի և ասէ, Տէր եթէ գտի շնորհս առաջի քո։ մի՛ զանց առներ 'ի ծառայէ քումմէ։ Այլ առիցս սակաւ մի ջուր։ և լուասցեն զոտս ձեր։ զովասջիք ընդ ծառովս։ Եւ առիցս հաց՝ և կերիջիք։ և ապա երթիջիք զճանապարհս ձեր։ փութանակ զի դարձայք առ ծառայ ձեր։ և ասեն՝ այդպէս արա՛, որպէս ասացերդ։

Եւ պնդեցաւ Աբրահամ 'ի խորանն առ Սառա և ասէ ցնա. փութա՛ և թրեա՛ երիս գրիւս ալեր նաշխոյ, և արա՛ նկանակս: Եւ յանդեաց ընթացաւ Աբրահամ. և էառ որթ մի մատաղ և բարի. և ետ ցպատանին, և փութացոյց վաղվաղակի հասուցանել: Եւ էառ կոգի և կաթն. և զորթն զոր հասոյց. և եդ առաջի նոցա, և կերին, և նա կայր առաջի նոցա ընդ ծառովն: Եւ ասեն ցնա, ո՞ւր է Սառա կին քո. նա պատասխանի ետ և ասէ. ահաւանիկ 'ի խորանի անդ է: Եւ ասէ Աստուած. դարձեալ եկից առ քեզ 'ի ժամանակի յայսմիկ 'ի սոյն աւուրս. և ունիցի որդի Սառա կին քո. և Սառա ունկն դնէր առ դրան խորանին: Եւ Տէր յայց եւ Սառայի որպէս և ասաց. արար Սառայի՝ որպէս և խօսեցաւ. և յղացաւ և ծնաւ Սառա Աբրահամու որդի ծերութեան. ըստ ժամանակին որպէս և խօսեցաւ ընդ նմա Աստուած: Եւ կոչեաց Աբրահամ զանուն որդւոյ իւրոյ՝ զոր ծնաւ նմա Սառա՝ Իսահակ:

Եւ Աբրահամ հարիւրամեան էր, յորժամ եղև նմա Իսահակ որդի իւր:

—

Ագար և Իսմայէլ :

Եւ աճեաց մանուկն, և հատուցաւ ի սահ-
նէ. և արար Աբրահամ ուրախութիւն մեծ
յաւուր յորում հատուցաւ ի սահնէ Իսահակ:
Եւ տեսեալ Սառայի զորդին Ագարայ Ե-
գիպտացւոյ, որ եղև Աբրահամու, զի խա-
ղայր: Եւ ասէ ցԱբրահամ. ի բաց հան զա-
ղախինդ և զորդի դորա, զի մի՛ ժառանգեսցէ
որդի աղախնոյդ ընդ որդւոյ իմում Իսահա-
կայ: Յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն. և
էառ հաց, և տիկ ջրոյ, և ետ ցԱգար. և եդ
յուս նորա զմանուկն. և արձակեաց զնա. և
երթեալ մոլորեալ շրջէր յանապատի անդ-
առ ջրհորովն երդման:

Եւ նուազեաց ջուր ի տիկ անտի. և ընկէց
զմանուկն ի ներքոյ միոյ եղևին ծառոյ: Եւ
երթեալ նստաւ յանդիման նորա ի բացէ իբ-
րև վտաւանաւ. զի ասէր՝ թէ ոչ տեսից
զմահ որդւոյն իմոյ. և նստէր յանդիման նո-
րա. և ձայն բարձեալ մանկանն լայր: Եւ լուաւ
Աստուած ձայնի մանկանն ի տեղւոջէն ուր
էր. և կոչեաց հրեշտակ Աստուծոյ զԱգար

յերկնից՝ և ասէ ցնա. զի՞նչ է այդ Ագրա՝, մի՛ երկնչիր. զի լուաւ Աստուած ձայնի որդւոյ քոյ՝ ի տեղւոջէ անտի՝ ուր էր :
Արի՛ առ զմանուկն քո, և զօրացո՛ զնա ձեռամբ. զի յազգ մեծ արարիցէ զնա : Եւ եբաց Աստուած զաչս նորա. և տեսեալ ջրհոր ջրոյ կենդանւոյ. և չոգաւ ելից զտիկն ջրով և տրբոյց մանկանն : Եւ էր Աստուած ընդ մանկանն : Եւ աճեաց և եղև ազեղ՝աւոր :

Եւ բնակէր յանապատին Փառանաւ. և էառ նմա մայրն նորա կին յերկրէն Եգիպտացւոց :

Փորձ հաւատոյն Աբրահամու :

Եւ եղև յետ բանից այսոցիկ, փորձեաց Աստուած զԱբրահամ՝ և ասէ ցնա. ա՛ռ դու զորդիդ քո զսիրելի, զոր սիրեցեր զԻսահակ. և գնա՛ դու յերկիր բարձր. և հանցես զդա անդ յողջակէզ՝ ի վերայ միոյ՝ ի լերանց՝ յորոց ասացից քեզ: Եւ յարեաւ Աբրահամ ընդառաւօտն, համբառեաց զէշ իւր. և էառ ընդ իւր երկուս ծառայս. և զԻսահակ զորդի իւր.

1536
9402-57

և պատուհաց փայտ յողջակէզ՝ յորեաւ և գնաց։ և եկն 'ի տեղին զոր ասաց նմա Աստուած։ Եւ էառ Աբրահամ զփայտ ողջակիզին։ և եդ 'ի վերայ Իսահակայ որդւոյ իւրոյ։ և էառ 'ի ձեռին զհուրն և զսուրն։ և գնացին երկոքեան 'ի միասին։

Եւ եկին 'ի տեղին՝ զոր ասաց նմա Աստուած։ անդ շինեաց սեղան Աբրահամ։ և եդ 'ի վերայ նորա զփայտն։ և կապեաց զԻսահակ որդի իւր։ և եդ զնա 'ի սեղանն 'ի վերայ փայտին։ Եւ ձգեաց Աբրահամ առնուլ զսուրն և զենուլ զորդի իւր։ Եւ կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից։ և ասէ։ Աբրահա՛մ Աբրահա՛մ։ մի՛ մատեր զձեռն քո 'ի պատանեակդ։ և մի՛ ինչ առներ դմա։ զի այժմ գիտացի թէ երկիւղած ես յԱստուծոյ։ և ոչ խնայեցեր յորդւոյդ քո սիրելի վասն իմ։ Եւ համբարձ Աբրահամ զաչս իւր և տեսեալ, և ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն Սաբեկայ զեղջերաց։ և գնաց Աբրահամ և էառ զխոյն։ և եհան զնա ողջակէզ փոխանակ Իսահակայ որդւոյ իւրոյ։ Եւ կոչեաց հրեշտակ Տեառն զԱբրահամ երկրորդ անգամ յերկնից՝ և ասէ։ Յանձն իմ երդուայ ասէ Տէր։ փոխանակ զի արարեր

դու զքանդ զայդ, և ոչ խնայեցեր զորդիդ քո սիրելի վասն իմ: Օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո իբրև զաստեղս երկնից բազմութեամբ և իբրև զաւազ առ ափն ծովու: Եւ օրհնեսցին 'ի զաւակի քում ամենայն ազգք երկրի փոխանակ զի լուար ձայնի իմում:

Ամոնոնի Իսահակայ ընդ Ռեբեկայ:

Եւ Տէր օրհնեաց զԱբրահամ ամենայնիւ: Եւ ասէ Աբրահամ ցծառայն իւր ցերէց տանն իւրոյ, ցիշխան ամենայն ընչից նորա. գնա յերկիրն իմ, և 'ի տուն իմ. և առցես զու անտի կին որդւոյ իմում Իսահակայ: Եւ էառ ծառայն տանն ուղտ յուղտուց տեառն իւրոյ՝ և մեկնեցաւ և գնաց 'ի Միջագետս 'ի քաղաքն Նաքովրայ: Եւ նստոյց զուղտսն արտաքոյ քաղաքին առ ջրհորոյ ջրոցն ընդ երեկս, յորժամ ջրուորն ելանէր: Եւ ասէ. Տէր Աստուած Տեառն իմոյ Աբրահամու, յաջողեա առաջի իմ այսօր. և արա ողորմութիւն ընդ Տեառն իմում Աբրահամու: Եւ եղիցի կոյս

մի որում ես ասացից, եթէ խոնարհեցո զսափորդ քո զի արբից, և ասասցէ ցիս՝ արբ, և ուղտուց քոց ևս արբուցից, մինչև դադարեացին յըմպելոյ, զայն պատրաստեցեր Ծառայի քում Իսահակայ. և այնու գիտացից եթէ արարեր ողորմութիւն Տեառն իմում Աբրահամու: Եւ եղև մինչչև կատարեալ էր զխօսսն ի մտի իւրում. և ահա Ռեբեկա ելն՝ որ ծնեալն էր Բաթուէլի որդւոյ Մելքայ կնոջ Նաքովրայ. և ունէր սափոր յուս իւր: Եւ էր կոյսն գեղեցիկ երեսօք յոյժ. կոյս՝ զոր այր ոչ գիտէր՝ էջ յաղբիւրն. և եկից զսափորն իւր՝ և էլ: Ընթացաւ Ծառայն ընդառաջ նորա՝ և ասէ. արբո ինձ սակաւ մի ջուր ի սափորոյ այդի:

Եւ նա ասէ. արբ Տէր. և փութացաւ իջոյց զսափորն ի վերայ բազկաց իւրոց. և արբոյց նմա: Եւ իբրև դադարեաց յըմպելոյ. ասէ՝ և ուղտուց քոց հանից աջուր մինչև ամենեքեան արբցեն: Եւ փութացաւ թափեաց զսափորն յաւազանն. և ընթացաւ դարձեալ՝ ի ջրհորն հանել ջուր, և եհան ամենայն ուղտուց նորա: Եւ եղև իբրև դադարեցին ամենայն ուղտքն յըմպելոյ. և էառ այրն

գինդս ոսկիս մի մի ըստ դահեկանի ձուլոյ։ և երկուս ապարանքանս 'ի ձերս Նորա։ 'ի տան դահեկանէ ձոյլնոցա։

Եւ ասէ։ հայր դուստր ես դու, պատմեա ինձ թէ ի՞նչ 'ի տան քում մեզ տեղի իջեւանաց։ Եւ ասէ ցնա։ դուստր Բաթուէլի եմ ես որդւոյ Մելքեայ, զոր ծնաւ Նաքովրայ։ Եւ ասէ։ յարդ և խոտ շատ է մեր, և տեղի իջեւանաց։ Եւ ասէ օրհնեալ Տէր Աստուած տեառն իմոյ Աբրահամու։ որ ոչ վրիպեցոյց զարդարութիւն իւր և զճշմարտութիւն 'ի տեառնէ իմմէ։ և ինձ յաջողեաց Տէր 'ի տան եղբօր տեառն իմոյ։ Եւ ընթացաւ աղջիկն պատմեաց 'ի տան հօր իւրոյ ըստ բանիցն այնոցիկ։ Եւ Ռեբեկայ էր եղբայրն՝ որում անուն էր Լաբան։ և ընթացաւ Լաբան առ այրն արտաքոյ յաղբիւրն։

Իբրև ետես զդինտսն և զապարանքանսն 'ի ձեռս քեռ իւրոյ։ և զի լուաւ զբանս Ռեբեկայ քեռէ իւրմէ, որ ասէր։ թէ այսպէս խօսեցաւ ընդիս այրն։ և եկն առ այրն, մինչ կայր 'ի վերայ ուղտուց իւրոց առ աղբերն։ Եւ ասէ ցնա։ Եկ մուտ 'ի տուն օրհնեալ Տեառն։ զի՞ կաս արտաքոյ։ զի ես պատրաս-

տեցի տուն և տեղի ուղտուցդ : Եւ եմուտ այրն
ի տուն անդր, և իջոյց յուղտուցն. և եհան
յարդ և խոտ ուղտուցն, և ջուր լուանալոյ ոտից
նորա, և ոտից նոցա, որք ընդ նմա էին : Եւ
եդին հաց առաջի նոցա ուտել. և նա ասէ ոչ
կերայց մինչև խօսեցայց զբանս իմ: Եւ ասէ.
Ծառայ Աբրահամու եմ ես : Եւ Տէր օրհ-
նեաց զտէր իմ յոյժ, և բարձրացաւ. և եհան նմա
արջառ և ոչխար, և արծաթ և ոսկի, ծա-
ռայս և աղախնայս, ուղտս և էշս :

Եւ ծնաւ Սառա կին տեառն իմոյ որդի մի
յետ ծերութեան իւրոյ, և նմա եհան զամենայն
որ ինչ էր նորա : Եւ ասաց տէր իմ. Ի տուն
հօր իմոյ երթիցես և ի տոհմ իմ. և առցես
անտի կին որդւոյ իմում: Եւ ես ասացի ցտէր
իմ. գուցէ ոչ գայցէ կինն ընդիս : Եւ ասէ
ցիս. Տէր ԱՆ իմ որում հաճոյ եղէ առաքինո-
րա, նա առաքեսցէ զհրեշտակ իւր ընդ քեզ,
և յաջողեսցէ զճանապարհ քո. և առցես կին
որդւոյ իմում յազգէ իմմէ, և ի տանէ հօր
իմոյ : Եւ իբրև եկի այսօր յաղբիւրն՝ ասեմ.
Տէր Աստուած տեառն իմոյ Աբրահամու
թէ յաջողեցեր ինձ զճանապարհս իմ, զոր ես
այժմիկ երկեալ եմ :

Ահաւասիկ ես հասեալ կամ ի վերայ աղ-
բեր ջրոյս, և եղիցի կոյս, զոր ես ասացից թէ
արքա ինձ տակաւ մի ջուր ի սափորոյդ քում-
մէ: Եւ ասասցէ ցիս արքա, և ուղտուցդ ևս
հանիցջուր, այնէ կին զոր պատրաստեաց
Տէր վասն որդւոյ տեառն իմոյ: Եւ մինչև
կատարեալ էր զիսօսս ի մտի իմում, անդէն
վաղվաղակի ելանէր Ռեբեկա, և ունէր սա-
փոր յուս իւր, էջ յաղբիւրն և էհան ջուր, և
ասեմ ցնա արքա ինձ: Եւ փութացեալ իջոյց
զսափորն յինքեանէ և ասէ, արքա դու, և ուղ-
տուցս իմոց արքայց:

Եւ հարցի ցնա և ասեմ, ո՞յր դուստր ես
դու, պատմեա՛ ինձ, և նա ասէ, դուստր Բա-
թուէլի եմ ես որդւոյ Նաքովրայ: Եւ եդի
գինտ յականջս նորա, և ապարանջանս ի
ձեռս նորա: Եւ երկրպագի Տեառն, և օրհ-
նեցի զՏէր Աստուած տեառն իմոյ Աբրա-
համու, որ յաջողեաց ինձ ի ճանապարհի աստ
ճշմարտութեան: Արդ՝ եթէ առնէք դուք
շնորհս և արդարութիւն առ տէր իմ, պատ-
մեցէ՛ք ինձ, ապա թէ ոչ ցուցէ՛ք ինձ, զի դար-
ձայց յաջ կամ յահեակ: Պատասխանի ետուն
Լաբան և Բաթուէլ և ասեն, ի Տեառնէ

ել իրդ այդ, և մեք ոչ կարեմք հակառակ ինչ չար ասել բարւոյ: Ահաւասիկ Ռեբեկա առաջի քո՝ առ և գնա՝ և եղիցի կին որդւոյ Տեառն քո, որպէս և խօսեցաւ Տէր:

Եւ եղև իբրև լուաւ ծառայն Աբրահամու զբանս նոցա, երկիր եպագ Տեառն: Եւ եհան ծառայն անօթս ոսկւոյ և անօթս արծաթոյ և զհանդերձ, և ետ ցՌեբեկա՝ և ետ ընծայս եղբօր նորա, և մօրն: Կերին և արբին նա և արքն որք ընդ նմա էին՝ և ննջեցին՝ և յարուցեալ'ի վաղորդեայն անդր ասէ՝ արձակեցէք զիս, զի երթայց առ տէր իմ: Եւ ասեն եղբայր նորա և մայր՝ կացցէ կոյսն աւուրս տասն՝ և ապա երթիցէ: Եւ նա ասէ ցնոսա՝ մի՛ խափանէք զիս՝ զի տէր յաջողեաց զճանապարհ իմ՝ արձակեցէք զիս, զի երթայց առ տէր իմ:

Եւ նոքա ասեն կոչեսցուք զաղջիկն, և հարցցուք 'ի բերանոյ նորա: Կոչեցին զՌեբեկա, և ասեն ցնա՝ երթա՞ս ընդ առնս ընդ այսմիկ՝ և նա ասէ, երթամ: Եւ յուղարկեցին զՌեբեկա զքոյրն իւրեանց՝ և զինչս նորա՝ և զծառայն Աբրահամու՝ և որք ընդ նմա էին: Եւ ել Իսահակ ըզբաս-

նուվ 'ի դաշտին ընդ Երեկս , ամբարձ զաչս իւր՝ և ետես , զի գային ուղտք տասն : Ամբարձեալ զաչս իւր Ռեբեկա՝ ետես զԻսահակ , էջ վաղվաղակի յուղտէ անտի : Եւ ասէ ցծառայն ո՞վ է այրն՝ որ գայ 'ի դաշտին ընդ առաջ մեր , և նա ասէ ,նա է տէրն իմ , և նոյա առեալ զձորձսն էարկ զիւրև : Եւ պատմեաց ծառայն զամենայն զիսօսն , զոր արարեալ էր :

Եւ եմուտ Իսահակ 'ի տուն Սառայի մօր իւրոյ , և էառ զՌեբեկա , որ եղև նորա կին և սիրեաց զնա : Եւ այս են ամք կենացն Աբրահամու , զորս եկաց՝ հարիւր եօթանասուն և հինգ ամք : Եւ պակասեալ Աբրահամու մեռաւ 'ի բարւոք ծերութեան , ալևորեալ և լի աւուրքք , և յաւելաւ 'ի ժողովուրդ իւր : Եւ թաղեցին Իսահակ և Իսմայէլ որդիք նորա՝ յայրի անդ 'ի կրկնումս ագարակին Եփրոնի որդւոյ Սահառայ , որ է յանդիման Մամբրէի : Ագարակն , զոր ստացաւ Աբրահամ յորդւոցն Քեթայ , անդ թաղեցին զԱբրահամ և զՍառա զկին նորա :

Յակոբ և Եսաւ ։

Եւ էր Իսահակ ամաց քառասնից՝ յորժամ էառ զՌեբեկա զդուստր Բաթուէլի Ասորւոյ որ էր 'ի միջագետաց Ասորւոց, զքոյր Լաբանու Ասորւոյ՝ իւր 'ի կնութիւն ։ Եւ աչէր Իսահակ զՏէր վասն Ռեբեկայ կնոջ իւրոյ, զի ամուլէր ։ և եղեն երկու որդիք յորովայնի նորա ։ Եւ եկն որդին անդրանիկ շառագոյն ամենեւին իբրև զմորթ թաւ ։ և անուանեաց զանուն նորա Եսաւ ։ Ապա ել եղբայր նորա ։ և ձեռն նորա զգարշապարէ Եսաւայ ։ և կոչեաց զանուն նորա Յակոբ ։ Եւ ածեցին մանկունքն ։ և էր Եսաւ այր հմուտ որսոյ վայրագ ։ և Յակոբ այր առանց պաճուճանաց ընդասուն ։

Եւ սիրէր Իսահակ զԵսաւ ։ զի որս նորա կերակուր էր նմա ։ և Ռեբեկա սիրէր զՅակոբ ։ Եւ էր եփեալ Յակոբ թան ։ և եկն Եսաւ 'ի դաշտէն նքթեալ ։ Եւ ասէ Եսաւ ցՅակոբ ։ տուր ինձ 'ի ճաշակել 'ի շիկաթանէդ յայդմանէ, զի նքթեալ եմ ։ վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա Եդոմ ։ Եւ ասէ Յակոբ ցԵսաւ ։ վաճառեա՛ ինձ այսօր

զանդրանկութիւն քո :

Եւ ասէ Եսաւ . ահաւասիկ ես երթամ՝ի վախճանիլ . և առ իմ՞ իցէ այն անդրանկութիւն : Եւ ասէ ցնա Յակոբ . երդուիր ինձ այսօր . և երդուաւ նմա , և վաճառեաց զանդրանկութիւն իւր Յակոբու : Եւ Յակոբ ետ Եսաւայ հաց և թան ոսպնեայ . կերաւ և էարբ և յարեաւ և գնաց . և անարգեաց Եսաւ զանդրանկութիւն իւր : Եւ եղև իբրև ծերացաւ Իսահակ , և վատեցին աչք նորա 'ի տեսանելոյ , կոչեաց զԵսաւ զորդի իւր զերէց և ասէ ցնա . որդեակ իմ . ենա ասէ , ահաւասիկ ես :

Եւ նա ասէ ցնա , ահաւասիկ ես ծերացեալ եմ . և ոչ գիտեմ զօր վախճանի իմոյ : Արդ առ դու զզրահս քո զաղեղն և զկապարճ և ել 'ի դաշտ . և որսա ինձ որս . և արա ինձ խորտիկս որպէս և ես սիրեմ . և բեր մատո՛ ինձ , զի կերից , և օրհնեսցէ զքեզ անձն իմ մինչչև մեռեալ իցեմ : Եւ լուաւ Ռեբեկա զի խօսէր ընդ որդւոյ իւրում . և գնաց Եսաւ 'ի դաշտ սրսալ որս հօր իւրում :

Եւ խօսեցաւ Ռեբեկա ընդ Յակոբայ որդւոյ իւրում , և ասէ , ահա լուայ ես 'ի հօրէ

քումմէ, զի խօսէր ընդ եղբօր քում, և ա-
սէր: Բեր ինձ որս, և արա ինձ խորտիկս, զի
կերից և օրհնեցից զքեզ առաջի Տեառն մինչ-
չև մեռեալ իցեմ: Եւ արդ՝ որդեակ իմ,
լուր ինձ որպէս ես պատուիրեմ քեզ: Գնա՛
դու ի դաշտն, և առ ինձ անդի երկուս ուլս
փափուկս և ընտիրս, և արարից զնոսա խոր-
տիկս հօր քում, որպէս և սիրէ:

Եւ ասէ Յակոբ ցՌեբեկա մայր իւր, եղ-
բայր իմ Եսաւ թաւէ, և ես լերկ: Գուցէ
շօշափիցէ զիս հայր իմ, և լինիցիմ առաջի
նորա արհամարհոտ և ածիցեմ ի վերայ իմ
անէծս, և ոչ օրհնութիւն: Եւ ասէ ցնա
մայրն իւր, յիմ վերայ անէծքն այն՝ որդեակ,
բայց միայն լուր ձայնի իմում, և երթ ած
զուլսն ինձ: Եւ գնաց նա, և էառ և էած մեր
իւրում զուլսն և արար մայր նորա խորտիկս որ-
պէս և սիրէր հայր նորա:

Եւ առեալ Ռեբեկայ պատմուճանս զարդ-
նիւս որդւոյ իւրում զերիցու, որ կայր առ նմա
ի տան, և զգեցոյց Յակոբայ որդւոյ իւրում
կրտսերոյ: Եւ զուլենիս ագռոյց ի բազուկս
նորա, և ի վերայ մերկոյ պարանոցի նորա:
Եւ ետ զխորտիկն և զհացն զոր արար ի ձեռս

Յակոբայ որդւոյ իւրում: Եւ տարաւ հօր իւրում, և ասէ. Հայր իմ. և նա ասէ ահաւասիկ եմ. և ասէ ով ես դու որդեակ: Եւ ասէ Յակոբ ցհայր իւր. ես եմ Եսաւ անդրանիկն քո. արարի որպէս և խօսեցար ընդ իս. արի, նիստ և կեր յորսոյ իմմէ, զի օրհնեսցէ զիս անձն քո:

Եւ ասէ Իսահակ ցորդին իւր, զի էր. զի վաղվաղակի գտեր որդեակ. և նա ասէ. որպէս պատրաստեաց Տէր Աստուած առաջի իմ: Եւ ասէ Իսահակ ցՅակոբ, մօտ եկ, և շօշափեցից զքեզ, որդեակ. եթէ դո՞ւ իցես որդին իմ Եսաւ, թէ ոչ: Մատեաւ Յակոբ առ Իսահակ հայր իւր, շօշափեաց զնա և ասէ, ձայնդ՝ ձայն Յակոբայ, և ձեռքդ՝ ձեռք Եսաւայ: Եւ ասէ, դո՞ւ ես որդին իմ Եսաւ. և նա ասէ, ես եմ: Եւ ասէ մատո՛ւ ինձ և կերիցից յորսոյ քումմէ, որդեակ. զի օրհնեսցէ զքեզ անձն իմ. և մատոյց նմա. և եկեր, և եբեր գինի, և էարբ:

Եւ ասէ ցնա Իսահակ հայր իւր. մօտ եկ որդեակ և համբուրեա զիս: Եւ մատեաւ համբուրեաց զնա. և էառ զհոտ հանդերձից նորա. և օրհնեաց զնա, և ասէ. ահա

հոտ որդւոյ իմոյ իբրև զհոտ անդոյ լիոյ, զոր օրհնեաց Տէր: Եւ տացէ քեզ Աստուած 'ի ցօղոյ երկնից և 'ի պարարտութենէ երկրի. և բազմութիւն ցորենւոյ և գինւոյ: Եւ ծառայեսցեն քեզ ազգք. և երկրպագցեն քեզ իշխանք. և եղիցիս տէր եղբօր քումմ և երկիրպագցեն քեզ որդիք հօր քոյ, որ անիծանէ զքեզ, անիծեալ լիցի. և որ օրհնեսցէ զքեզ օրհնեալ: Եւ եղև յետ դադարելոյ Իսահակայ յօրհնելոյ անտի զՅակոբ զորդի իւր, իբրև էլ Յակոբ յերեսաց Իսահակայ հօր իւրոյ. եկն եղբայր նորա յորսոյ: Արար նա խորտիկս և մատոյց հօր իւրում և ասէ ցհայր իւր. յարիցէ հայր իմ և կերիցէ յորսոյ որդւոյ իւրոյ, զի օրհնեսցէ զիս անձն քո:

Եւ ասէ Իսահակ հայր իւր. ով ես դու. և նա ասէ. ես եմ որդին քո անդրանիկ Եսաւ: Եւ զարմացաւ Իսահակ զարմացումն մեծ յոյժ, և ասէ. իսկ այն ո՞վ էր, որ որսացաւ ինձ որս և եբեր, մատոյց ինձ և կերի յամենայնէ մինչչև քո եկեալ էր. և օրհնեցի զնա և եղիցի օրհնեալ: Եւ իբրև լուաւ զբանսն Իսահակայ հօր իւրոյ, աղաղակեաց 'ի ձայն մեծ դառնացեալ յոյժ. և ասէ ցհայր իւր. օրհ-

նեան և զիս Հայր :

Եւ ասէ ցնա եկն եղբայր քո ներողութեամբ , և էառ զօրհնութիւնս քո : Եւ նա ասէ , յիրաւի անուանն կոչեցաւ Յակոբ , զի այս երկիցս խաբեաց զիս , էառ զանդրանկութիւն իմ , և արդ էառ զօրհնութիւն իմ , և ասէ Եսաւ ցՀայր իւր , և ոչ մի՞ ինչ օրհնութիւն թողեր ինձ , Հայր : Պատասխանի ետ Իսահակ և ասէ ցԵսաւ , որով հետև տէր զնա քեզ , և զամենայն եղբարս նորա արարի նմա ծառայս , ցորենով և գինով հաստատեցի զնա , քեզ զի՞նչ արարիցս որդեակ : Ասէ Եսաւ ցՀայր իւր , միթէ մի օրհնութիւն իցէ քոյ Հայր , օրհնեա՛ և զիս Հայր: Համբարձ զձայն իւր Եսաւ և եղաց :

Եւ պատասխանի ետ Իսահակ Հայր նորա և ասէ ցնա , ահա՛ ի պարարտութեան եղիցի բնակութիւն քոյ , և ի ցօղոյ երկնից ի վերուստ եղիցի օրհնութիւն քո : Եւ սրով քով կեցցես , և ծառայեսցես եղբօր քում , և եղիցի յորժամ իշխանութիւն ունիցիս քակեսցես և լուծցես զլուծ նորա ի պարանոցէ քումէ : Եւ զա հէր Եսաւ սկսա ընդ Յակոբու վասն օրհնութեան որով օրհնեաց զնա Հայր

իւր. և ասէ Եսաւ ՝ի մտի իւրում. մերձեսցին աւուրք հօր իմոյ. յայնժամ սպանից զՅակոբ եղբայր իմ:
Աղդ եղեն Ռեբեկայ բանքն Եսաւայ որդւոյ իւրոյ երիցու. և յղեաց կոչեաց զորդի իւր զկրտսեր զՅակոբ, և ասէ ցնա. Ահա Եսաւ եղբայր քո սպառնայ սպանանել զքեզ: Արդ լուր որդեակ ձայնի իմում, և արի գնա՝ ՝ի միջագետս առ Լաբան եղբայր իմ ՝ի Խառանի: Եւ բնակեսցիս դու ընդ նմա աւուրս բազումս, մինչև անցցէ սրտմտութիւն բարկութեան եղբօր քոյ ՝ի քէն և մոռասցէ զոր ինչ արարեր նմա. և ապա առաքեցից և կոչեցից զքեզ անտի: Գուցէ անդաւակիցիմ յերկոցունց ՝ի ձէնջ ՝ի միում աւուր:

Ռուսէլ և Լէա:

Կոչեաց առ իւր զնա Իսահակ զՅակոբ և ասէ ցնա. արի, և գնա՝ ՝ի միջագետս Ասորւոց ՝ի տունն Բաթուէլի հօր մօր քոյ. և ա՛ռ քեզ կին ՝ի դստերաց Լաբանու եղբօր մօր քոյ:

Եւ գնաց Յակոբ յերկիրն արեւելից : Եւ հայեցաւ և ահա ջրհոր մի ի դաշտի անդ . և էին անդ երեք հօտք խաշանց մակաղեալք ի նմա . և ի ջրհորոյն յայնմանէ արբուցանէին զխաշինսն և վէմ մի մեծ կայր ի վերայ բերանոյ ջրհորոյն : Եւ անդ ժողովէին ամենայն հօտք . և տապալէին զվէմն ի բերանոյ ջրհորոյն , և տային զՕուր խաշանցն . և կափուցանէին զվէմն ի բերան ջրհորոյն անդրէն ի տեղի իւր :

Եւ ասէ ցնոսա Յակոբ , Եղբարք ուստի՞ էք դուք . և նոքա ասեն . ի Խառանէ եմք : Եւ ասէ ցնոսա գիտէ՞ք դուք զԼաբան զորդի Նաքովրայ . և նոքա ասեն , գիտեմք : Ասէ ցնոսա . ո՞ղջ իցէ . և նոքա ասեն , ողջ է . և ահա Ռաքէլ դուստր նորա գայ ընդ խաշինսն : Եւ մինչ դեռ նա ընդ նոսա խօսէր , ահա Ռաքէլ դուստր Լաբանու գայր ընդ խաշինս հօր իւրոյ . քանզի նա արածէր զխաշինս հօր իւրոյ : Եւ եղև իբրև ետես Յակոբ զՌաքէլ դուստր և զխաշինս Լաբանու եղբօր մօր իւրոյ , մատուցեալ Յակոբ տապալեցոյց զվէմն ի բերանոյ ջրհորոյն , և արբոյց խաշանցն Լաբանու եղբօր մօր

իւրոյ : Եւ համբուրեաց Յակոբ զՌաքէլ, և ձայն եբարձ , և ելաց :

Եւ պատմեաց Յակոբ Ռաքէլայ երթէ եղբայր հօր նորա էր, և որդի Ռեբեկայ, ընթացաւ կոյսն և պատմեաց հօր իւրում ըստ բանիցս այսոցիկ : Եւ եղև իբրև լուաւ Լաբան զՅակոբայ որդւոյ քեռ իւրոյ, ընթացաւ ընդառաջ նորա , գիրկս էարկ , և համբուրեաց զնա, և տարաւ զնա ի տուն իւր : Եւ ասէ Լաբան, յոսկերացս իմոց ես դու, և էր ընդնմա ամսօրեայ մի ժամանակ : Եւ ասէ Լաբան ցՅակոբ, զի եղբայր իմ ես դու , ոչ ծառայեսցես ինձ ձրի, յայտ արա ինձ , զի՞նչ իցեն վարձք քո : Եւ Լաբանայ էին երկու դստերք , անունն երիցուն՝ Լիա , և անուն կրտսերոյ՝ Ռաքէլ :

Աչք Լիայի գիճագոյնք, բայց Ռաքէլ բարի էր տեսլեամբ և գեղեցիկ երեսօք : Եւ սիրէր Յակոբ զՌաքէլ , և ասէ ծառայեցիցս քեզ եօթն ամ վասն Ռաքէլայ դստեր քոյ կրտսերոյ : Եւ ասէ Լաբան, լաւ իցէ քեզ տալ զնա քան տալ առն օտարի, բնակեա՛ց դու ընդիս : Եւ ծառայեաց Յակոբ վասն Ռաքէլայ ամս եօթն, և էին յաչս նորա

իբրև աւուրք սակաւք, քանզի սիրէր զնա: Եւ ասէ Յակոբ ցԼաբան, տուր ինձ զկին իմ, զի լցցեալ են աւուրք: Եւ ժողովեաց Լաբան զամենայն արս տեղւոյն և արար հարսանիք: Եւ եղև երեկոյ առեալ Լաբանու զԼիա դուստր իւր տարաւ առ Յակոբ:

Եւ ետ Լաբան Զելփայ զաղախին իւր նաժիշտ դստեր իւրում Լիայ: Եւ ասէ Յակոբ ցԼաբան, զինչ գործեցեր զայս, մի՞ վասն Ռաքելի ծառայեցի քեզ, ընդէ՞ր խաբեցեր զիս: Ասէ Լաբան չէն օրէնք յաշխարհի մերում տալ նախ կրտսերն քան զերէցն: Արդ կատարեա՛ եօթն ևս ամ ընդ նմա՝ տաց քեզ և զնա փոխանակ վաստակոցն, զոր վաստակեացես ինձ զեօթն ամ ևս այլ: Արար Յակոբ այնպէս, և կատարեաց զեօթն ևս ամ ընդ նորա՝ և ետ Լաբան զՌաքէլ դուստր իւր նմա՝ ի կնութիւն:

Եւ ետ Լաբան Ռաքէլի դստեր իւրում զԲալլա զաղախին իւր՝ նաժիշտ: Եւ սիրեաց Յակոբ զՌաքէլ քան զԼիա, և ծառայեաց նմա այլ ևս եօթն ամ: Եւ ծնաւ Լիա Յակոբայ որդիս վեց: Եւ ծնաւ Ռաքէլ զորդի յետ բաղում ամաց, և կոչեաց զանուն

նորա Յովսէփ :

Եւ մեծացաւ Յակոբ յոյժ յոյժ , և եղեն նորա ոչխար և արջառ յոյժ , և ծառայք , և աղախնայք , ուղտք և էշք : Եւ լուաւ նա զբանս որդւոցն Լաբանայ՝ զի ասէին , եթէ էառ Յակոբ զամենայն ինչս հօր մերոյ , ա-րար անտի իւր զայն ամենայն փառս : Եւ ետես Յակոբ զերեսս Լաբանայ և ահա ոչ էին ընդ նմա իբրև յերեկն և յեռանդն : Եւ ասէ Տէր ցՅակոբ , դարձ՚ի յերկիր հօր քո և յազգ քո և եղէց ընդ քեզ : Եւ յղեաց Յակոբ և կոչեաց զՌաքէլ և զԼիա՝ ի դաշտ անդր , ուր խաշինքն էին : Եւ ասէ ցնոսա , տեսանեմ ես զերեսս հօր ձերոյ , զի ոչ են ընդիս որպէս էս յերեկն և յեռանդն . և Աստուած հօր իմոյ էր ընդիս : Եւ դուք գիտէք , զի յամենայն զօրութենէ ծառայեցի հօր ձերում : Եւ հայր ձեր ընդ հարաւ ընդ իս , փոխեաց զվարձս իմ զտասն բծացդ , և ոչ ետ նմա Աստուած առնել ինձ չար : Եւ ասէ ցիս Աստուած՝ ի տեսլեան , Յակոբ , և ես ասեմ , զի է՞ : Եւ նա ասէ , քան-

զի տեսի որչափ ինչ առնէ ընդ քեզ Լաբան, արդ արի և ել յերկրէս յայսմանէ. և Երթ յերկիր ծննդեան քոյ: Պատասխանի ետուն Ռաքէլ և Լիա և ասեն ցնա. ամենայն մեծութիւն և փառք, զոր եհան Աստուած ի հօրէ մերմէ՝ մեզ եղիցի և որդւոց մերոց. արդ՝ որ ինչ ասաց քեզ Աստուած. արա՛: Յարեաւ Յակոբ էառ զկանայս և զմանկունս իւր և եհան զնոսա յուղտս: Եւ խաղացոյց զամենայն զինչս իւր, և զամենայն ստացուածս իւր, զոր արար ի Միջագետս Ասորւոց, երթալ առ Իսահակ հայր իւր յերկիրն Քանանացւոց: Ազդ եղև Լաբանու Ասորւոյ յաւուրն երորդի եթէ գնաց Յակոբ: Եւ առեալ զեղբարս իւր ընդ իւր պնդեցաւ զկնի նորա ճանապարհ զեօթն աւուր, և եհասանէ ի լերինն Գաղատացու: Եւ ասէ Լաբան ցՅակոբ. ընդէ՞ր արարեր զայդ. ընդէ՞ր գաղտագնացս եղեր յինէն, և գողացար դիս, և վարեցեր զդստերս իմ՝ զբրև զգերեալս սրոյ: Եթէ ազդ արարեալ էր քո ինձ՝ առաքէի զքեզ ուրախութեամբ, և արուեստականօք թմբկաց և

քնարաց : Բարկացաւ Յակոբ և ասաց ցԼաբան . զինչ վնասէ իմ, կամ զինչ յանցանք են իմ, զի պնդեցար զհետ իմ : Այս քսան ամէ, զի էի ընդ քեզ . ոչխարք քո և այծք քո ոչ սատերջեցան . և զխոյս մանքեաց քոց ոչ կերի : Զ գաղանաբեկն ոչ բերէի առ քեզ . այլ ես յանձնէ տուժէի . զգողնի տունջեան , և զգողնի գիշերոյ 'ի ձեռաց իմոյ պահանջէիր : Զ ցերեկ այրեալ լինէի 'ի տօթոյ և ըզցայգ 'ի ցրտոյ . հատեալ էր քուն յաչաց իմոց : Այս քսան ամէ 'ի տան քումէի, զչորեքտասան ամ փոխանակ դստերաց քոց վաստակեցի . և զվեց ամ 'ի խաշինս քո . և խաբեցեր զիս 'ի վարձս տասն բծացս : Եւ եթէ ոչ Աստուած հօր իմոյ , Աստուած Աբրահամու , և երկիւղն Իսահակայ էր ընդ իս, այժմ թերևս ունայն իսկ արձակէիր զիս :

Եւ ասէ Լաբան . արդ ՀԿ ուխտ դիցուք ես և դու . և եղիցի վկայութիւն ընդիս և ընդ քեզ: Եւ առեալ վէմ կանգնեաց արձան Եւ ասէ ցեղբարսն իւր . կուտեցէք քարինս և կուտեցին քարինս և արարին բլուր . և կերին և արբին անդ 'ի վերայ բլրոյն : Եւ ասէ Լաբան. ահա կարկառս այս և ահա արձան

զոր հատատաեցաք, ընդ-�ս և ընդ քեզ։ Եղիցի վկայ, զի ես ոչ անցցից ըստ կարկառս։ և մի՝ դու անցանիցես ըստ բլուրս և ըստ արձանս ըստ այս՝ չարութեամբ։ Եւ եղեն զենլիս ի լերինն և կոչեաց՝ զեղբարս իւր ուտել զհաց։ կերին և արբին և ագան ի լերինն անդ։ Եւ յարուցեալ Լաբան ի վաղիւ անդր համբուրեց զորդիս իւր և զդստերս իւր, և օրհնեաց զնոսա։ և գնաց դարձարաբեալ ի տեղի իւր։

Պատմէ Յակոբ Եսաւայ։

Եւ առաքեաց Յակոբ հրեշտակս առաջ քան զինքն առ Եսաւ եղբայր իւր յերկիրն ի Սէիր յաշխարհն Եդոմայ։ Պատուէր ետ նոցա և ասէ։ այսպէս ասասջիք տեառն իմում Եսաւայ, թէ այսպէս ասէ Ծառայ քոյ Յակոբ։ ընդ Լաբանայ կեցի և յամեցայ մինչև ցայժմ։ Եւ եղեն իմ արջառ և ոչխար և էշք և ծառայք, և աղախնեայք։ և առաքեցիպատմել տեառն իմում Եսաւայ զի գըտցէ ծառայ քոյ շնորհս առաջի քոյ։ Եւ դար-

ձեալ հրեշտակացն առ Յակոբ՝ և ասեն . չո-
քաք առ Եսաւ եղբայրդ քո , և գայ ընդ ա-
ռաջ քո , և չորեքհարիւր արք ընդ նմա :
Եւ զահի հարաւ Յակոբ· և տարակու-
սեալ էր : Եւ ննջեաց անդ զայն գիշեր . և
էառ յորոց ածէրն ձեռամբ իւրով պատարա-
գըս . և առաքեաց Եսաւայ եղբօր իւրում :
Այծս երկերիւր , քաղս քսան . և ցուլս տասն
մաքիս երկերիւր , խոյս քսան : Ուղտս ծնըն-
դականս կողռամբ հանդերձ երեսուն , կովս
քառասուն , էշս քսան , և մտրուկս տասն :
Եւ ետ ի ձեռս ծառայից իւրոց հօտս հօտս
առանձինն . և ասէ ցծառայս իւր . երթայք
յառաջ քան զիս , բացագոյնս ի միմեանց տա-
նիցի հօտ ի հօտից : Պատուիրեաց առաջ-
նոյն և ասէ . եթէ պատահիցէ քեզ Եսաւ
եղբայրիմ . և հարցանիցէ թէ ո՞յր ես և յո՞
երթաս , և ո՞յր է այդ , որ առաջի քոյ եր-
թայ : Ասասցես . ծառայի քո Յակոբայ պա-
տարագ են , զոր առաքեաց տեառն իւրում
Եսաւայ . եւ ինքն զկնի մեր գայ : Պատուի-
րեաց առաջնոյն , և երկրորդին , և երոր-
դին , և ամենեցուն , որք երթային յառաջ
զհետ խաշանցն և ասաց . ըստ բանիցս այ-

սոցիկ և խօսեաքիք ընդ Եսաւայ՝ յորժամ գտանիցէք զնա : Եւ յարուցեալ ի նմին գի-
շերի էառ զերկուս կանայսն , և զերկուս ա-
ղախնայս , և զմեաւասան որդիսն իւր . և էանց
ընդ հունն Յակոբայ : Զաչս իւր ի վեր ամ-
բարձ Յակոբ , ետես և ահա Եսաւ եղբայր
իւր գայր . և ընդ նմա արք չորեքհարիւրք
և բաշխեաց Յակոբ զմանկունս ի Լիա և ի
Ռաքէլ , և յերկուս աղախնայս : Եւ արար
զերկուս աղախնայսն և զորդիս նոցա առա-
ջի , և զԼիա և զորդիս նորա զկնի , ևս ըզ-
Ռաքէլ և զՅովսէփ հուսկ յետոյ : Եւ ինքն
էանց յառաջ քան զնոսա . և երկիր եպագ
եօթն անգամ ի վերայ երկրի , մինչև մերձե-
նալ առ եղբայր իւր : Ընթացաւ Եսաւ ընդ
առաջ նորա . գիրկս էարկ և համբուրեաց .
և անկաւ ի վերայ պարանոցի նորա և համ-
բուրեաց զնա և լացին երկոքեան : Հայե-
ցեալ ի վեր ետես զկանայս և զմանկունս ,
և ասէ . դոքա զի՞նչ են քո . և նա ասէ .
մանկունք իմ են . որովք ողորմեցաւ Աստու-
ած ծառայի քում : Եւ մատեան աղախնայ-
քըն և որդիք նոցա , և երկիր պագին նմա :
Եւ մատեաւ Լիա և որդիք իւր և երկիր պա-

գին նմա։ յետոյ մատեաւ Յովսէփ և Ռա-
քէլ, և երկիր պագին նմա։ Եւ ասէ։ զի՞նչ
էր այն ամենայն չուս, որ ինձ դիպեցաւ։ Եւ
նա ասէ։ զի գտցէ շնորհս ծառայ քո առաջի
քո։ Եւ ասէ Եսաւ, կայ և իմ շատ եղբայր։
քեզ լիցի քոյդ։ Եւ ասէ Յակոբ։ ա՛ռ զորհ-
նութիւնսդ իմ զոր մատուցի քեզ, և բռնա-
դատեաց զնա և էառ։ Եւ ասէ։ չուեսցուք՝
և երթիցուք։ և ես ըստ կարի ըստ պարա-
պոյ ճանապարհիդ առաջի իմ, և ըստ կազ-
դուրել մանկանց խաղացից, մինչև գնացից
առ տէր իմ, 'ի Սէիր։ Եւ ասէ Եսաւ։ իսկ
թողից առ քեզ 'ի ժողովրդենէ՝ ասսի որք
ընդիս են։ և նա ասէ։ ընդէ՞ր է ինձ այդ։
շատ է, զի գտի շնորհս առաջի քո տէր։ Եւ
դարձաւ յաւուր յայնմիկ Եսաւ ընդ ճանա-
պարհ իւր 'ի Սէիր

Եւ Յակոբ չուեաց, և արար իւր անդ
տունս։ և խաշանց իւրոց դադարս։ վասն
այնորիկ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ
խորանս։ Եւ եկն Յակոբ 'ի Սալէմ քաղաք
Սիկիմացւոց, որ է յերկրին Քանանացւոց,
իբրև եկն 'ի Միջագետաց Ասորւոց։ բնա-
կեցաւ յանդիման քաղաքին և տացաւ ըզ-

վեճակ յանդի , ուր է հար զԼսորանն իւր յԵ-
մովրայ հօրէ Միւքեմայ հարիւր ոչխարի : Եւ շինեաց անդ սեղան . և կարդաց զԱստ-
ուած Իսրայէլի :

Առուէ Աստուած զՅակոբ 'ի Բեթել :

Եւ ասէ Աստուած ցՅակոբ . արի՛ ան-
ց 'ի տեղին 'ի Բեթել , և անդ բնակեսցիս : Եւ ասէ Յակոբ ցընտանիս տան իւրոյ , և ցա-
մենեսին որք ընդ նմա էին . յարուցեալ ելցուք 'ի Բեթել . և արասցուք անդ սեղան Աստ-
ուծոյ որ լուաւ ինձ յաւուր նեղութեան իմոյ . որ էր ընդիս , և ապրեցոյց զիս 'ի ճանապար-
հին՝ զոր գնայի : Եւ չուեցին նոքա . և ե-
կին ահ 'ի վերայ քաղաքացն , որք շուրջ զնո-
վաւ և ոչ ելին զհետ որդւոցն Իսրայէլի : Եւ եկն Յակոբ 'ի Լուզա . որ է յերկրին Քանա-
նացւոց՝ այն ինքնէ 'ի Բեթել , ինքն և ամ-
նայն ժողովուրդն որք ընդ նմա : Եւ շի-
նեաց անդ սեղան . և կոչեաց զանուն տե-
ղւոյն Բեթել : Եւ դարձեալ երևեցաւ Աստ-
ուած Յակոբայ յորժամ եկն 'ի Միջագե-

տաց Աստուծոյ , և օրհնեաց զնա , և ասէ ցնա . անունդ քո ոչ Յակոբ , այլ Իսրայէլ եղիցի՝ և կոչեաց զանուն նորա Իսրայէլ : Եւ ասէ ցնա Աստուած , ես եմ Աստուած՝ քո բաւական՝ աճեսջիր , և բազմասջիր ազգք և ժողովուրդ ազգաց եղիցին ի քէն . և թագաւորք յերանաց քոց ելցեն : Եւ զերկիրդ զոր ետու Աբրահամու և Իսահակայ՝ զդա քեզ տաց . և զաւակի քում յետ քո : Եւ վերացաւ ի նմանէ Աստուած ի տեղւոջն ուր խօսեցաւ ընդ նմա :

Եւ կանգնեաց Յակոբ ի տեղւոջն ուր խօսեցաւ ընդ նմա Աստուած արձան քարեղէն և նուիրեաց ի նմա նուէրս . էարկ ի վերայ իւղ : Եւ չուեցին ի Բեթելայ . և եղև իբրև մերձեցաւ Յակոբ ի Քեբրաթայ երկիր մտանել յԵփրաթայ մեռաւ Ռաքել , և թաղեցին ի ճանապարհին Եփրաթայ , այն իսկ է Բեթղեհեմ : Եւ կանգնեաց Յակոբ արձանս ի վերայ շիրմի Ռաքելայ մինչև ցայսօր ժամանակի Եւ չուեաց Իսրայէլ , և էհար ըզխորան իւր յայնկոյս աշտարակին Գադերայ : Եւ եկն առ Իսահակ հայր իւր ի Մամբրէ ի քաղաք դաշտի . այնէ Քեբրոն յերկրին

Քանանացւոց ։ ուր պանդխտեցան Աբրահամ և Իսահակ ։ Եւ եղեն ամենայն աւուրք Իսահակայ զոր եկեաց , ամք հարիւր և ութսուն ։ Եւ պակասեալ Իսահակայ մեռաւ և յաւելաւ յազգ իւր , ծերացեալ և լի աւուրքք։ և թաղեցին զնա Եսաւ և Յակոբ ։

Յովսէփ և եղբարք նորա ։

Եւ բնակէր Յակոբ յերկրին ուր պանդխտեցաւ հայր նորա՝ յերկրին Քանանացւոց ։ Արդ ունէր Յակոբ զորդիս տասն բաց յերկուց որդւոցն սիրելի կնոջ իւրոյ Ռաքելայ ի Յովսեփայ և ի Բենիամինէ ։ Սոքա էին երկոտասան Նահապետքն ։ Բայց Իսրայէլ սիրէր զՅովսէփ առաւելքան զամենայն որդիս իւր , քանզի որդի ծերութեան էր նորա ։ և արար պատմուճան ծաղկեայ ։ Եւ իբրև տեսին եղբարք նորա թէ սիրէր զնա հայրն քան զամենայն որդիս իւր , ատեցին զնա և ոչ կարէին խօսել ինչ ընդ նմա խաղաղութեամբ ։ Ետես երազ Յովսէփ՝ և պատմեաց եղբարց իւրոց , և յաւելին ևս ատել զնա ։

Եւ ասէ ցնոսա լուարուք զերաղն , զոր տեսի : Թուէր երթէ զորայ կապէաք ի դաշտի միում . կանգնեցաւ որայն իմ, և եկաց ուղղորդ . և դարձան որայքն ձեր և պագին երկիր իմոյ որային : Եւ ասեն եղբարքն իւր միթէ թագաւորելով թագաւորեցես ի վերայ մեր , կամ տիրելով տիրեսցես մեզ . և յաւելին ևս ատելզնա վասն երազուն նորա , և վասն բանից նորա , Եւ ետես միւս ևս երազ և պատմեաց հօր իւրում և եղբարց իւրոց ՝ և ասէ . ահա տեսանէի միւս այլ երազ որպէս թէ արեգակն և լուսին և մետասան աստեղք երկիր պագանէին ինձ : Սաստեաց նոքա հայրն իւր և ասէ . զինչ է երազն զոր տեսեր . արդ գալո՞վ գայցեմք ես և մայր քոյ և եղբարք քո և երկիր պագանիցեմք քեզ : Եւ նախանձեցան եղբարքն իւր . բայց հայրն պահէր զբանսն : Եւ գնացին եղբարք նորա արածել զխաշինս հօր իւրեանց ի Սիւքէմ : Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ ոչ աւանիկ եղբարք քո արածեն զխաշինս ի Սիւքէմ . էկ առաքեցից զքեզ առ նոսա : Եւ առաքեաց զնա ի ծործորոյ Քեփրոնի . և եկն ի Սիւքէմ :

Եւ եգիտ զնա այր մի մոլորեալ ի դաշտին

ե հարց ցնա այրն և ասէ. զինչ խնդրես։ Եւ նա ասէ. զեղբարսն իմ խնդրեմ. պատմեա՛ ինձ ո՞ւր արածեն զխաշինս։ Եւ ասէ ցնա այրն. բարձին աստի. և լուայ զի ասէին. երթիցուք ի Գոթայիմ. և գնաց Յովսէփ զհետ եղբարցն իւրոց. և եգիտ զնոսա ի Գոթայիմ։ Տեսին զնա եղբարքն յառաջագոյն ի հեռաստանէ, մինչև մօտ եկեալ էր առ նոսա։ Եւ ասեն իւրաքանչիւր ցեղբայր իւր, ահա երազատեսն գայ։ Եկա՛յք սպանցուք զնա և ընկեսցո՛ւք ի մի՛ ի գբոց աստի. և ասասցուք երթէ գազան չար եկեր զնա. և տեսցուք զինչ լինիցի երազն նորա։ Իբրև լուաւ Ռուբէն, կորզեաց զնա ի ձեռաց նոցա, և ասէ մի՛ հարցուք զդա յոգի։

Եւ ասէ ցնոսա Ռուբէն. մի՛ հեղցուք զարիւն. այլ արկէ՛ք զնա ի գուբ մի յանապատի աստ։ Եւ եղև իբրև եկն Յովսէփ առ եղբարս իւր, մերկացուցին զպատմուճանն ի նըմանէ։ Եւ առին ընկեցին զնա ի գուբն, և գուբն ունայն էր և ջուր ոչ գոյր ի նմա։ Եւ նստան ուտել զհաց. զաչս ի վեր բարձեալ տեսին. և ահա ճանապարհորդք Իսմայէլացիք գային ի Գաղաադէ, և ուղտք նոցա

ի էին ինկոք ։ և ստաշխատք , և ռեանիւ ։ և երթային իջուցանել յԵգիպտոս ։ Եւ ասէ Յուդա ցեղբարսն իւր զինչ օգուտ է եթէ սպանանիցեմք զեղբայր մեր ։ Եկայք վաճառեսցուք զնա Իսմայէլացւոցն ։ և ձեռն մեր մի՛ շաղախեսցին ի նմա. զի եղբայր մեր է ։ և լուան եղբարքն իւր ։ Եւ ձգեցին հանին զՅովսէփ ի գբոյ անտի ։ և վաճառեցին ըզնա քսան արծաթի ։ Եւ իջուցին զՅովսէփ յԵգիպտոս ։

Եւ դարձաւ Ռուբէն ի գուբն , և ոչ եգիտ զՅովսէփ ի գբի անդր , պատառեաց զհանդերձս իւր , և դարձաւ առ եղբարսն իւր և ասէ , պատանեակն չէ՞ անդ ։ և ես արդ յո՞ երթայց ։ Եւ առեալ զպատմուճանն Յովսեփայ , զենին զուլ այծեաց և թաթաւեցին զպատմուճանն յարեանն ։ Եւ առաքեցին զպատմուճանն ծաղկեայ տանել առ հայր իւրեանց , և ասեն , զայդ գտաք ։ ծանիր եթէ որդւոյ քո՞ ի՞նչ պատմուճանդ ։ և եթէ ոչ ։ Եւ ծանեաւ զնա , և ասէ պատմուճանս որդւոյ իմոյ է , գազան չար եկեր զնա ։ գազան յափշտակեաց զՅովսէփ ։ Եւ պատառեաց Յակոբ զհանդերձս իւր և քուձ զգեցաւ ի

վերայ որդւոյն իւրոյ աւուրս բաղումս : Եւ ժողովեցան ամենայն ուստերք և դստերք նորա ։ և եկին մխիթարել զնա ։ և ոչ կամէր մխիթարիլ , և ասէ իջից ես սովին սգով 'ի դժոխս առ որդի իմ ։ և եւլաց զնա Հայրիւր : Իսկ Մադիանացիքն վաճառեցին զՅովսէփ յԵգիպտոս Պետափրեայ ներքինւոյ դահճապետի Փարաւոնի :

Յովսէփ և Պէտափրէս ։

Եւ էր Տէր ընդ Յովսեփայ ։ և էր յաջողակ ։ և եղև 'ի տան տեառն իւրոյ Եգիպտոս : Եւ գիտաց տէր նորա՝ թէ Տէր ընդ նմա է , և զամենայն զինչ և առնէր՝ Տէր յաջողէր 'ի ձեռս նորա : Եւ եգիտ Յովսէփ շնորհս առաջի տեառն իւրոյ , զի հաճոյ էր նմա։ և կացոյց զնա 'ի վերայ տան իւրոյ և զամենայն ինչ որ իւր էր՝ ետ 'ի ձեռս Յովսեփայ : Եւ եղև յետ կացուցանելոյ զնա 'ի վերայ տան իւրոյ և 'ի վերայ ամենայն իրի , որ ինչ էր նորա՝ օրհնեաց Տէր զտուն Եգիպտացւոյն

վասն Յովսեփայ ։ և եղև օրհնութիւն Տեառ-
ըն ի վերայ ամենայն ընչից նորա ։ ի տան և
յանդի ։ Եւ եղև յետ բանից այսոցիկ , զի
խորհէր կին տեառն նորա առնել չար Յով-
սեփայ և խնդրէր ատելի առնել զնա առաջի
առն իւրոյ ։ Եւ եղև օր ինչ այնպիսի , մտեալ
Յովսէփ ի տունն գործել զգործ ինչ իւր , և
ոչ ոք էր անդ յընտանեաց անտի ի ներքս ։
Բռնեաց զհարկանոց նորա և ասէ ։ Ննջեա՛
ընդիս ։ և նորա թողեալ զձոնս իւր ի ձեռս
նորա փախեաւ և ել արտաքս ։ Նմին իրի կո-
չեաց նա զընտանիս տանն և ասէ , տեսէք ,
զի էած մեզ ծառայ Եբրայեցի խաղ առնել
զմեզ ։ եմուտ առիս , և ասէ Ննջեա՛ ընդիս ։
և ես աղաղակեցի ի ձայն բարձր ։ Եւ իբրև
լուաւ թէ մեծաբարբառ աղաղակեցի ։ ե-
թող զձոնն իւր առիս ։ և փախեաւ և ել
արտաքս ։ Եւ եդ ձոնն առ իւր մինչև ե-
կըն տէր իւր ։ Եւ խօսեցաւ ըստ բանիցս այ-
սոցիկ ։ և ասէ եմուտ առիս ծառայն Եբրայ-
եցի զոր ածեր խաղ առնել զիս ։ Իսկ իբրև
լուաւ թէ բարձրացուցի զբարբառ իմ , և ա-
ղաղակեցի եթող զձոնն իւր յիս , և փախեաւ
և ել արտաքս ։ Եւ եղև իբրև լուաւ տէր

նորա զբանս կնոջն իւրոյ, զոր խօսեցաւ ընդ նմա. բարկացաւ սրտմտութեամբ :

Յովսէփ ի Բանտի :

Եւ էառ տէրն Յովսեփայ և էարկ զնա ի բանտ ի տեղին ուր կալանաւորքն արքունի կապեալ կային ի բանտին : Եւ էր Տէր ընդ Յովսեփայ, և էարկ զնովաւ ողորմութիւն. և ետ նմա շնորհս առաջի բանդապետին : Եւ ետ բանդապետն զբանդն ի ձեռս Յովսեփայ, և զամենայն կալանաւորս. որք էին ի բանտի անդ. և զամենայն զոր ինչ գործէին նա էր որ գործէր : Եւ ոչինչ գիտէր բանդապետն վասն նորա. զի ամենայն ինչ ի ձեռս Յովսեփայ էր. քանզի Տէր էր ընդ նմա. և զոր ինչ գործէր նա՝ Տէր յաջողէր ի ձեռս նորա : Եւ եղև յետ բանիցս այսոցիկ յանցեան տակառապետ և մատակարար արքային Եգիպտացւոց : Եւ բարկացաւ Փարաւոն ի վերայ նոցա : Եւ եդ զնոսա ի բանտի առ գահճապետին, և Յովսէփ կայր

նոցա ի սպասու ։ և էին աւուրս երիս ի բանտի անդ ։

Եւ տեսին երաշ երկոքին ։ իւրաքանչիւր ի միում գիշերի ։ Եւ եմուտ առ նոսա Յովսէփ ընդ առաւօտն ։ և տես զնոսա և էին խռովեալք ։ Եւ եհարց զնոսա և ասէ ։ ընդէ՞ր տրտում են երեսք ձեր այսօր ։ Եւ նոքա ասեն ցնա ։ երաշ տեսաք և ոչ ոք է՝ որ մեկնէ մեզ ։ ասէ ցնոսա Յովսէփ ։ ոչ ապաքէն ի ձեռն Աստուծոյ իցէ մեկնութիւնն նոցա ։ պատմեցէ՛ք ինձ ։ Եւ պատմեաց տակառապետն զերաշ իւր Յովսեփայ՝ և ասէ ։ Թուէր ի տեսլեան իմում որթ մի առաջի իմ ։ Եւ որթն ունէր երեք ուռս , կանաչ յոյժ ։ և և ունէր երիս ողկոյզս հասեալ խաղողոյ ։ Եւ բաժակն Փարաւոնի ի ձեռին իմում։ առնուի զխաղողն ։ և ճմլէի ի բաժակն Փարաւոնի ։ և տայի բաժակն ի ձեռս Փարաւոնի ։

Եւ ասէ ցնա Յովսէփ ։ այսէ մեկնութիւն դորա ։ երեք ուռքն երեք աւուրք են ։ Այլ և ևս երեք աւուրք , և յիշեսցէ Փարաւոն զիշխանութիւն քո , և անդէն ի նմին տակառապետութեան քում կացուսցէ ըստ առաջնոյ ի շխանութեան քոյ ։ որպէս և էիր տակառա

պետ Այլ զիս յիշեսջիր որպէս բարի լիցի քեզ և արասցես ինձ ողորմութիւն ։ և յիշեսցես զիս առաջի Փարաւոնի , և հանցես ի բանտէս յայսմանէ : Զի գողանալով գողացան զիս յերկրէն Եբրայեցւոց ։ և արդ ոչինչ արարի ։ և արկին ի տուն գբոյս այսորիկ : Իբրև ետես մատակարարն թէ ուղիղ մեկնեաց՝ ասէ ցՅովսէփ ։ և ես տեսանէի յերազի՝ թուէր ինձ թէ երիս խանս նաշհոյ ունէի ի գլուխ իմ : Եւ ի վերնումն խանին յամենայնէ զսր ուտէր արքայ Փարաւոն գործ մատակարարաց ։ և թռչունք ուտէին զնա ի խանէ անտի՝ որ էր ի վերայ գլխոյ իմոյ :

Պատասխանի ետ Յովսէփ և ասէ ցնա , այսէ մեկնութիւն դորա ։ երեք խանք երեք աւուրք են : Յետ երից աւուրց բարձցէ Փարաւոն զգլուխ քո ի քէն և կախեսցէ զքեզ ի փայտէ ։ և կերիցեն թռչունք երկնից ըզմարմինս քո ի քէն : Եւ եղև յաւուրն երրորդի օր ծննդոց էր Փարաւոնի ։ և առնէր ուրախութիւն ամենայն ծառայից իւրոց ։ և յիշեաց և զիշխանութիւն տակառապետին , և զիշխանութիւն մատակարարին ի մէջ ծառայից իւրոց : Եւ կացոյց զտակառապետն ան-

դէն յիշխանութեան իւրում, և ետ զբա ժակնի ձեռս Փարաւոնի: Եւ զմատակարարն կախեաց 'ի փայտէ որպէս և մեկնեաց Յովսէփ: Եւ ոչ յիշեաց տակառապետն զՅովսէփ, այլ մոռացաւ զնա:

Յովսէփ և Փարաւոն:

Եւ եղև յետ երկուց ամաց ետես Փարաւոն երազ, թուէր թէ կայցէ առ եզր գետոյ, և ահա որպէս թէ 'ի գետոյ անտի ելանէին եօթն երինջք գեղեցիկք տեսլեամբ, և ընտիր մարմնով, և արածէին 'ի խաղն անդ: Եւ այլ ևս եօթն երինջք ելանէին յետ նոցա 'ի գետոյ անտի զաղիրք տեսլեամբ և վտիտք մարմնով և արածէին առ այլ երինջսն առ եզեր գետոյն: Եւ ուտէին եօթն երինջքն զաղիրք տեսլեամբ և վտիտ մարմնովք զեօթն երինջսն զգեղեցիկս տեսլեամբ և զընտիրս:

Զարթեաւ Փարաւոն, և անդրէն 'ի քուն եմուտ, և ետես երազ երկրորդ, և ահա

եօթն հասկք ելանէին ի միում փնջի ընտիրք և գեղեցիկք : Եւ ահա եօթն այլ հասկք ոսին և խորշակահարք ելանէին յետ նոցա : Եւ կլանէին ոսինքն զեօթն հասկըն ընտիրս և զատոքս : Զարթեաւ Փարաւոն և էր երազ : Եւ եղև առաւօտ , և անձն նորա խռովեցաւ , և առաքեաց կոչեաց զամենայն երազահանսն Եգիպտոսի և զամենայն իմաստունս նորա , և պատմեաց Փարաւոն զերազն իւր , և ոչ ոք էր որ մեկնէր զերազն Փարաւոնի :

Եւ խօսեցաւ տակառապետն առաջի Փարաւոնի և ասէ զյանցանս իմ յիշեցուցանեմ այսօր : Բարկացաւ Փարաւոն ծառայից իւրոց , և եդ զմեզ ի բանտի ի տան դահճապետին , զիս և զմատակարարն : Եւ տեսաք երկոքին երազ ի միում գիշերի ես և նա : Եւ էր անդ ընդ մեզ պատանի մի մանուկ Եբրայեւոց, ծառայ դահճապետին և պատմեցաք նմա և մեկնեաց մեզ զերազն մեր , առն ըստ իւրանքաչիւր երազոյ մեկնեաց , և եղև որպէս և մեկնեացն մեզ , ինձ գալ հասանել յիշխանութեան , և նորա կախել զփայտէ : Առաքեաց Փարաւոն և կոչեաց զՅովսէփ , և

հանին զնա ի բանտէ անտի ։ փոքրեցին ըզ հերս նորա ։ և փոխեցին զպատմուճանն նորա ։ և եկն առաջի Փարաւոնի ։ Եւ ասէ Փարաւոն ցՅովսէփ երազ տեսի ։ և չիք ոք որ մեկնէ զնա ։ բայց ես լուայ զքէն ասել ։ եթէ լուսեաս զերազս և մեկնես ։ Պատասխանի ետ Յովսէփ և ասէ ցՓարաւոն ։ առանց Աստուծոյ ոչ լինիցի պատասխանի փրկութեան Փարաւոնի ։ Եւ պատմեաց Փարաւոն Յովսէփայ զերազն լուր՝ զոր տեսեալ էր ։

Եւ ասէ Յովսէփ ցՓարաւոն երազն Փարաւոնի մի է ։ զոր ինչ Աստուած առնելոց է՝ ե ցոյց Փարաւոնի ։ Եօթն երինջքն գեղեցիկք եօթն ամք են ։ և եօթն հասկքն գեղեցիկք եօթն ամք են ։ երազն Փարաւոնի մի է ։ Եօթն երինջք տգեղք և վատք ։ որք ելանէին զհետ նոցա ։ եօթն ամք են ։ և եօթն հասկքն սունք և խորշակահարք ։ լիցի եօթն ամ սով ։ Ահա՛ եօթն ամք եկեսցեն բազում լիութեամբ յամենայն երկրին Եգիպտացւոց ։ Եւ յետ այնորիկ եկեսցէ եօթն ամ սովու ։ և մոռասցին զլիութիւնն յամենայն երկրին Եգիպտացւոց ։ և սպառեսցէ սովն զերկիրն ։ Եւ արդ տես խնդրեա՛ այր մի ի-

մաստուն և խորհրդական փարաւոնի, և կացուցեաս զնա ի վերայ երկրիս Եգիպտացւոց, և արասցէ և կացուցցէ գործակալ փարաւոնի ի վերայ երկրիս, և հինգերորդեսցեն զարմտիս երկրիս Եգիպտացւոց զեօթն ամացըն լիութեան: Եւ ժողովեսցի ցորեան ընդ ձեռամբ փարաւոնի, և կերակուրք ի քաղաքըս պահեսցին: Եւ եղիցին կերակուրքն պահեալ երկրիս յեօթն ամս սովուն, որք լինիցեն յերկրիս Եգիպտացւոց, և մի՛ սատակեցի երկիրս սովու:

Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի փարաւոնի, և առաջի ամենայն ծառայից իւրոց: Եւ ասէ փարաւոն ցամենայն ծառայս իւր, մի թէ՞ գտանիցեմք այր այնպիսի, որ ունիցի զոգի Աստուծոյ յանձին իւրում: Եւ ասէ փարաւոն ցՅովսէփ, որովհետև եցոյց քեզ Աստուած զայդ ամենայն, չիք այր խորհրդական և իմաստնագոյն քան թէ զքեզ: Դու լիցիս ի վերայ տան իմոյ և բերանոյ քում հնազանդ լիցի ժողովուրդն իմ, բայց աթոռովս ի վեր եղէց քան զքեզ: Եւ հանեալ փարաւոն ըզմատանի իւր ի ձեռանէ իւրմէ եդ ի ձեռին Յովսեփայ և զգեցոյց պատմուճան բեհեղեայ

և էարկ ոսկի 'ի պարանոց նորա : Եւ եհան զնա յերկրորդ կառս իւր , և քարոզ կարգայր առաջի նորա :

Եւ կացոյց զնա 'ի վերայ երկրին Եգիպտացւոց : Եւ էր Յովսէփ ամաց երեսնից , յորժամ ընծայեցաւ առաջի Փարաւոնի արքային Եգիպտացւոց : Եւ Յովսէփ յերեսաց Փարաւոնի , և շրջեցաւ ընդ ամենայն Եգիպտոս Եւ արար երկրին յեօթն ամս լիութեան արդիւնս : Եւ ժողովեաց զամենայն կերակուրս ամացն եօթանց՝ յորս էր լիութիւն յերկրին Եգիպտացւոց , և համբարեաց կերակուրս 'ի դաշտաց քաղաքին որք շուրջ զնովաւ՝ 'ի նմա : Եւ անցին եօթն ամք լիութեաննն , որ եղեն յերկրին Եգիպտացւոց : Եւ սկսան գալ եօթն ամք սովուն , որպէս և ասաց Յովսէփ : Եւ եղև սով յամենայն յերկրին , զի յամենայն երկրին Եգիպտացւոց ոչ գտանիւր հաց : Եւ սովեցաւ ամենայն երկիրն Եգիպտացւոց , և աղաղակեաց ժողովուրդն առ Փարաւոն և ասէ Փարաւոն յամենայն Եգիպտացիսն , երթայք առ Յովսէփ , և զոր ինչ ասիցէ ձեզ արասջիք : Եւ եբաց Յովսէփ զամենայն զշտեմարանս ցորենոյ , և

վաճառէր ամենայն Եգիպտացւոցն : Եւ ամենայն աշխարհ գնացին յԵգիպտոս գնել ի Յովսեփայ . զի զօրանայր սովն ընդ ամենայն երկիր :

Եղբարքն Յովսեփայ գան յԵգիպտոս :

Եւ իբրև սաստկացաւ սովն ի վերայ երկրի , ասէ Յակոբ ցորդիսն իւր . ընդէ՞ր հեղգայք : Ահա լսեմ , եթէ գոյ ցորեան յԵգիպտոս . իջէք անդր . և գնեցէք մեզ սակաւ մի կերակուր . զի կեցցուք և մի՛ մեռցուք : Եւ իջին եղբարքն Յովսեփայ տասնեքին գնել ցորեան յԵգիպտոս : Եւ զԲենիամին եղբայրն Յովսեփայ ոչ արձակեաց Յակոբ ընդ եղբարսն . քանզի ասէր թէ գուցէ պատահիցի նմա հիւանդութիւն :

Եւ Յովսէփ էր իշխան երկրին . և նա վաճառէր ամենայն ժողովրդեան երկրին . և եկեալ եղբարքն Յովսեփայ երկիրպագին ի վերայ երեսաց խոնարհեալ յերկիր : Եւ ծանեաւ զնոսա Յովսէփ . այլ օտարացաւ ի նոցանէ , և խօսեցաւ ընդ նոսա խստագոյնս և

ասէ . ուստի՞ գայք . Եւ նոքա ասեն յերկրէն Քանանացւոց գնել կերակուր : Եւ յիշեաց Յովսէփ զերազ իւր զոր եաեսս . և ասէ ցնոսա . լրտեսք էք դուք և գիտել զելեւմուտ աշխարհին եկեալ էք : Եւ նոքա ասեն , ոչ տէր . ծառայք քո եկեալ եմք գնել կերակուր : Ամենեքին մեք եմք որդիք առն միոյ արք խաղաղութեան եմք . և չեն ծառայք քո լրտեսք : Ասէ ցնոսա՝ ոչ այլ զել և զմուտ երկրիս եկեալ էք տեսանել : Եւ նոքա ասեն . երկոտասան եղբարք եմք ծառայք քո որդիք առն միոյ յերկրին Քանանացւոց . և կրտսերն առ Հօր իւրումէ այսօր . և միւսն չէ ՚ի միջի : Եւ ասէ ցնոսա Յովսէփ . և դովին յայտ արարիք . երդուեալ յարևն Փարաւոնի , ոչ ելանէք աստի՝ եթէ ոչ եկեսցէ եղբայրն ձեր կրտսեր այսօր : Առաքեցէք զմի ոք ՚ի ձէնջ և ածցէ զեղբայրն ձեր . և դուք կացէք ՚ի գիպահոջ մինչև յայտնի լինիցին բանք ձեր . եթէ արդար խօսիջիք և թէ ոչ . ապա թէ ոչ՝ երդուեալ յարևն Փարաւոնի . եթէ ոչ լրտեսք իցէք :

Եդ զնոսա ՚ի բանտի զերիս աւուրս : Եւ ասէ ցնոսա Յովսէփ յաւուրն երրորդի . զայս

արարէք և ապրիք ։ զի և ես յԱստուծոյ երկիւղած եմ։ Եթէ արք խաղաղութեան էք, եղբայր մի՛ ի ձէնջ առաստ մնասցէ՛ ի բանտի, և դուք տարայք զվաճառ ցորենոյդ ձերոյ։ Եւ եղբայրն ձեր կրտսեր ածէ՛ք առիս ։ և հաւատարիմ լիցին բանք ձեր ։ ապա թէ ոչ մեռանիք, և արարին այնպէս։ Եւ ասէ իւրաքանչիւր ոք ցեղբայր իւր ։ այո՛ քանզի՛ ի մեղս եմք վասն եղբօր մերոյ ։ զի արհամարհեցաք գնեղութիւն ոգւոյ նորա, յորժամ աղաղակէրն առ մեզ ոչ լուաք նմա ։ վասն այնորիկ եկն ի վերայ մեր այս նեղութիւն։ Պատասխանի ետ Ռուբէն և ասէ ցնոսա, խօսեցայ ընդ ձեզ և ասեմ, մի՛ մեղանչէ՛ք մանկանդ և ոչ լուայք ինձ, և ահա արիւն նորա խնդրէ։ Եւ նոքա ոչ գիտէին թէ իմանայր Յովսէփ քանզի թարգման կայր ի միջի։ Եւ անցեալ մեկուսի ելաց Յովսէփ ։ և եկն միւսանգամ առ նոսա, և խօսեցաւ ընդ նոսա և էառ ի նոցանէ զՇմաւոն ։ և կապեաց առաջի նոցա։ Եւ ետ հրաման Յովսէփ ընուլ զամանս նոցա ցորենով ։ և դնել զարծաթն իւրաքանչիւր ի քրձի իւրում ։ և տալ նոցա պաշար ի ճանա-

պարհի և եղև նոցա այնպէս :

Եւ նոցա բարձեալ իւրաքանչիւր յեշ գնա-
ցին անտի : Եւ լուծեալ միոյ գքուրձ իւր տալ
կերակուր գրաստու իւրում յիջևանին՝ ետես
զծրար արծաթոյն իւրոյ , զի կայր ի բերանն
քրձին իւրոյ : Ասէ ցեղբարս իւր . դարձաւ
ինձ անդրէն արծաթն . և ահա կայ աստէն ի
քրձի իմում : Եւ զարմացան միտք նոցա . և
խռովեցան ընդ միմեանս : Եւ եկին առ Յա-
կոբ Հայր իւրեանց յերկրին Քանանու , և
պատմեցին նմա զամենայն զոր ինչ էանց ընդ
նոսա և ասեն : Խօսեցաւ այրն տէր երկրին
խստագոյնս , և եդ զմեզ ի բանտի իբր զլրտ-
տեսս երկրին : Եւ ասէ ցմեզ այրն տէր երկ-
րին . այդու գիտացից եթէ արք խաղաղու-
թեան էք . եթէ զեղբայր ձեր մի՝ առ իս
թողջիք . և զվաճառս ցորենոյդ առեալ տա-
նիցիք : Եւ զեղբայր ձեր կրտսեր ածիջիք առ-
իս և գիտացից եթէ չէք լրտեսք , այլ արք
խաղաղութեան էք , և զայս ևս եղբայր տաց
ձեզ և յերկրի աստ առնիցէք վաճառ :

Եւ եղև ի թափել նոցա զքուրձս իւրեանց
կայր իւրաքանչիւր ուրուք ծրար արծաթոյ ի
քրձի իւրեանց , և իբրև տեսին զծրարսն ար-

ծաթոյ իւրեանց ինքեանք և Հայրն իւրեանց երկեան յոյժ : Եւ ասէ ցնա Յակոբ Հայրն իւրեանց , զիս անորդի արարիք • Յովսէփ չէ՛ի միջի , Շմաւոն չէ՛ի միջի , և զԲենիամին ևս առնուցուք , յիմ վերայ եկն ամենայն : Եւ նա ասէ • ոչ իշխանէ որդ ի իմ ընդ ձեզ զի եղբայր սորա մեռաւ և սա միայն մնացեալ է : Եւ եթէ դէպ լինիցի սմա հիւանդանալ՝ի ճանապարհին • զոր երթայցէ և իջուցանիցէք զծերութիւն իմ տրտմութեամբ՝ի դժոխս

Երիրորդ ճառն արհորդ ՝ԼԷՒ՝ ՅԵԳԻՊՏՈՍ :

Եւ եղև իբրև սպառեցան ուտել զցորեանն , զոր բերին յերկրէն Եգիպտացւոց՝ ասէ ցնոսա Հայրն իւրեանց , դարձեալ երթա՛յք գնեցէք սակաւ մի կերակուր : Խօսեցաւ ընդ նմա Յուդա և ասէ , վկայութեամբ ետ ընդ մեզ վկայութիւն այրն , և ասէ • մի՛ տեսանիցէք զերեսս իմ, եթէ ոչ եղբայրն ձեր կրտսեր ընդ ձեզ իցէ : Արդ եթէ արձակես զեղբայրդ մեր իջցուք և գը-

նեսցուք կերակուր : Եւ ասէ Իսրայէլ . զինչ՞ չարիս հասուցիք 'ի վերայ իմ , զի՞ պատմեցիք առն թէ գուցէ ձեր եղբայր : Եւ նոքա ասեն Հարցանելով եհարց զմինչ այրն զսզգէ մերմէ . և թէ տակաւին կենդանի իցէ հայրն ձեր . և եթէ իցէ՞ ձեր եղբայր : Եւ ասէ Յուդա ցհայր իւր . արձակեա՛ ընդիս զպատանեակդ . և յարուցեալ գնասցուք , զի կեցցուք և մի՛ մեռցուք , և մեք և դու , և ստացուածք մեր : Ես առնում զդա յերաշխի . 'ի ձեռաց իմոց խնդրեսջիր զդա . եթէ ոչ ածիցս զդա և կացուցիցս առաջի քո , յանցաւոր եղէց զամենայն աւուրս :

Ասէ ցնոսա Իսրայէլ հայրն իւրեանց և եթէ այդպէս իցէ , արարէք զայդ . առէք 'ի պտղոյ երկրիս յամանս ձեր . և տարա՛յք առնն պատարագս . ռետին , մեղր , և խունկ և ստաշիս , և բեւեկն , և ընկոյզ : Եւ արծաթի կրկին առէք 'ի ձեռս ձեր՝ զարծաթն , որ դարձուցաւ յամանս ձեր տարա՛յք ընդ ձեզ . գուցէ ընդ խաբս ինչ իցէք : Եւ եղբայրդ ձեր առէք , և արիք իջէք առ այրն : Եւ Աստուած իմ տացէ ձեզ շնորհս առաջի առ-

նրն, և արձակեսցէ ընդ ձեզ զեղբայր ձեր զՄիւս և զԲենիամին. բայց ես որպէս անզուակեցայ: Եւ առեալ արանցն զպատարագսն, և արծաթ կրկին ի ձեռս իւրեանց և զԲենիամին, և յարուցեալ իջին Յեգիպտոս, և կացին յանդիման Յովսեփու: Իբրև ետես զնոսա Յովսէփ, և զԲենիամին եղբայր իւր, ասէ ցհազարապետն տան իւրոյ. տար զարսդ ի տուն և զնն զդինլիս, և պատրաստեա. զի ընդիս ուտելոց են արքդ այդոքիկ ի միջօրէի:

Եւ արար այրն որպէս և ասաց Յովսէփ. և տարաւ զարսն ի տուն Յովսեփայ: Եւ տեսեալ արացն եթէ տարան զնոսա ի տուն Յովսեփու, ասեն. վասն արծաթոյն որ դարձաւ յամանս մեր, զառաջինն մտանեմք անդր, առ ի խուզելոյ զմեզ և անկանելոյ ի վերայ մեր, և առնելոյ զմեզ ի ծառայս, և զէշս մեր: Մատուցեալ առ այրն վերակացու տանն Յովսեփայ. խօսեցան ընդ նմա առ դրանն: Եւ ասեն. տէր, իջաք զառաջինն գնել զկերակուր: Եւ եղև իբրև հասաք յիջևանս և բացաք զամանս մեր, արծաթ իւրաքանչիւր յամանի իւրում էր. արդ զար-

ծամն այսրէն կշռով դարձուցաք ։ և տա-
սիկ ի ձեռին մերում է ։ Եւ այլ արծաթ բե-
րաք ընդ մեզ գնել կերակուրս , և ոչ գիտեմք
ո՞վ եդ զարծաթն յամանս մեր ։ Եւ ասէ ։
խաղաղութիւն ընդ ձեզ ։ մի՛ երկնչիք ։ Եւ
Եհան առ նոսա զՇ մաւուն ։ Եւ տարաւ ՝ի
ներքս այրն զնոսա ՝ի տուն Յովսեփայ ։ և
բերին ջուր լուանալ զոտս նոցա ։ և ե-
տուն կերակուր գրաստուց նոցա ։

Եւ նոքա պատրաստեցին պատրագն
մինչև եկեալէր Յովսէփ ՝ի միջօրէին ։ քան
զի լուան թէ անդ ճաշակելոց է ։ Եւ եմուտ
Յովսէփ ՝ի տուն անդր ։ և մատուցին նմա
ընծայսն , զոր ունէին ՝ի ձեռս իւրեանց ՝ի
տան անդ ։ և երկիրպագին նմա ՝ի վերայ
երեսաց իւրեանց յերկիր ։ Եհարց զնոսա և
ասէ զիարդ՞ կայք ։ և եթէ ողջ իցէ հայրն
ձեր ծերունի ։ զորմէ ասացիք տակաւին
կենդան է ։ Եւ նոքա ասեն ։ ողջ է ծառայ
քո հայր մեր տակաւին կենդանի է ։ Եւ խո-
նարհեցին և երկիրպագին նմա ։ Ամբարձ
զաչս իւր , և եհաս զԲենիամին զեղբայր
իւր զՀամամայր ՝ և ասէ այդ է եղբայրն
ձեր կրտսեր զորմէ ասացիք ածել առիս ։

և ասէ. Աստուած ողորմեսցի քեզ որդեակ:

Եւ խառվեցաւ Յովսէփ. և գալարէին աղիք նորա ի վերայ եղբօրն իւրոյ: Եւ խնդրէր լալ. և մտեալ ի սենեակ անդր ելաց: Եւ լուացեալ զերեսս իւր եկ. պնդեաց զանձն, և ասէ. արկէք հաց: Նստաւ առաջի նորա անդրանիկն ըստ երիցութեան իւրում, և կրտսերն ըստ կրտսերութեան իւրում. և զարմացեալ էին արքն ըստ իւրաքանչիւր ընդ ընդ եղբօր իւրում: Եւ առին իւրեանց մասունս ի նմանէ. և մեծացաւ մասն Բենիամինի հնգապատիկ քան զնոցայն. արբին և արբեցան ընդ նմա:

Հնարք Յովսէփոյ ընդ եղբարս իւրոց

Եւ հրաման ետ Յովսէփ հազարապետին իւրում և ասէ. լցէք զամանս արանցն կերակրով, որչափ և կարիցեն բառնալ, և դիք զարծաթն իւրաքանչիւր ի բերան ամանոյ իւրոյ: Եւ զսկիհն իմ արծաթի դիջիք յամանի կրտսերոյն. և զգինս ցորենոյ նորա. և արար ըստ բանին Յովսեփայ որպէս և ասաց: Եւ իբրև

առաւօտ եղև արձակեցան արքն և էշք իւ-
րեանց : Եւ իբրև ելին ըստ քաղաքն , և չէին
մեկնեալ 'ի բաց , ասէ Յովսէփ ցհաղարապե-
տըն տալ պնդեաց զՀետ արանցն . և հասցես
և ասասցես նոցա . զի՞ է զի հատուցիք չար
փոխանակ բարւոյ : Ոչ այն էր որով ըմպէր
տէրն մեր . նովաւ ինքն հմայելով հմայէր .
և արդ չար դարձեցիք զոր արարիքդ : Եւ
իբրև եգիտ զնոսա , ասաց նոցա ըստ բանիցս
այսոցիկ : Եւ նոքա ասեն ցնա . ընդէ՞ր խօսի
տէր մեր այդպիսի բանս . քա՛ւ լիցի ծառայից
քոց առնել ըստ բանիդ այդմիկ : Զի եթէ
զարձաթն զոր գտաք յամանս մեր դարձուցաք
առ ձեզ յերկրէն Քանանացւոց , զի՞արդ
գողանայաք 'ի տանէ տեառն քոյ արծաթ
կամ ոսկի : Առ որում գտցի 'ի ծառայից քոց
սկիհն՝ մեռցի . և մեք եղիցուք տեառն
մերում ծառայք : Եւ ասէ . այդպէս եղիցի
որպէս ասացիքդ . առ որում գտցի սկիհն ե-
ղիցի իմ ծառայ . և դուք անպարտք լինիցիք :
Եւ փութացան իջուցին իւրաքանչիւր զբեռն
իւր 'ի գետնի . և բացին իւրաքանչիւր զամա-
նըս իւր : Եւ յուղեալ յերիցուէ մինչև եկն
կատարեաց 'ի կրտսերն . և եգիտ զսկիհն

յաման Բենիամինի : Յայնժամ պատառեցին զՀանդերձս իւրեանց և եդին իւրաքանչիւր զբեռն իւր 'ի վերայ իշոյ իւրոյ . և դարձան 'ի քաղաքն : Եւ մտին եղբարք Նորա առ Յովսէփ , և անկան առաջի Նորա 'ի վերայ երկրի : Ասէ Յուդա . զինչ տացուք պատասխանի տեառն , կամ զինչ խօսիցեմք և զոր իրաւունս ցուցանիցեմք : Եգիտ Աստուած զյանցանս ծառայից քոց . արդ առասիկ կամք ծառայք տեառն մերոյ , մեք և առ որում սկիհն գտաւ : Եւ նա ասէ . քա՛ւ լիցի ինձ առնել զբանդ զայդ . այրն , յորում գտաւ սկիհն՝ եղիցի իմ ծառայ . և դուք երթ՛ք ողջութեամբ առ Հայրն ձեր :

Յայնժամ մատեաւ առ նա Յուդա և ասէ աղաչեմ տէր , խօսեսցի ծառայ քո բան մի առաջի քոյ մի՛ բարկացիս ծառայի քում . զի դու ես յետ Փարաւոնի : Տէր դու հարցեր ցծառայս քոյ՝ և ասացեր . եթէ կայցէ՞ ձեր Հայր կամ եղբայր : Եւ մեք ասեմք տեառն մերում կայ մեր Հայր ծերացեալ . և մանուկ մի կրասեր որդի ծերութեան Նորա . և եղբայր Նորա մեռաւ , նա միայն մնաց մօր իւրոյ . Հայրն սիրէ զնա : Եւ ասացեր ցծա-

ռայս քո ։ իջուցէք զնա առիս և խնամարկեցիս զնա ։ Եւ ասացաք ցտէր իմ , ոչ կարէ մանուկն թողուլ զհայր իւր , ապա թէ թողուցու զհայր իւր , մեռանի ։ Եւ դու ասացեր ցծառայս քո , եթէ ոչ իջանիցէ եղբայր ձեր կրտսեր ընդ ձեզ , մի՛ յաւելջիք տեսանել զերեսս իմ ։ Եւ եղև իբրև ելաք մեք առ ծառայ քո հայր մեր ։ պատմեցաք զբանս տեառն մերոյ ։ Եւ ասէ հայր մեր ։ երթեալ գնեցէք սակաւ մի կերակուրս մեզ ։ Եւ մեք ասացաք ։ թէ ոչ կարեմք իջանել անդր՝ եթէ ոչ եղբայր մեր կրտսեր իջանիցէ ընդ մեզ ։ զի ոչ կարեմք տեսանել զերեսս առն ։ եթէ եղբայր մեր կրտսեր ընդ մեզ ոչ իցէ ։

Եւ ասէ ցմեզ ծառայ քո հայր մեր ։ դուք գիտէք, զի երկուս ծնաւ ինձ իսկ կին իմ ։ Եւ եթէ զսա ևս առնուցուք յերեսաց իմոց, պատահիցի սմա հիւանդութիւն ի ճանապարհի , և իջուցանիցէք զծերութիւն իմ տրտմութեամբ ի դժոխս ։

Եւ արդ՝ եթէ երթայցեմք առ ծառայ քո հայր մեր , և պատանեակս չիցէ ընդ մեզ ։ և նորա ոգին կախեալ կայ զդորա ոգւոյ ։ Լինի իբրև ոչ տեսանիցէ ընդ մեզ զմանու-

կըդ , վախճանիցի . և իբուցանիցեն ծառայք քո զծերութիւն ծառայի քո հօր մերոյ չարչարանօք 'ի դժոխս : Զի ծառայի քոյ առեալ է յերաշխի զմանուկդ 'ի հօրէ իւրմէ , և ասացեալ է եթէ ոչ ածիցս զդա առ քեզ , և կացուցիցս առաջի քոյ , յանցաւոր եղէց զամենայն աւուրս իմ : Եւ արդ կացիցս ես ծառայ քո փոխանակ մանկանդ ստրուկ տեառն իմոյ և պատանեակդ ելցէ ընդ եղբարս իւր : Քանզի զիա՞րդ ելանիցեմք առ հայրն իմ , եթէ պատանեակդ չիցէ ընդ մեզ . զի մի՝ տեսից զչարիսն , որք գտանիցեն զհայր իմ :

Յովսէփ յայտնէ զինքն եղբարց իւրոց :

Եւ ոչ կարաց Յովսէփ ժոյժ ունել առաջի ամենեցուն՝ որք շուրջ զնովաւն կային . այլ ասէ , հանէք զամենեսին արտաքս յինէն , և չկայր ևս ոք անդ առնմա՝ յորժամ ետ ծանօթս եղբարցն իւրոց : Եւ ձայն բարձեալ լացին մինչ լուան Եգիպտացիքն . և ազդ եղև 'ի տուն Փարաւոնի : Ասէ Յովսէփ

ցեղբարքն իւր, ես եմ Յովսէփ. արդարև
տակաւին կենդանի իցէ՞ Հայր իմ. և ոչ
կարէին եղբարքն տալ նմա պատասխանի.
զի խռովեցան յերեսաց նորա: Ասէ Յով-
սէփ ցեղբարքն. մօտ եկայք առիս. և չո-
գան մօտ, և ասէ ես եմ Յովսէփ եղբայր
ձեր. զոր դուք վաճառեցիք յԵգիպտոս:
Բայց մի՛ ինչ արտմիք. և մի՛ խիստ թուռեսցէ
ձեզ. զի վաճառեցիք զիս այսր. քանզի ՚ի
փրկութիւն առաքեաց զիս Աստուած առաջի
ձեր: Զի այս երկրորդ ամէ սովու ՚ի վերայ
երկրի, և այլ հինգ ևս ամ, յորս ոչ լինիցի
վար և ոչ հունձ: Եւ զիս առաքեաց Աստու-
ած առաջի ձեր առ ՚ի թողլոյ ձեզ զաւակ յեր-
րի և կերակրել զձեր մնացորդս մեծամեծս:
Եւարդ՝ ոչ ելթէ դուք առաքեցիք զիս այսր,
այլ Աստուած. և արար զիս Հայր Փարաւոնի
և տէր ամենայն տան նորա. և իշխան ամե-
նայն երկրիս Եգիպտացւոց: Արդ փութա-
ցեալ ելէք առ Հայրն իմ, և ասացէք ցնա.
այսպէս ասէ որդի քո Յովսէփ. արար զիս
Աստուած տէր ամենայն երկրիս Եգիպտա-
ցւոց. արդ եկ էջ առիս և մի՛ հեղգար: Եւ
բնակեսցիս յերկրին Գեսեմ, Յարաբօդ. և ե-

զիցիս մօտ առ իս ։ զու , և որդիք քո , և որ-
դիք որդւոց քոց , և ոչխար քո ։ և արջառ ,
և որ ինչ քո իցէ : Եւ կերակրեցից զքեզ անդ։
զի այլ ևս հինգ ամ կայ սովուն ։ զի մի՛ սատա-
կեսցիս դու և որդիք քո։ և ամենայն ստաց-
ուածք քո : Ահաւասիկ աչք ձեր տեսանեն ։
և աչք Բենիամենի եղբօր իմոյ ։ զի բերան
իմ խօսի ընդ ձեզ : Արդ պատմեցէք հօրիմում
զամենայն զփառս իմ ։ որք են յԵգիպտոս ։ և
փութացեալ իջուցէք զհայրն իմ այսր : Եւ
անկեալ՝ի վերայ պարանոցի Բենիամինի եղ-
բօր իւրում ելոյց , և Բենիամին ելոյց՝ի վե-
րայ պարանոցի նորա : Եւ համբուրեաց զա-
մենայն եղբարսն իւր ։ և ելոյց՝ի վերայ նոցա
յետ այնորիկ՝ խօսեցան եղբարքն նորա ընդ
նմա:

Եւ հնչեաց համբաւն՝ի տունն Փարաւո-
նի ։ և ասէն եկին եղբարքն Յովսէփայ ։ ու-
րախ եղև Փարաւոն և ծառայք նորա : Եւ
ասէ Փարաւոն ցՅովսէփ ։ ասա՛ ցեղբարս քո։
այսպէս արարէք ։ լցէք զբեռինս ձեր ։ և
երթայք յերկիրն Քանանացւոց : Եւ առէք
զհայր ձեր և զտոհմս ձեր , և եկեսջիք
առ իս ։ և տայ ձեզ յամենայն բարութեանց

Եգիպտացւոց ։ և կերիջիք զուղեղ երկրիս ։ Եւ տուր զայս հրաման ։ տացե սառնուլ յերկրէս Եգիպտացւոց սայլս մանկանց ձերոց ։ և առեալ զհայրն ձեր ածջիք ։ Եւ մի ագահիցեն աչք ձեր ի կահ ձեր ։ զի բարութիւն ամենայն Եգիպտացւոցս ձեզ լինիցի ։ Եւ արարին այնպէս որդիքն Իսրայելի ։ և ետ նոցա Յովսէփ սայլս , ըստ բանիցն Փարաւոնի արքայի ։ և ետ նոցա պաշար ի ճանապարհի ։ Եւ ամենեցուն ետ կրկին պատմուճան ։ և Բենիամինի ետ երեքհարիւր դահեկան և հինգ պատմուճան փոխանակաւ ։ Եւ հօրն իւրում ետ տանիլ նոյնպէս ։ և տասըն իշոյ բեռինս յամենայն բարութեանց Եգիպտացւոց և տասն ջորի նպարակաւոր , և կերակուր հօրն իւրում ի ճանապարհի ։ Եւ արձակեաց զեղբարս իւր ՝ և գնացին ։ և ասէ ցնոսա ։ մի՝ զայրանայցէք ինչ ի ճանապարհի ։ Եւ եկին յԵգիպտոսէ և չոքան յերկիրն Քանանացւոց առ Յակոբ հայրն իւրեանց ։

Եւ պատմեցին նմա , և ասեն ։ որդին քո Յովսէփ կենդանի է ։ և նա է իշխան երկրին Եգիպտացւոց , և զարմացաւ ի միտս իւր Յակոբ , զի ոչ հաւատայր նոցա ։ Եւ խո-

սեցան ընդ նմա զամենայն ինչ զոր ասաց Յովսէփ, իբրև ետես զսայլսն զոր առաքեաց Յովսէփ առնուլ զնա, արծարծեցաւ ոգին Յակոբայ հօր նոցա : Եւ ասէ Իսրայէլ. մեծ է ինձ եթէ արդարև տակաւին կենդանի իցէ որդի իմ Յովսէփ. երթայց և տեսից զնա, մինչչև մեռեալ իցեմ : Եւ չուեաց Իսրայէլ ինքն և ամենայն ինչ որ իւր էր. և եկն ի Ջրհորն երդման. և մատոյց պատարագ Աստուծոյ : Եւ յարեաւ Յակոբ ի Ջրհորոյ անտի երդման. և առին որդիքն Իսրայէլի զՅակոբ զհայրն իւրեանց. և զկազմած և զկանայս իւրեանց ի սայլսն՝ զոր առաքեաց Յովսէփ առնուլ զնա, և առնուլ զինչս իւրեանց : Եւ զամենայն ստացուածս զոր ստացան յերկրին Քանանացւոց. մտին յԵգիպտոս Յակոբ և ամենայն զաւակ նորա ընդ նմա. որդիք նորա, և որդիք որդւոց նորա ընդ նմա. դստերք նորա. և դստերք դստերաց նորա. և ամենայն զաւակ նոցա և. զՅուդայ յառաջագոյն առաքեաց առ Յովսէփ. գալ նմա ընդ յառաջ դքաջաց քաղաքաւն, յերկիրն Ռամեսայ. և ինքն եկն յերկիրն Գեսեմ: Եւ կազմեաց Յովսէփ զկառս իւր. և ելն ընդ ա-

ռաջ Իսրայէլի հօր իւրոյ գքաջաց քաղաքաւն և իբրև յանդիմման եղև՝ անկաւ ի վերայ պարանոցի նորա, և եալաց ի լալիւն մեծ : Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ . մեռայց այսուհետև, որովհետև տեսի զերեսս քո . զի տակաւին կենդանի ես :

Յովսէփ էոյժոյանէ ղՇայր և ղԵղբարս իւր առաջէ Փարաւոնէ :

Եւ եկեալ Յովսէփ պատմեաց Փարաւոնի և ասէ . Հայր իմ և եղբարք . և խաշինք և արջառնոցա . և ամենայն ինչ նոցա եկին յերկրէն Քանանացւոց . և ահա են ի Գեսեմ : Եւ եղբարց իւրոց անտի՝ էառ ընդ իւր հինգ այր . և կացոյց առաջի Փարաւոնի : Եւ ասէ Փարաւոն ցեղբարսն Յովսեփայ . զինչ՞ գործ է ձեր . և նոքա ասեն ցՓարաւոն , Հովիւք խաշանց են ծառայք քո . մեք և հայր մեր : Եւ ասեն ցՓարաւոն . պանդխտանալ եկաք յերկրիս յայսմիկ . զի ոչ գոյր ճարակ խաշանց ծառայից քոց . քանզի սաստկացաւ սովն յերկրին Քանանաց-

ւոց ։ և արդ բնակեսցուք ծառայք քո յերկրին Գեսեմ ։

Եւ խօսեցաւ Փարաւոն ընդ Յովսեփայ և ասէ ։ Հայր քո և եղբարք քո եկին առ քեզ ։ Ահա երկիրս Եգիպտացւոց առաջի քո է ։ և ի բարւոք երկրի բնակեցո զհայր քո և զեղբարս քո ։ և բնակեսցին յերկրին Գեսեմ ։ ապա թէ գիտես թէ իցեն ի նոսա արք զօրաւորք՝ կացո զնոսա իշխանս ի վերայ իմոց խաշանց ։ Եւ էած Յովսէփ զՅակոբ զհայր իւր ։ և կացոյց առաջի Փարաւոնի ։ և օրհնեաց Յակոբ զՓարաւոն ։ Եւ բնակեցոյց Յովսէփ զհայրն իւր և զեղբարս իւր ։ և ետ նոցա բնակութիւն յերկրին Եգիպտացւոց ։ ի բարւոք երկրի ։ յերկրին Ռամեսայ որպէս հրամայեաց Փարաւոն ։ Եւ տայր Յովսէփ ուռճիկս հօրն և եղբարց իւրոց ։ ցորեան ըստ բերան ։ Եւ բնակեցան յերկրին Գեսեմ ։ և ժառանգեցան ի նմա ։ և աճեցին և բազմացան ։

Մահ Յակոբայ ։

Եւ եղեն աւուրք ամաց Յակոբայ հարիւր քառասուն և եօթն ամ ։ և կոչեաց նա զոր-

գի իւր զՅովսէփ և ասէ ցնա . եթէ գտի շնորհս առաջի քո , դիր զձեռն քո ընդ երանոյք իմովք . և արասցես ի վերայ իմ ողորմութիւն և ճշմարտութիւն չթաղել զիս յԵգիպտոս : Եւ խօսեցաւ ընդ նոսա հայր իւրեանց և օրհնեաց զնոսա իւրաքանչիւր ըստ օրհնութեան իւրում : Եւ պատուիրեաց նոցա և ասէ ցնոսա . ես յաւելումս առ ժողովուրդ իմ . թաղեցէք զիս ընդ հարս իմ յայրի անդ . որ է յագարակին Եփրոնի Քետացւոյ . յայրին որ յանդիման է Մամբրէի . յերկրին Քանանացւոց . զոր ստացաւ Աբրահամ յԵփրոնէ Քետացւոյ ի ստացուածս շիրմի : Անդ թաղեցին զԱբրահամ , և զՍառա զկին նորա , անդ թաղեցին զԻսահակ և զՌեբեկա զկին նորա . անդ թաղեցին զԼիա . ի ստացուածս ագարակին և այրին որ է ի նմա : Եւ դադարեաց Յակոբ ի պատուիրելոյ որդւոցն իւրոց . և առեալ զոտս իւր անդրէն ի մահիճս իւր՝ պակասեցաւ , և յաւելաւ ի ժողովուրդս իւր :

Եւ անկեալ Յովսէփ ի վերայ երեսաց հօր իւրոյ , երկաց զնա և համբուրեաց զնա : Եւ հրաման ետ Յովսէփ ծառայից իւրոց գի-

ազարդաց պատել զՀայրն իւր՝ զԻսրայէլ։ Եւ լցան աւուրք քառասուն, զի այնպէս թուին աւուրք թաղելոց. և սուգ էառ վասն նորա Եգիպտոս աւուրս եօթանասուն։ Եւ իբրև անցին աւուրք սգոյն. խօսեցաւ Յովսէփ ընդ իշխանս Փարաւոնի, և ասէ. եթէ գտի շնորհս առաջի ձեր. խօսեցարուք ընդ Փարաւոնի և ասացէք։ Հայր իմ երդմնեցոյց զիս, և ասէ ահաւասիկ ես մեռանիմ. ՝ի շիրմի անդ զոր փորեցի ես ինձ յերկրին Քանանացւոց. անդ թաղեսցես զիս. արդ ելեալ թաղեցից զՀայրն իմ և եկից։ Եւ ասէ Փարաւոն. Ել թաղեա զՀայր քո որպէս երդմնեցոց զքեզ։ Եւ ել Յովսէփ թաղել զՀայր իւր. ելին ընդ նմա և ամենայն ծառայք Փարաւոնի. և ծերք տան նորա, և ամենայն ծերք երկրին Եգիպտացւոց։ Եւ հասեալ տունն Յովսեփայ. և եղբարք նորա. և ամենայն հայրենի բնակութիւն նորա. և զաղգատոհմն. զոչխար և զարջառ թողին յերկրին Գեսեմ։ Ելին ընդ նմա և կառք և հեծեալք. և էին բանակ մեծ յոյժ։ Եւ հասին ՝ի կալն Ատադայ, որ է յայնկոյս Յորդանանու. և կոծեցին զնա անդ

կոծ մեծ՝ և սաստիկ յոյժ ։ և արար Հօրն իւր սուգ զեօթն օր ։ Տեսին բնակիչք երկրին Քանանացւոց զսուգն 'ի կալն Ատադայ և ասէն ։ սուգ մեծ է Եգիպտացւոց , վասն այնորիկ կոչեաց զանուն նորա սուգ Եգիպտոսի ։ որ է յայնկոյս Յորդանանու ։ Եւ արարին այնպէս որդիքն Իսրայէլի որպէս պատուիրեաց նոցա ։ Բարձին զնա ։ և թաղեցին անդ յայրին կրկնում զոր ստացաւ Աբրահամ 'ի ստացուած շիրմի յԵփրոնէ Քետացւոյ ։ յանդիման Մամբրէի ։

Մահ Յովսէփայ ։

Եւ դարձաւ Յովսէփ յԵգիպտոս ։ ինքն և եղբարք իւր և ամենեքին՝ որք ելեալ էին ընդ նմա թաղել զՀայրն նորա ։ Եւ իբրև տեսին եղբարքն Յովսեփայ ։ երեթ մեռաւ Հայրն նոցա ։ ասեն , գուցէ ոխս ունիցի Յովսէփ ընդ մեզ և հատուցանիցէ հատուցումն ամենայն չարեացն՝ զոր անցուցաք ընդ նմա ։ Եկին առ Յովսէփ և ասեն ։ Հայր քո երդմնեցոյց զմեզ մինչչև վախճանեալ էր նո-

բա : Ասէ՝ այսպէս ասասջիք ցՅովսէփ . Թողցես դ-ողա զ յանցանս , և զմեղս իւրեանց . զի չարիս անցուցին ընդ քեզ . և արդ ներեա՛ յանցանս ծառայից Աստուծոյ Հօր քոյ . և ելաց Յովսէփ վասն բանիցն զոր խօսեցան ընդ նմա : Եւ եկեալ առ նա եղբարքն իւր՝ անկան առաջի նորա , և ասեն . ահաւասիկ մեք ծառայք քո եմք : Եւ ասէ ցնոսա Յովսէփ՝ մի՛ երկնչիք քանզի և ես Աստուծոյ եմ : Դուք խորհեցաք զինէն զչարութիւն . և Աստուած խորհեցաւ վասն իմ՝ ի բարութիւն . որպէս և եղև իսկ յաւուրս յայսմիկ . զի կերակրեցի ժողովուրդ բազում : Եւ ասէ ցնոսա մի՛ ինչ երկնչիք , ես կերակրեցից զձեզ և զտունս ձեր և մխիթարեաց զնոսա . և սփոփեաց զսիրտ նոցա :

Եւ բնակեցաւ Յովսէփ յԵգիպտոս՝ ինքն և եղբարք իւր . և ամենայն տուն Հօր իւրոյ . և եկաց Յովսէփ տան Հարիւր և տասն : Եւ եռտես Յովսէփ զորդիս Եփրեմի մինչև յերրորդ ազգ . և որդիք Մաքիրայ որդւոյ Մանասէի ծնան յերանս Յովսեփայ : Եւ խօսեցաւ Յովսէփ ընդ եղբարս իւր և ասէ . ես աւասիկ մեռանիմ . այցելութեամբ այց արասցէ

ձեզ Աստուած , և հանցէ զձեզ յերկրէս յայս-
մանէ ։ յերկիր՝ զոր երդուաւ Աստուած տալ
հարցն մերոց Աբրահամու Իսահակայ և
Յակոբայ : Երդմնեցոյց Յովսէփ զորդիսն
Իսրայէլի և ասէ ։ այցելութեան յորում առ-
նիցէ ձեզ Աստուած , հանջիք և զիմ ոսկերս
աստի ընդ ձեզ : Եւ վախճանեցաւ Յովսէփ
ամաց հարիւր և տասնից ։ և թաղեցին զնա
ի տապանի յԵգիպտոս :

Ծանուցանդ Սովսէսի :

Եւ որդիքն Իսրայէլի աճեցան և բազմա-
նային և զօրանային յոյժ ։ զի բազմացուցա-
նէր զնոսա երկիրն : Եկաց այլ թագաւոր
որ ոչ ճանաչէր զՅովսէփ : Եւ ասէ ցազգն
իւր ։ ահա ազգ որդւոցն Իսրայէլի մեծ է
զօրութեամբ , և զօրանայ քան զմեզ : Արդ՝
եկայք հնարեսցո՛ւք ինչ նոցա գուցէ բազ
մանայցեն ։ և յորժամ դիպեսցի մեզ պատե-
րազմ , յաւելցին և նոքա ի թշնամին ։ և
մարտուցեալ ընդ մեզ՝ ելանիցեն յերկրէ աս-
տի : Եւ կացոյց ի վերայ նոցա գործավարս ,

զի չարչարեսցեն զնոսա ՚ի գործ ։ և շինեցին քաղաքս ամուրս՝ Փարաւոնի զՓիթոն և ըզ-Ռամսէ ։ Եւ որչափ ճնշէին զնոսա , այնչափ առաւել բազմանային և զօրանային յոյժ ։ և գարշեցուցանէին Եգիպտացիքն զորդիսն Իսրայէլի ։ Եւ կեղեքէին զկեանս նոցա ՚ի գործ իսիատ կաւոյն և աղիւսարկի՝ և յամենայն գործ դաշտաց ։ ըստ ամենայն գործոց իւրեանց ։ որով ծառայեցուցանէին զնոսա բռնութեամբ։ Եւ հրաման ետ Փարաւոն ամենայն ժողովրդեանն իւրում , և ասէ ։ զամենայն արու որ ծնանի Եբրայեցւոց՝ ՚ի գետ ընկեսջիք ։ և զամենայն էգ ապրեցուսջիք ։ Եւ էր անդ ոմն յազգէ Ղևեայ ։ որ էառ իւր կին ՚ի դըստերաց անտի Ղևեայ ։

Եւ յղացաւ ծնաւ արու ՝ և տեսանէին ըզնա կայտառ ։ և թագուցին զնա ամիսս երիս ։ Եւ իբրև ոչ ևս կարէին թագուցանել , էառ մայր նորա տապանակ պրտուեայ ։ և ծեփեաց զնա կպրաձիթով ։ և եդ ՚ի նմա զմանուկն ։ և ընկէց զայն ՚ի խաղ մի առ ափն գետոյն ։ Եւ դիցէր քոյր նորա ՚ի հեռաստանէ տեսանել թէ զինչ անցք անցանիցեն ընդ նա ։ Եւ իջեալ դուստր Փարաւոնի լուա-

նալ 'ի գետն ։ և նաժիշտք նորա շրջէին առ գետովն ։ և տեսեալ զտապանակն 'ի խաղի անդ , առաքեաց զնաժիշտն առնուլ զնա ։ Եբաց և ետես զմանուկն ։ և լայր մանուկն 'ի տապանակի անդ ։ խանդաղատեցաւ զնովաւ դուստրն Փարաւոնի , և ասէ ։ 'ի մանկանց Եբրայեցւոց է ։ Եւ ասէ քոյրն նորա ցդուստրն Փարաւոնի ։ կամիս զի կոչեցից քեզ կին մի դայեակ 'ի յԵբրայեցւոց անտի ։ և սնուցանիցէ քեզ զմանուկդ ։ Ասէ դուստրն Փարաւոնի՝ Երթ ։ գնաց աղջիկն և կոչեաց զմայր մանկանն ։ Եւ ասէ ցնա դուստրն Փարաւոնի ։ առ զմանուկդ ։ և սնո՛ ինձ զդա ։ և ես տաց քեզ զվարձս քո ։ և էառ կինն զմանուկն՝ և սնոյց զնա ։ Եւ իբրև հասուցեաց մանուկն , էած զնա առ դուստրն Փարաւոնի և եղև նմա յորդէգիր ։ և անուանեաց զանուն նորա Մովսէս ։

Ամուսնութիւն Մովսէսի ։

Եւ եղև յետ աւուրց բազմաց իբրև եղև մեծ Մովսէս ։ և եկեալ յերկիրն Մադիամու նստաւ առ ջրհորի միում ։ Եւ քրմին

Մադիանացւոց էին դստերք եօթն, որ արա-
ծէին զխաշինս հօրն իւրեանց, և եկեալ էին
հանել ջուր, մինչև լցին զաւազանսն արբու-
ցանել խաշանց հօրն իւրեանց: Եւ եկեալ
այլ հովիւք՝ մերժեցին զնոսա 'ի բաց. յարու-
ցեալ Մովսէս թափեաց զնոսա. և եհան նո-
ցա ջուր, և արբոյց խաշանց նոցա: Եւ եկին
առ Հրագուէլ հայրն իւրեանց. և նա ասէ
ցնոսա. զի՞ է. զի յարեալ եկիք այսօր: Եւ
նոքա ասեն, այր մի Եգիպտացի փրկեաց
զմեզ 'ի հովուաց անտի. և եհան ջուր և արբ-
ոյց խաշանց մերոց: Եւ նա ասէ ցդստերս
իւր. և ո՞ւր է. ընդէ՞ր թողիք զայրն. արդ՝
կոչեցէք զնա՝ զի կերիցէ հաց: Եւ բնակ-
եցաւ Մովսէս առ առն, և ետ զՍեփովրա
զդուստր իւր Մովսի կնութեան: Եւ յղացաւ
կինն՝ և ծնաւ որդի. և անուանեաց զանուն
նորա Գերսամ. ասէ՝ զի պանդուխտ եմ ես
յօտար երկրի: Եւ եղև յետ աւուրց բազմաց
մեռաւ թագաւորն Եգիպտացւոց, և տառա-
պէին որդիքն Իսրայէլի 'ի գործոյ անտի և
աղաղակէին 'ի վեր. և եկ աղաղակ նոցա ա-
ռաջի Աստուծոյ: Եւ լուաւ Աստուած հե-
ծութեան նոցա. և յիշեաց Աստուած զուխտ

իւր ընդ Աբրահամու և Սահակայ և Յակոբայ : Եւ հայեցաւ Աստուած յորդիսն Իսրայէլի , և ծանուցաւ նոցա :

Մորենին վառէալ :

Եւ Մովսէս՝ արածէր զխաշինս Յոթրոայ աներոյ իւրոյ քրմին Մադիանացւոց . և ածէ զխաշինս յանապատ . և եկն 'ի լեառն Աստուծոյ 'ի Քորէբ : Եւ երևեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ 'ի միջոյ մորենւոյն . վառեալ էր հրով . և ոչ այրէր մորենին : Եւ ասէ Մովսէս , անցեալ տեսից զտեսիլն զայն մեծ . զի՞ է՝ զի ոչ այրի մորենին : Իբրև եւ տես Տէր երթէ մերձենոյ տեսանել . կոչեաց զնա Տէր 'ի միջոյ մորենւոյն և ասէ . Մովսէս Մովսէս . և նա ասէ , զի՞ է : Եւ ասէ Տէր ցՄովսէս . տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ յԵգիպտոս . և լուայ աղաղակի նոցա 'ի գործաւորացն իւրեանց . զի գիտեմ զվիշտս նոցա . և իջի փրկել զնոսա : Եւ արդ եկ առաքեցից զքեզ առ Փարաւն արքայ Եգիպտացւոց , և հանցես զժողո-

ժուրդ իմ զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց ՝ Եւ ասէ Մովսէս . ՝Ի վեմ եւ՝ զի երթայցեմ առ Փարաւն արքայն Եգիպտացւոց և հանիցեմ զորդիսն Իսրայէլի յԵգիպտացւոց : Եւ ասէ՝ ես եղէց ընդ քեզ . և այս եղիցի քեզ նշան թէ ես առաքեցի զքեզ հանել զժողովուրդ իմ յԵգիպտոսէ , և պաշտեսջիք զԱստուած ի լերինս յայսմիկ : Արդ երթեալ ժողովեսցես զծերակոյտ որդւոցն Իսրայէլի ՝ և ասասցես ցնոսա . Տէր Աստուած հարցն ձերոց երևեցաւ ինձ՝ Աստուած Աբրահամու , և Աստուած Իսահակայ , և Աստուած Յակոբայ . և ասէ այցելութեամբ այց արարից ձեզ . և որ ինչ անցք անցին ընդ ձեզ յԵգիպտոս : Եւ հանից զձեզ յերկրէ չարչարանաց յԵգիպտացւոցն , յերկիրն Քանանացւոց , և Քետացւոց , և Ամորհացւոց , և Փերեզացւոց , և Գերգեսացւոց , և Խևացւոց , Յեբուսացւոց . յերկիր որ բղխէ ըստ կաթն և մեղր :

Եւ լուիցեն նոքա ձայնի քում . և մտցես դու , և ծերակոյտ որդւոցն Իսրայէլի առ Փարաւն արքայ Եգիպտացւոց , և ասասցես ցնա . Տէր Աստուած Եբրայեցւոց կոչէ զմեզ

առ ինքն։ որդ երթիցուք մեք երից աւուրց ճանապարհ յանապատ։ զի զոհեսցուք Տեառն Աստուծոյ մերոյ։ Եւ ասէ Մովսէս ցՏէր։ աղաչեմ զքեզ Տէր։ չեմքաւական որպէս թէ յերեկէ և յեռանդէ և ոչ յորմէ հետէ սկըսար խօսիլ ընդ ծառայի քում։ զի նրբաձայն և ծանրալեզու եմ ես։ Եւ ասէ Տէր։ ոչ աւանիկ կայ Ահարոն եղբայր քո Ղեւատցի։ գիտեմ, զի խօսելով խօսեսցի նա ընդ քեզ։ և ահա նա ելցէ ընդ առաջ քո, և ի տեսանելն զքեզ բերկրեսցի ի միտս իւր։ Եւ խօսեսցիս ընդ նմա, և տացես զպատգամս իմ ի բերան նորա։ և իսելամուտ արարից զձեզ զինչ և առնիցէք։ Եւ նա խօսեսցի առ ի քէն ընդ ժողովրդեանն։ և նա եղիցի քեզ բերան։ և դու եղիցիս նմա յԱստուածակոյս կողմանէ։

Եւ առեալ Մովսիսի զկին իւր և զմանկունս իւր, և երհան զնոսա ի գրաստս, և դարձաւ յԵգիպտոս։ Եւ ասէ Տէր ցԱհարոն։ երթ ընդ առաջ Մովսիսի յանապատն։ և գնաց և պատահեաց նմա ի լերինն Աստուծոյ և համբուրեաց զնա։ Եւ պատմեաց Մովսէս Ահարոնի զամենայն պատգամսն զոր առաքեաց նմա Տէր։ Գնացին Մովսէս և

Ահարոն և ժողովեցին զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի : Եւ խօսեցաւ Ահարոն զամենայն պատգամսն՝ զոր խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի : Եւ հաւատաց ժողովուրդն և ուրախ եղև . զի արար Աստուած այց որդւոցն Իսրայէլի . և զի հայեցաւ ի նեղութիւն նոցա . և խոնարհեցաւ ժողովուրդն և երկիր եպագ :

Ելանէլ Իսրայէլի յԵգիպտոս :

Եւ ապա մտին Մովսէս և Ահարոն առաջի Փարաւոնի , և ասեն ցնա . այսպէս ասէ Աստուած Իսրայէլի . արձակեա զժողովուրդիմ , զի արասցեն ինձ տօն յանապատի : Եւ ասէ Փարաւոն . ո՞վ է նա , որում լուայց արձակել զորդիսն Իսրայիլի : Եւ ասեն ցնա . Աստուածն Եբրայեցւոց կոչեաց զմեզ առ ինքն , արդ երթիցուք երից աւուրց ճանապարհ յանապատն , զի զոհեսցուք Տեառն Աստուծոյ մերում . գուցէ պատահիցէ մեզ մահ կամ սպանումն : Եւ ասէ ցնոսա արքայն Եգիպտացւոց ընդէ՞ր դու Մովսէս և Ահարոն խափանէք զժողովուրդն ի գործոյ իւ-

բեանց ։ երթայք իւրաքանչիւր ի գործ իւր ։ Եւ հրամայեաց Փարաւոն յաւուր յայնմիկ գործավարաց ժողովրդեանն , և գրագրաց նոցա ասէ՝ մի՛ և ևս յաւելուցուք տալ յարդ ժողովրդեանն յաղիւսարկութիւն , որպէս յերէկն և յեռանդն ։ ինքեանք երթիցեն և և ժողովեսցեն իւրեանց յարդ ։ Եւ գրագիրք նորա խօսէին ընդ ժողովրդեանն և ասէին ։ այսպէս ասէ Փարաւոն , ոչ և ևս տաց ձեզ յարդ ։ դուք ձեզէն երթայք ժողովեցէք յարդ՝ ուստի և գտանիցէք ։ զի ոչ թողասցի ձեզ ի սակէն ձերմէ և ոչ ինչ ։

Եւ ափռեցաւ ժողովուրդն ընդ ամենայն երկիրն Եգիպտացւոց ժողովել եղէգն առ ի յարդ ։ Եւ գործավարքն ստիպէին գնոսա և ասէին ։ բովանդակեցէք զգործն ձեր ըստ հանապազորդ սակին , որպէս մինչ յարդն տային ձեզ ։ Եւ տանջեցան գրագիրք ազգի որդւոցն Իսրայէլի , որք կային ի վերայ նոցա ի վերակացուացն Փարաւոնի ։ զի ասէին եթէ ընդէ՞ր ոչ բովանդակեցիք զսակ աղիւսացն ձերոց , որպէս յերեկն և յեռանդն՝ և զայսր աւուրդ ։ Եւ ասէ Տէր ցՄովսէս լուայ հեծութեան որդւոցդ Իսրայէլի ։ զոր Ե-

գիպտացիքն ծառայեցուցանեն ։ և յիշեցի զուխտն ձեր ։ Եւ տարայց զձեզ յերկիրն յոր ձգեցի զձեռն իմ տալ զնա Աբրահամու , Իսահակայ և Յակոբայ ։ և տայց զնա ձեզ վի ճակաւ ։ զի ես եմ Տէր ։ Եւ ծանիցեն Եգիպտացիքն թէ ես եմ Տէր ։ և ձգեցից զձեռն իմ յԵգիպտոս , և հանիցից զորդիսն Իսրայէլի 'ի միջոյ նոցա ։ Եւ ասէ Տէր ցՄովսէս ։ մնաս առ փարաւոն և ասասցես ցնա ։ այսպէս ասէ Տէր ։ արձակեա զժողովուրդ իմ , զի պաշտեսցեն զիս ։ Այլ թէ ոչ կամիս դու արձակել ։ ահա ես հարիցս զամենայն սահմանս քո զորահիւ ։ Ահա ձեռն Տեառն եղիցի 'ի խաշինս քո որք դաշտի են , և 'ի ձիս և յէշ , և յուղտս , և յարջառս , և յոչխար՝ մահու մեծաւ յոյժ ։ և զհասարակ գիշերաւ ես մտից 'ի մէջ Եգիպտոսի և սատակեցից զամենայն անդրանիկ յերկրէդ Եգիպտացւոց , յանդրանիկ անտի փարաւոնի , որ նստի յաթոռ նորա , մինչև ցանդրանիկ աղախնոյն որ կայցէ առ երկան ։ և մինչև ցանդրանիկ ամենայն անասնոց ։ Եւ եղիցի աղաղակ մեծ յամենայն երկրիդ Եգիպտացւոց ։ որպիսի ոչ եղև , և ոչ ևս յաւելցի լինել նոյնպէս ։ Եւ

'ի մէջ ամենայն որդւոցն Իսրայէլի ոչ կռնչեսցէ և ոչ շուն մի լեզուաւ իւրով, և ոչ 'ի մարդոյ մինչև անասուն. զի գիտասցես որ-չափ ինչ սքանչելիս արասցէ Տէր 'ի մէջ Եգիպտացւոցդ. և 'ի մէջ Իսրայէլի:

Եւ եղև 'ի հասարակ գիշերի. և Տէր եհար զամենայն անդրանիկս Եգիպտացւոց, յանդրանիկէ անտի Փարաւոնի որ նստէր յաթոռս նորա, մինչև յանդրանիկս գերւոյն որ կայր 'ի վիրապի. և զամենայն անդրանիկս անասնոց: Եւ յարեաւ Փարաւոն գիշերայն, ինքն և ամենայն ծառայք իւր և ամենայն Եգիպտացիքն. և եղև աղաղակ մեծ յամենայն երկիրն Եգիպտացւոց. զի ոչ գոյր տուն յորում ոչ գոյր մեռեալ 'ի նմա: Եւ կոչեաց Փարաւոն զՄովսէս և զԱհարոն գիշերայն, և ասէ ցնոսա. արիք և ելէք 'ի ժողովրդենէ իմմէ. և գուք և որդիքն Իսրայէլի, երթայք պաշտեցէք զՏէր Աստուած ձեր. որպէս ասացէք: Եւ զարջառս և ոչխար ձեր առեալ գնացէք. որպէս և ասացիքն: Եւ չուեցին որդիքն Իսրայէլի 'ի Հռամեսայ 'ի Սոքովթ. վեց հարիւր հազար այր հետեւակ, թող զայլ աղս: Եւ խառնիճաղանձ բազում ել ընդ նս-

ատ. և արքատ և անասուն բազում յոյժ։ Եւ բնակութիւն որդւոցն Իսրայէլի յոր բնակեցին յերկրին Եգիպտացւոց. ամք չորեք հարիւր և երեսուն։ Եւ եղև յետ չորեք հարիւր և երեսուն ամի, յաւուր յայնմիկ եկին ամենայն զօրութիւնք Տ՛էառն յերկրէն Եգիպտացւոց։

Երիրն Աւետեաց։

Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի և ասէ. առաքեա արս՝ և լրտեսեսցեն զերկիրն Քանանացւոց, զոր ես տացի որդւոցն Իսրայէլի. ի կալուածս այր մի՝ ըստ ցեղի ըստ տանց նահապետաց իւրեանց առաքեսցես զնոսա՝ զամենայն գլխաւորս 'ի նոցանէ։ Եւ առաքեաց զնոսա Մովսէս յանապատէն Փառանու լրտես սել զերկիրն Քանանացւոց և ասէ զնոսա. ելէք ընդ անապատդ, և ամբարձարուք 'ի լեռանն։ Եւ տեսջիք զերկիրն զինչ է. և զժողովուրդն որ նստի 'ի նմա եթէ զօրաւորագոյն իցէ թէ անաւագ, եթէ սակաւք իցեն եթէ բազումք։ Եւ զի՞նչ իցէ երկիրն յորում նոքա բնակեալ իցեն, եթէ բարի՞ ի-

ցէ , եթէ չար . և զի՞նչ իցեն քաղաքն , յոր նոքա բնակեալ են . պարսպաւո՞ր քն , եթէ անպարիսպք : Եւ զի՞նչ երկիրն , պարարտ իցէ՞ եթէ տկար . եթէ իցէ՞ նմա ծառատունկ եթէ ոչ . և ժրասքի՛ք առքի՛ք ի պտղոյ երկրին : Եւ աւուրք գարնանոյ էին աւուրքն խայծուածոյ խաղողոյ :

Եւ ելեալ լրտեսեցին զերկիրն յանապատն Սինայ մինչև ցՐոոբ ի մուտս Եփրաթայ : Եւ եկին մինչև ցձորն ողկուզոյ , և լրտեսեցին զնա . և հատին անտի ուռ որթոյ և ողկոյզ մի խաղողոյ ի նմա , և բարձին զնա լծակօք՝ և ի նռանէ և ի թզոյ : Եւ դարձան անդրէն լրտեսեալ զերկիրն յետ աւուրց քառասնից : Եւ եկեալ առ Մովսէս և առ Ահարոն , և առ ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի յանապատն Փառան Կադէս . և ետուն նոցա գրոյց , և ամենայն ժողովրդեանն . և ցուցին զպտուղ երկրին : Եւ պատմեցին նոցա , և ասեն ցնոսա . չոգաք յերկիր յոր առաքեցեր զմեզ , յերկիր՝ որ քըղխէ զկաթն և զմեղր . և այսէ պտուղ նորա :

Եւ ետ Տէր Իսրայէլի զամենայն երկիրն զոր երդուաւ տալ հարցն նոցա . և ժառան-

գեցին զնա, և բնակեցին ի նմա : Եւ հանդոյց զնոսա Տէր շուրջանակի՝ որպէս երդուաւ հարցն նոցա, և ոչ ոք յարեաւ ընդդէմ նոցա ի թշնամեաց իւրեանց, զի զամենայն թշնամիս նոցա մատնեաց Տէր ի ձեռս նոցա : Եւ ոչ սխալեցաւ բան մի յամենայն բանից բարեաց, զոր խօսեցաւ Տէր որդւոցն Իսրայէլի՝ այլ ամենայն ինչ եղև :

Ծնունդ Սամփսոնի :

Եւ յաւելին որդիքն Իսրայէլի առնել չար առաջի Տեառն, և մատնեաց զնոսա Տէր ի ձեռս այլազգեացն, ամս քառասուն : Եւ եղև այր մի ի Սարայայ ի ցեղէն Դանայ, և անուն նորա Մանուէ, և կին նորա ամուլ էր և ոչ ծնանէր : Եւ երևեցաւ հրեշտակ Տեառն կնոջն, և ասէ, ահաւասիկ դու ամուլ ես և ոչ է քո ծնեալ, և յղասցիս և ծնցիս որդի : Այլ՝ զգոյշ լեր գուցէ ըմպիցես գինի և օղի, և մի՛ ուտիցես զամենայն անսուրբ : Զի ահա յղասցիս դու, և ծնցիս որդի, և երկաթ մի՛ ելցէ ի գլուխ նորա, զի

ուխտաւոր Աստուծոյ եղիցի մանուկն անդ-
ատին յորովայնէ . և նա սկսցի փրկել զԻսրայ-
էլ 'ի ձեռաց Փղշտացւոց :

Եւ եմուտ կինն առ այրն իւր , և ասէ .
եթէ այր Աստուծոյ եկն առիս , և տեսիլ նո-
րա իբրև զտեսիլ հրեշտակի Աստուծոյ երևե-
լի յոյժ . և հարցի նմա թէ ուստի եսև զանուն
իւր ոչ պատմեաց ինձ : Եւ աղաչեաց Մանուէ
զՏէր . և ասէ՝ այրն Աստուծոյ զոր առա-
քեցեր առ մեզ . եկեսցէ դարձեալ առ մեզ
և լուսաւորեսցէ զմեզ թէ զի՞նչ արաս-
ցուք մանկանն՝ որ ծնանիցի : Եւ լուաւ Աստ-
ուած ձայնի Մանուայ . և եկն հրեշտակ
Աստուծոյ միւսանգամ առ կին նորա մինչ դեռ
նստէր յանդի : Եւ փութացաւ կինն՝ ընթա-
ցաւ պատմեաց առն իւրում և ասէ ցնա .
ահա երևեցաւ ինձ այրն՝ որ եկն առիս յա-
ւսուր յայնմիկ :

Եւ յարեաւ գնաց Մանուէ զհետ կնոջ
իւրոյ , և եկն առ այրն , և ասէ ցնա . եթէ
դո՞ւ իցես այրն՝ որ խօսեցար ընդ կնոջն և ասէ
ես եմ : Եւ ասէ Մանուէ ցհրեշտակն . թող
բռնադատեսցուք զքեզ . և արասցուք առա-
ջի քոյ ուլ մի այծեաց : Եւ ասէ հրեշտակն

ցՍանուէ. եթէ բռնադատեսցես զիս ոչ կերայց ի հացից քոց, և եթէ արասցես ողջակէզ Տեառն մատուսցես: Եւ ասէ Սանուէ ցհրեշտակն. զի՞նչ անուն է քեզ, զի յորժամ եկեսցէ բանն քո՝ փառաւորեսցուք զքեզ: Եւ ասէ ցնա հրեշտակն. զի՞ հարցանես զանուանէ իմմէ, և նա է սքանչելի: Եւ առ Սանուէ զուլն այծեաց զոլոհն, և մատոյց ի վերայ վիմին Տեառն սքանչելաբարի. և Սանուէ և կին նորա հայէին:

Եւ եղև ընդ ամբառնալ բոցոյն ի վերուստ ի սեղանոյն յերկինս, ամբարձաւ հրեշտակն բոցով սեղանոյն. և Սանուէ և կին նորա հայէին. և անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր: Եւ ասէ Սանուէ ցկինն իւր մահու մեռանիցիմք. զի զԱստուած տեսաք: Եւ ասէ ցնա կին նորա, եթէ կամեցեալ էր Տեառն սպանանել զմեզ, ոչ ընդունէր ի ձեռաց մերոց զողջակէզն և զոլոհն. և ոչ լուսաւորէր մեզ զայն ամենայն ընդ ժամանակս, ժամանակս, և ոչ լսելի առնէր մեզ զայն: Եւ ծնաւ կինն որդի, և կոչեաց զանուն նորա Սամփսոն. և աճեաց մանուկն, և օրհնեաց զնա Տէր: Եւ սկսաւ հոգի Տեառն

շրջել ընդ նմա 'ի բանակին Դանայ 'ի մէջ Սարաայ, և 'ի մէջ Եսթաւուլայ :

Ամուսնութիւն Սամփոնի :

Եւ էջ Սամփոն 'ի Թամնաթա՝ և եռեռս կին մի 'ի դստերացն այլազգեաց, և հաճոյ թուեցաւ առաջի նորա : Եւ ել պատմեաց հօր իւրում և մօր և ասէ. կին մի տեսի 'ի Թամնաթա 'ի դստերացն այլազգեաց. և արդ առէք զնա ինձ 'ի կնութիւն : Ասեն ցնա հայր և մայր նորա, եթէ ոչ գուցէ 'ի դստերաց եղբարց քոց և յամենայն ժողովրդեան իմում կին, զի երթիցես դու առնուլ յայլազգեաց անթլպատից : Եւ ասէ Սամփոն ցհայր իւր. զնա ած ինձ, զի նա հաճոյ է աչաց իմոց :

Եւ էջ Սամփոն և հայր նորա և մայր իւր 'ի Թամնաթա. և խոտորեցաւ Սամփոն յայգեստանն Թամնաթայ, և ահա կորիւն մի առիւծու գոչեաց ընդդէմ նորա : Եւ յաջողեցաւ 'ի վերայ նորա հոգի Տեառն և ճեղքեաց զնա իբրև զուլ մի այծեաց, և ոչ ինչ գոյր 'ի ձեռին նորա. և ոչ պատմեաց հօր

և մոր իւրում զոր արար : Եւ իջին խօսեցան ընդ կնոջն , և հաճոյ թուեցաւ առաջի Սամփսոնի : Եւ դարձաւ յետ աւուրց առնուլ զնա , և խոտորեցաւ տեսանել զգէշ առիւծու , և ահա գունդ մեղուաց ի բերան առիւծուն և մեղր : Եւ էառ զայն ի բերան իւր , և երթալով երթայր և ուտէր , չոգաւ առ հայր և առ մայր իւր , և ետ նոցա և կերան , և ոչ պատմեաց նոցա թէ ի բերանոյ առիւծուն եհան : Եւ էջ հայր նորա առ կինն , և արար անդ Սամփսոն հարսանիս զեօթն օր , զի այնպէս առնէին երիտասարդք : Եւ եղև ի զարհուրելնոցա ի նմանէ , կացուցին առ նմա ընկերս երեսուն , և էին ընդ նմա : Եւ ասէ ցնոսա Սամփսոն արկից ձեզ առասպել , եթէ առեղծանիցէք զնա զեօթն օր խրախուլթեանս և գտանիցէք , տայ ձեզ երեսուն պատառակալս և երեսուն պատմուճանս հանդերձից : Եւ ասէ ցնոսա , ի կերչէ ել կերակուր , և ի հզօրէ ել քաղցր , և ոչ կարացին առեղծանել զառասպելն զերիս աւուրս : Եւ եղև յաւուրն չորրորդի , և ասեն ցկինն Սամփսոնի պատրեա զայր քո , և պատմեսցէ քեզ զառասպելն , գուցէ այրիցեմք զքեզ և

զտուն հօր քոյ։ մի թէ աղքատացու ցանել կոչէցեր զմեզ այսր։

Եւ երկաց կինն Սամփսանի առ նա և ասէ ցնա։ ատեցեր զիս և ոչ սիրեցեր։ զի առասպելն զոր արկեր որդւոց ժողովրդեան իմոյ։ ինձ ոչ պատմեցեր։ Եւ նա ասէ ցնա։ ահա հօր և մօր իմոյ ոչ պատմեցի։ և արդ քի՞զ պատմիցեմ։ Եւ երկաց եօթն օր յորս էր խրախուրթիւն։ և եղև յաւուրն եօթներորդի պատմեաց նմա։ քանզի թախանձէր զնա։ և նա պատմեաց որդւոց ազգին իւրոյ։ Եւ ասեն ցնա արք քաղաքին յաւուրն եօթներորդի։ Զի՞նչ քաղցրագոյն քան զմեղր։ կամ զի՞նչ հզօրագոյն քան զառիւծ։ և ասէ ցնոսա Սամփսոն։ եթէ ոչ էր ճրնշեալ երինջն իմ, ոչ գտանէիք զառասպելն իմ։

Զաղուէ՞ն Սամփսոնի։

Եւ եղև յետ աւուրց, յաւուրս հնձոյ ցորենոյ, այց արար Սամփսոն կնոջ իւրում, ածեալ ուլ մի յայծեաց։ և ասէ մտից առ կին իմ՝ի սենեակ։ և ոչ երթող զնա Հայրն նորա մտանել առ նա։ Եւ ասէ Հայրն նորա։ ա-

սելով ասացի՝ թէ ատեցեր զնա, և ետուս զնա ընկերի քում. Ոչ աւանիկ քոյր նորա կրտսեր լաւագոյն է քան զնա. եղիցի քեզ սա փոխանակ նորա: Եւ ասէ Սամփսոն. անպարտ եմ ես միանգամայն յայլազգեացդ. եթէ արարից ընդ դոսա չարութիւն: Եւ գնաց Սամփսոն, և կալաւ երեք հարիւր աղուէսս. և առ ջահս և կապեաց զնոսա ընդ միմեանս ձեռս ընդ ձեռս. և եդ զջահսն ի մէջ երկուց ձեռացն, և կապեաց ի միջոցին զջահսն: Եւ ելոյց հուր ի ջահսն, և արձակեաց յոճ յալազգեացն. և այրեաց զորանն, և զյաւաջագոյն հնձեալսն ի բարդի մինչ ցկանգնաւորն, և մինչև ցայգիս, և ձիթենիս: Եւ ասեն այլազգիքն՝ ո՞ արար զայս: Եւ ասեն Սամփսոն փեսայ Թամնացւոյն. զի եհան զկին նորա և ետ ընկերի նորա. և ելին այլազգիքն և այրեցին զտուն հօր նորա, և զկին և զհայր նորա հրով: Եւ ասէ ցնոսա Սամփսոն. եթէ զոյնչափ և առնիցէք, ոչ այն ոչ հաճեցայց, այլ զվրէժ իմ յիւրաքանչիւր ումեքէ ի ձէնջ ինդրեցից: Եւ եհար զնոսա ի սրունից մինչև ցերանս. հարուածս մեծամեծս: Եւ էջ բնակեցաւ

հեղեղատաւն յայրին Եսիմայ : Եւ ելին այլազգիքն , և բանակեցան զՑուգայիւ , և անկան զԵրեքեան : Եւ ասէ ցնոսա այր Ցուգայ , ընդէ՞ր ելիք ի վերայ իմ : Եւ ասեն այլազգիքն կապել զՍամիսոն ելաք , և առնել ընդ նա զորօրինակ արար ընդ մեզ :

Եւ իջին երեք հազարք ի Ցուդայ ի ծակ վիմին Եսեմայ և ասեն ցՍամիսոն , մի՞ գիտես զի իշխեն մեզ այլազգիքն , և ընդէ՞ր արարեր զայն ընդ մեզ : Եւ ասէ ցնոսա Սամիսոն , զոպէս արարին ընդիս նոյնպէս արարի ընդ նոսա : Եւ ասեն ցնա , կապել զքեզ եկաք , և մատնել զքեզ ի ձեռն այլազգեացն : Եւ ասէ Սամիսոն երդուարո՛ք ինձ դուք և տուք զիս նոցա , և դուք մի՛ երբէ՛ք պատահիցէք ինձ : Եւ երդուան նմա և ասեն ոչ , այլ կապելով կապեսցուք զքեզ և տացուք ի ձեռս նոցա , բայց մահու ոչ սպանցուք զքեզ : Եւ կապեցին զնա երեք կարովք նորովք , և հանին զնա ի վիմէն : Եւ եկին մինչև ցծնօան , և այլազգիքն ազաղակեցին և ընթացան ընդդէմ նորա , և յաջողեցաւ ի վերայ նորա Հոգի Տեառն , և եղեն կարք ի բազուկս նորա իբրև խծուծ յորժամ ի հաւր

հոտոտիցի , և Հալեցան կապանքն 'ի բազկա-
ցըն նորա :

Եւ եգիտ ծնօտ մի իշոյ ընկեցեալ . ձգեաց
զձեռն իւր և էառ զնա . և եհար նովաւ հա-
զար այր : Եւ չոգաւ Սամփսոն անտի 'ի
Գազա . և ազդ եղև Գազացւոցն և ասեն .
եկեալ է այսր Սամփսոն . և պատեցին և դա-
բանակալ եղեն նմա գիշերն ողջոյն առ դը-
բան քաղաքին , և անշշուանչ կացին զգիշերն
ողջոյն , և ասեն . աստ կացցուք մինչև ցառա-
ւօտն և սպանցուք զնա : Եւ ննջեաց Սամփ-
սոն մինչև ցմէջ գիշերոյն , և յարեաւ զմէջ-
գիշերաւն , և թափեաց զդրունս քաղաքին
հանդերձ սեմովքն , և եբարձ զնոսա հան-
դերձ նգովքն , և եդ 'ի վերայ ուսոց իւրոց
և եհան զնոսա 'ի գլուխ լերինն՝ որ է հան-
դէպ Քեբրոնի :

Եւ եղև յետ այսորիկ սիրեաց կին մի՝ առ
եղեր բբ հեղեղատին Ռվրեկայ . և անուն նո-
րա Դալիլա : Եւ եկին առ նա նախարարք
այլազգեացն և ասեն . պատրեա՛ զնա և տե՛ս
լի՛ւ իցէ զօրութիւն նորա մեծ , և կամ լի՛ւ
կարասցուք նմա հնար գտանել և կապել զնա
առ 'ի տկարացուցանել զնա . և մի՛ք տացուք

քեզ այր իւրաքանչիւր հաղար և հարիւր արծաթոյ : Եւ ասէ Դաւիթա ցՍամիսոն պատմեա՛ ինձ . թէ ի՞նչ զօրութիւն քո մեծ , և թէ կապիցեն առ 'ի տկարացուցանելոյ զքեզ : Եւ ասէ Սամիսոն . եթէ կապիցեն զիս եօթն ջլօք դալարովք անվատելովք , տկարացայց և եղէց իբրև զմի 'ի մարդկանէ : Եւ բերին առ նա նախարարքն այլազգեաց եօթն ջիլս դալարս անվտիտս . և նա կապեաց զնա նոքօք : Եւ դարան նստէր նմա 'ի շտեմարանի . և ասէ այլազգիք հասեալ են 'ի վերայ քո Սամիսոն : Եւ խզեաց զջիլսն զորօրինակ խզեսցի քուաղ 'ի թօթափելոյ յորժամ 'ի հուր հոտոտիցի . և ոչ ծանուցաւ զօրութիւն նորա : Եւ ասէ Դաւիթա ցՍամիսոն . ահա խաբեցեր զիս . և խօսեցար սուտ . գոնէ արդ պատմեա՛ ինձ . թէ կապիցիս : Եւ ասէ ցնա . եթէ կապելով կապեսցեն զիս եօթն կարովք ուրովք չիցէ գործեալ գործ . տկարացայց և եղէց իբրև զմի 'ի մարդկանէ :

Եւ էառ Դաւիթայ կարս նորս , և կապեաց զնա նոքօք և ասէ . հասեալ են 'ի վերայ քո այլազգիքն Սամիսոն . և դարան նստէր 'ի շտեմարանի . Է խզեաց զայն 'ի բազկաց իւրոց

իբրև զասղանի : Եւ ասէ Դաւիթայ ցՍամփ-
սան . մինչև ցե՞րբ խաբիցես զիս . և խօսի-
ցես ընդիս սուտ . արի պատմեա լիւ կապի-
ցիս : Եւ ասէ ցնա , եթէ անկցես զեօթա-
նեսին գիտակս գլեսոյ իմոյ ընդ աղբին , և վա-
րիցես ցցովք ընդ որմն ՝ եղէց ակարացեալ
իբրև մի ՝ի մարդկանէ : Եւ ննջեցոյց զնա
Դաւիթա , և առ զեօթնեսին գիտակս գլեսոյ
նորա Հանդերձ աղբամբն , վարսեաց ցցովք
ընդ որմն և ասէ ցնա . այլազգիքն Հասեալ են
՝ի վերայ քո Սամփսան : Եւ զարթեաւ ՝ի քը-
նոյ իւրմէ , և կորզեաց զցցսն Հանդերձ ոս-
տայնիւն և աղբամբն յորմոյ անտի . և սչ ծա-
նեաւ զօրութիւն նորա :

Եւ ասէ ցնա Դաւիթայ . զիա՞րդ ասես թէ
սիրեցի զքեզ , և սիրտ քո չէ ուղիղ ընդ իս .
այս երիցս խաբեցեր զիս , և ոչ պատմեցեր
ինձ թէ լիւ իցէ զօրութիւն քո մեծ : Եւ ե-
ղև իբրև վտանգեաց զնա բանիւք զգիշերն
ողջոյն և թախանձեցոյց զնա . պարտասեցոյց
զնա մինչև ցմահ : Պատմեաց նմա զամենայն
ինչ ՝ի սրտէ իւրմէ , և ասէ ցնա . ածելի ոչ
եւցէ ՝ի գլուխ իմ . զի ուխտաւոր Աստուծոյ եմ
ես յորովայնէ մօր իմոյ . ապա թէ գերծու-

ցումմեկնեսցի յինէն զօրութիւն իմ, և ակա-
բացայց և եղէց իբրև զամենայն մարդիկ : Իբրև ետես Դալիլա եթէ պատմեաց նմա զամենայն ինչ 'ի սրտէ իւրմէ, առաքեաց կո-չեաց զնախարարսն այլազգեացն՝ և ասէ. եկէք միանգամայն, զի պատմեաց ինձ զամենայն 'ի սրտէ իւրմէ : Եւ եկին առ նա նա-խարարքն այլազգեացն, և բերին զարծա-թըն 'ի ձեռս իւրեանց : Եւ ննջեցոյց զնա 'ի մէջ ծնկաց իւրոց. և կոչեաց վարսավէր, և եգերծ զեօթնեսին գլխոյ նորա և սկսաւ թօշնել, և մեկնեցաւ 'ի նմանէ զօրու-թիւն նորա :

Եւ ասէ Դալիլայ. այլազգիք հասեալ են 'ի վերայ քո Սամփսոն : Եւ զարթեաւ 'ի քնոյ իւրմէ և ասէ. ելից և արարից որպէս միշտն, և թօթափեցից : Եւ կալան զնա այլազգիքն, և բրեցին զաչս նորա, և իջու-ցին զնա 'ի Գազա, և կապեցին զնա երկա-թի կապանօք. և աղայր 'ի տան բանտին : Եւ սկսաւ մաղ գլխոյ նորա բուսանել յետ գերծելոյն : Եւ իշխանքն այլազգեացն ժո-ղովեցան զոհել զոհ մեծ Դագոնայ աստուա-ծոյն իւրեանց, և ուրախ լինել. և ասէին,

մատնեաց աստուած մեր զՍամփսոն Թշնամի մեր ի ձեռս մեր : Իբրև տեսին ժողովուրդն օրհնէին զաստուածս իւրեանց . զի ասէին Թէ մատնեաց աստուած մեր զԹշնամիս մեր ի ձեռս մեր . և զապականիչ երկրի մերում , որ յաճախեաց զվիրաւորս մեր :

Եւ եղև իբրև զուարթացան սիրտք իւրեանց ասեն . կոչեցէք զՍամփսոն ի տանէ բանտին , և խաղ արասցէ առաջի մեր : Եւ կոչեցին զՍամփսոն ի տանէ բանտին , և խաղային զնովսա . և կացուցին զնա ի մէջ երկուց սեանց : Եւ ասէ Սամփսոն ցպատանին որ ունէր զձեռանէ նորա . Թոյլ տուր ինձ և զննեցից զսիւնս ՝ յորոյ վերայ տունս Հաստատեալ կայ , և յեցայց ի նոսա : Եւ տունն լի էր արամբ և կանամբ . և անդ էին նախարարք այլազգեացն . և ի տանիսն իբրև երիք Հազարք . արք և կանայք որք տեսանէին զխաղն Սամփսոնի : Եւ աղաղակեաց Սամփսոն առ Տէր՝ և ասէ . Տէր Տէր զօրութեանց յիշեա զիս . և զօրացո զիս զայս եւ մի նուազ Աստուած և խնդրեցից զվրէժ ինդրութիւն իմ փոխանակ երկուց աչաց իմոց այլազգեաց աստի : Եւ բռուն ե Հար Սամփ-

ան զերկուց սեանցն միջնոց , յորոյ վերայ տունն Հաստատեալ կայր , և յեցաւ ի նոսա ի մին աջով իւրով , և ի միւսն ձախով իւրով :

Եւ ասէ Սամիսոն . մեռցի անձն իմ ընդ այլազգիսս . և շարժեաց զօրութեամբ : Եւ անկաւ տունն ի վերայ ամենայն նախարարացն , և ի վերայ ամենայն ժողովոյն որ ի նմա . և էին մեռեալքն զոր մեռոյց Սամիսոն ի մահուան իւրում , առաւել քան զոր սպան ի կենդանութեան իւրում ։ Եւ իջին եղբարք նորա և ամենայն տուն հօր նորա . և բարձին , և հանին թաղեցին զնա ի մէջ Սարայայ և ի մէջ Յեսթաւուլայ ի գերեզմանի Մանոայայ հօր իւրոյ . և նա դատեաց զԻսրայէլ ամս քսան

Նոյեմ և Հոռոմ :

Եւ եղև յետ այսորիկ յաւուրս դատելոյ դատաւորացն . եկն սով յերկիրն : Եւ գնաց այր ոմն ի Բեթղեհէմ Յուդայ պանդխտանալ յագարակին Մովաբայ . ինքն և կին իւր

և երկու որդիք իւր : Եւ անուն առնն Եղիմեղէք , և անուն կնոջ նորա Նոոմի , և անուն երկուց որդւոց նորա Մաղոն , և Քեղոն , Եփրաթացիք ի ցեղէ Յուդայ Յոգան յագարակն Մովաբու և անդ էին :

Եւ մեռաւ Եղիմեղէք այրն Նոոմիայ , և մնաց կինն և երկու որդիք նորա : Եւ առին իւրեանց կանայս Մովաբացիս , անուն միում Որփա , և անուն երկրորդին Հռութ , և բնակեցան անդ իբրև ամս տասն : Եւ մեռան անդ երկոքին որդիք նորա Մաղոն և Քեղոն , և մնաց կինն միայն յառնէ իւրմէ և յորդւոց իւրոց :

Եւ յարեաւ ինքն և երկոքին նուանքն նորա և դարձան յագարակէն Մովաբայ , զի լուան թէ այց արար Աստուած ժողովրդեան իւրում տալ նոցա հաց : Եւ էլ ի տեղւոջէն ուր էր , և երկոքին նուանք նորա ընդ նմա , և գնացին ի ճանապարհ դառնալ յերկիրս իւր : Եւ ասէ Նոոմի ցերկոսին նուանս իւր , երթայք դարձարուք յիւրաքանչիւր ի տուն հօր իւրոյ և արասցէ ընդ ձեզ Տէր ողորմութիւն , որպէս արարէք ընդ մեռեալս և ընդ իս : Տացէ ձեզ Տէր և գտջիք հանգիստ իւրաքանչիւր

'ի տան հօր իւրոյ : Եւ համբուրեաց զնոսա . և ամբարձեալ զձայնս իւրեանց լացին :

Եւ ասեն . ոչ այդպէս . այլ ընդ քեզ դարձցուք 'ի ժողովուրդ քո : Եւ ասէ Նոոմի մի՛ դատերք իմ , զի առաւել քան զձեզ դառնացեալ եմ , զի ել ընդիս ձեռն Տեառն : Եւ ամբարձին զձայնս իւրեանց միւս անգամ և լացին . և համբուրեաց Որփա զսկեսուր իւր , և դարձաւ 'ի ժողովուրդ իւր . բայց Հռութ գնաց զկնի նորա : Եւ ասէ Նոոմի ցՀռութ . ահա ներ քո դարձաւ 'ի ժողովուրդ իւր և առ Աստուած իւր , և դու ընդհետ ներին քո երթ : Եւ ասէ Հռութ . մի՛ պատահեսցէ ինձ թողուլ զքեզ և դառնալ 'ի քէն . զի ուր դու երթայցես երթայց , և ուր հանգչիցիս՝ հանգեայց . ժողովուրդ քո , ժողովուրդ իմ . և Աստուած քո Աստուած իմ : Եւ ուր մեռանիցիս՝ մեռայց , և անդ թաղեցայց . օն և օն արասցէ ինձ Աստուած և օն և օն յաւելցէ , բայց եթէ մահ մեկնեսցէ ընդիս և ընդ քեզ : Եւ իբրև ետես Նոոմի թէ պնդեալ է երթալ ընդ իւր դադարեաց այնուհետև 'ի խօսելոյ՝ ընդ նմա : Եւ դարձան Նոոմի և Հռութ Մովաբացի նու իւր

ընդ նմա գնացեալ յաղարտակէն Մովաբայ ։ և եկին ի Բեթղեհէմ՝ի սկիզբն հնձոյ գարեոյ ։

Բոոս և Հռութ ։

Եւ անդ էր այր ծանօթ առն Նոոմինայ ։ և այրն հզօր զօրութեամբ յաղգէն Եղիմելիքայ ։ և անուն նորա Բոոս ։ Եւ ասէ Հռութ ցՆոոմի ։ երթայց յանդ , և քաղեցից հասկըս զհետ ուրուք , որոյ գտից շնորհս առաջի աչաց նորա ։ Եւ ասէ ցնա երթ դուստր ։ Եւ երթեալ քաղէր հասկ յանդի զհետ հընձողացն ։ և դիպեալով դիպեցաւ յանդին Բոոսայ ։ Եւ ահա Բոոս եկն ի Բեթղեհէմ ։ և ասէ ցհնձողս իւր ։ Տէր ընդ ձեզ ։ և ասեն ցնա օրհնեսցէ զքեզ Տէր ։ Եւ ասէ Բոոս ցպատանին իւր որ կայր ի վերայ հնձողացն որ է աղջիկդ այդ ։ Պատասխանի ետ պատանին և ասէ ։ Մովաբացի աղջիկն է , որ դարձաւ ընդ Նոոմիայ յաղարտակէն Մովաբայ ։ Եւ ասէ ։ Թող քաղեցից և ժողովեցից հասկ ի մէջ որայոց զհետ հնձողացդ ։ և եկն եկաց յառաւօտէ մինչև ցայժմ , և ոչ դա-

դարեաց՝ և ոչ սակաւիկ ինչ յանդիս :

Եւ ասէ Բոսս ցՀռութ . լուր դուստր . մի՛ այլ ուրեք երթիցես քաղել հասկ յայլոց յանդի , այլ աստէն իսկ յարեաց յաղջկունս իմ : Եւ աչք քո յանդիս ուր և երթիցեն զհետ նոցա . ո՞չ ապաքէն պատուէր եառու մանկտուոյ իմում չմերձենալ ՝ի քեզ . և եթէ ծարաւի իցես , երթիցես յամանսն և արբցես , ուստի հանիցեն մանկտիքդ : Եւ անկեալ ՝ի վերայ երեսաց իւրոց երկիրեալդ ՝ի վերայ երեսաց յերկիր ՝ի խոնարհ և ասէ . զի է՞ զի գտի շնորհս առաջի աչաց քոց ճանաչել զիս . և ես եմ կին մի օտար : Պատասխանի ետ Բոոս և ասէ ցնա . պատմելով պատմեցաւ ինձ զամենայն ինչ զոր արարեր սկեսերաց քում յետ մահուան առն քո . և թէ զիարդ թողեր զհայրն քո և զմայրն , և զերկիր ծննդեան քոյ և եկիր ՝ի ժողովուրդ զոր ոչ գիտէիր յերեկն և յեռանդն : Եւ ասէ ցնա Բոոս . ահա ժամ ճաշոյ է մատիր այսր և կեր ՝ի հացէդ , և թացցես զպատառ քո ՝ի քացախիդ : Եւ նստաւ Հռութ ՝ի կողմանէ հնձողացն . և խառնեաց նմա Բոոս փոխինդ և եկեր , և յագեցաւ . և եթող նշխար :

Եւ յարեաւ քաղել հասկ : Եւ պատուի-
բեաց Բոոս մանկտւոյ իւրում, և ասէ . այլ և
ի մէջ որայոցն քաղիցէ . և մի պակառեցու-
ցանէք : Այլ և բառնալով բարձիք . և
արկանելով արկջիք առաջի նորա ի փոխն-
դոցն խառնելոց , և թոյլ տարջիք նմա և կեր-
ցիցէ և քաղիցէ հասկ : Եւ քաղեաց յան-
դէն մինչև ցերեկոյ . և ծեծեաց զոր քա-
ղեացն . և եղև արդու մի գարւոյ : Եւ առ
և եմուտ ի քաղաքն . իբրև ետես սկեսուրն
զոր քաղեացն . և ետան Հռութ ետ նմա ի
նշխարէն յորմէ յագեցաւն : Ասէ ցնա սկեսուրն
իւր . ո՞ւր ժողովեցեր այսօր և կամ ո՞ւր ե-
գեր . եղիցի որ ծանեաւն զքեզ օրհնեալ . և
պատմեաց Հռութ սկեսեր իւրոյ թէ ո՞ւր
եղև . և ասաց զանուն առնն առ որում եղև
այնօր թէ Բոոս է : Ասէ Նոոմի ցնու իւր .
օրհնեալ է նա ի Տեառնէ . զի ոչ պակասե-
ցոյց զգութ իւր ի կենդանեացս և ի մեռե-
լոց : Եւ ասէ ցնու իւր թէ բարի է դուստր
զի եկեր ընդ աղջկունս նորա և մի՝ պատահի-
ցէ ոք քեզ յայլում յանդի :

Եւ յարեցաւ Հռութ յաղջկունսն Բոոսայ
քաղել հասկ մինչև ցվախճանել հնձոցն գա-

րեաց , և հնձոցն ցորենոյ : Եւ նստաւ առ սկեսեր իւրում : Եւ ասէ ցնա Նոոմի . դուստր խնդրեցից քեզ հանգիստ . զի բարի լինիցի քեզ : Եւ արդ ոչ ապաքէն Բոոս ծանօթ մեր է , որոյ էիր ընդ աղջկունս նորա . ահաւասիկ նա արկանէ կալ գարւոյ ի գիշերի յայսմիկ : Եւ դու լուասցիս և օծցիս . և արկցես զհանդերձս քո գքև և երցես ի կալն և մի՛ տայցես առնն ծանօթիս մինչև վախճանեսցէ զուտել և զըմպել իւր : Եւ ասէ Հռութ զամենայն զոր ինչ ասասցես ցիս , արարից :

Էջ ի կալն , և արար ըստ ամենայնի որպէս պատուիրեաց նմա սկեսուրն իւր : Եւ եղև զհասարակածաւ գիշերոյ զարհուրեցաւ այրն և խռովեցաւ . և ահա կինն ննջէր ընդ ոտիւք նորա : Եւ ասէ . ո՞վ ես դու . և ասէ ես եմ Հռութ աղախին քո , և արկցես ըզդրօշակ քո զաղախնով քով . զի մերձաւորիչ ես դու : Եւ ասէ Բոոս . օրհնեալ ես դու ի Տեառնէ Աստուծոյ դուստր , զի ապնուացուցեր դու զգութ քո զվերջին քան զառաջին : Եւ արդարև եմ ես մերձաւորիչ քո . բայց գոյ և այլ ևս մօտ մերձաւորիչ մօտագոյն քան

զիս : Ագիր աստ զգիշերս զայս . և եղիցի այգուն , եթէ մերձաւորեսցէ զքեզ մերձաւորիչն՝ բարի է . ապա թէ ոչ կամիցի մերձաւորեցուցանել զքեզ , ես մերձաւորեցուցից զքեզ . կենդանի է Տէր : Եւ ննջեաց մինչև յառաւօտն . և յարեաւ կինն՝ մինչչև ճանաչէր այր զընկեր իւր : Եւ ասէ Բոոս բեր զմեկնոցդ որ ի վերայ է՝ և կալ աստ . և նա կալաւ : Եւ չափեաց վեց չափովն գարի , և եդ ի վերայ նորա , և եմուտ ի քաղաքն :

Եւ չոգաւ Հռութ առ սկեսուր իւր : Եւ նա ասէ . զի՞ է դուստր . և պատմեաց նմա զամենայն ինչ զոր արար նմա այրն : Եւ ասէ ցնա . զայս վեց չափ գարւոյ ետ ինձ և ասէ . զի մի՛ մտցես ունայնաձեռն առ սկեսուր քոյ : Եւ նա ասէ . նիստ դուստր մինչև յայտ լիցի մեզ . որպէս զի ոչ վրիպէ բանն . զի ոչ դադարէ այրն թէ ոչ կատարէ սոյն օրին զբանն :

Եւ Բոոս ել ի դուռնն և նստաւ անդ . և ահա անցանէր առ նովաւ մերձաւորիչն զորմէ խօսեցաւ Բոոս : Եւ ասէ ցնա Բոոս , ա՛նց նիստ աստ վայր մի և մնայ . և նա անց նստաւ : Եւ առ Բոոս տասն այր ի ծերոց քաղաքին և ասէ . նստարուք աստ և նստան : Եւ ա-

ասէ Բոոս ցմերձաւորիչն • զբաժին յանդոյ որ
է եղբօր մերոյ Եղէմելիքայ վաճառէ Նոո-
մի • որ դարձեալն է յագարակէն Մովաբայ :
Արդ ստացիր առաջի սոցա որ նստինս • և ա-
ռաջի ծերոց ժողովրդեան իմոյ : Արդ եթէ
մերձաւորեցուցանես մերձաւորեցո • ապա թէ
ոչ մերձաւորեցուցանես , պատմեա՛ ինձ և գի-
տացից , զի ոչ գոյ բաց ի՛քէն մերձաւորարար •
և յետ քո ես եմ մերձաւորեցուցիչ : Եւ ա-
սէ Բոոս • յաւուր ստանալոյ քոյ զագարակն
ի՛ ձեռաց Նոոմիայ և Հռութայ Մովա-
բացւոյ կնոջ մեռելոյն և զնա պարտ՛ս ստա-
նալ և յարուցանել զանուն մեռելոյն ի՛ ժա-
ռանգութեան իւրում : Եւ ասէ մերձաւո-
րիչն ցԲոոս • ոչ կարեմ մերձաւորեցուցանել
ես ինձ , գուցէ եղծանիցեմ զժառանգութիւն
իմ • մերձաւորեա՛ դու քեզ զմերձաւորութիւն
իմ • զի ես ոչ կարեմ մերձաւորեցուցանել :
Եւ ասէ Բոոս ցծերսն • և ցամենայն ժողո-
վուրդն , վկայք իմ էք դուք այսօր • զի
ստացայ զամենայն ինչ Եղեմելեքայ և զամե-
նայն ինչ Քեղոնայ և Մաղոնայ ի՛ ձեռաց
Նոոմիայ : Նա և զՀռութ Մովաբացի ըզ-
կին Մաղոնայ ստացայ ինձ ի՛ կնութեան

կանգնել զանուն մեռելոյն 'ի ժառանգութեան իւրում. և մի՛ ընջեսցի անուն մեռելոյն յեղբարց իւրոց և 'ի ցեղէ տեղւոյ իւրոյ. և վկայք դուք էք այսօր :

Պատասխանի եւ ամենայն ժողովուրդն 'ի դրանն և ասեն. մեք եմք վկայք. և ծերք ասեն տացէ Տէր զկինն որ մտանէ 'ի տուն քո. իբրև զՀռաքել և իբրև զԼիա որ շինեցին երկոքին զտուն Իսրայէլի առնել զօրութիւն յԵփրաթայ, և կոչել անուն 'ի Բեթղեհեմ : Եւ եղիցի տուն քո իբրև զտուն Փարիսի, զոր ծնաւ Թամար Յուդայի : Եւ առ Բոոս զՀռութ և եղև նմա 'ի կնութեան. և ծնաւ որդի : Եւ ասեն կանայք ցՆոոմի. օրհնեալ Տէր, որ ոչ քակեաց 'ի քէն այսօր զմերձաւորիչն, անուանել զանուն քո 'ի մէջ Իսրայէլի : Եւ եղիցի քեզ 'ի դարձուցանել զոգին, 'ի կերակրել զծերութիւն քո : Եւ առ Նոոմի զմանուկն, և եդ 'ի ծոց իւրում. և եղև նմա դայեակ : Եւ կոչեցին դրացիքն և ասեն. ծնաւ որդի Նոոմիայ. և կոչեցին զանուն նորա Ովբէթ. նա է հայր Յեսսիայ հօր Դաւթի :

Սաուղ թագաւորէ ի վերայ Իսրայէլի :

Եւ էր այր մի յորդւոցն Բենիամինի և անուն նորա Կիս : Եւ էր նորա որդի , և անուն նորա Սաուղ , այր բարի և անձնեայ և ոչ գոյր յորդիսն Իսրայէլի այր լաւ քան զնա . ուսովք չափ ի վեր բարձր քան զամենայն այր երկրին : Եւ կորեան էշք հօր Սաուղայ : Ասէ Կիս ցՍաուղ ցորդի իւր . առ ընդ քեզ մի ի մանկտւոյդ , և արիք երթայք խնդրեցէք զէշն . և գնացին և անցին ընդ լեառն Եփրեմի : Եւ անցին ընդ լեառն Սարիսա , և ոչ գտին . և անցին ընդ երկիրն Սաղիմայ՝ Ի. ոչ ուրեք էին , և անցին ընդ երկիրն յԵմինացւոյն և ոչ գտին : Եւ իբրև եկին ի Սիփ . ասէ Սաուղ ցպատանեակն իւր որ ընդ նմա . Եկ դարձցուք անդրէն , գուցէ թողեալ հօր մերոյ զէշն , և զմէնք հոգասցէ : Եւ ասէ ցնա պատանին . ահա այր Աստուծոյ է ի քաղաքիս յայսմիկ այր փառաւոր , և զամենայն զոր ինչ խօսիցի լինելով լիցի . և արդ երթիցուք անդր , զի պատմեսցէ մեզ զճանապարհս մեր և գնասցուք : Եւ ասէ Սաուղ ցպատանին որ ընդ նմա . ահա

երթայցեմք ։ և չոգան 'ի քաղաքն ուր էր այրն Աստուծոյ ։ Եւ մինչդեռ ելանէին ընդ զառ'ի վերս քաղաքին , գտին նոքա աղջկունս որք ելանէին հանել ջուր ։ և ասեն ցնոսա ։ Եթէ գուցէ ասա տեսանող ։ Պատասխանի ետուն նոցա աղջկունքն և ասեն ։ ահաւասիկ առաջի ձեր այդր արդ արագեցէք ։

Եւ ելին 'ի քաղաքն ։ և իբրև մտին նոքա 'ի քաղաքամէջն ։ և ահա Սամուէլ եկ ընդառաջ նոցա երթալ 'ի Բամայ ։ Եւ Սամուէլ ետես զՍաւուղ ։ և ասէ Տէր ցնա ։ ահաւադիկ է այրն զորմէ ասացի քեզ եթէ նա իշխեսցէ ժողովրդեան իմում ։ Եւ մատեաւ Սաւուղ առ Սամուէլ 'ի մէջ քաղաքին և ասէ պատմեա ինձ ո՞ր տուն իցէ տեսանողին ։ Պատասխանի ետ Սամուէլ և ասէ ցՍաւուղ ։ ես ինքնին իսկ եմ ։ ել առաջի իմ 'ի Բամայ և կերիցես ընդիս այսօր ։ և արձակեցից զքեզ վաղիւ ։ և զամենայն ինչ որ 'ի սրտի քումէ՝ պատմեցից քեզ ։ Եւ վասն իշոցն երեքօրէից կորուսեալոց մի՝ ինչ ածեր զմտաւ ։ քանզի գտաեալ են ։ Եւ մինչդեռ իջանէին նոքա յեզր քաղաքին , ասէ Սամուէլ ցՍաւուղ ։ ասա՛ ցպատանիդ և անցցէ յառաջ քան զմեզ ։ և

անց ։ և դու կացցես այսօր ասա և լուիցես զպատգամս Տեառն ։ Եւ առ Սամուէլ զսըրուակն իւղոյ և եհեղ ի գլուխ նորա ։ և համբուրեաց զնա , և ասէ ցնա ։ ահա ապաքէն օծ զքեզ Տէր ի վերայ ժառանգութեան ։ Եւ ժողովեաց Սամուէլ զամենայն ժողովուրդն առ Տէր ի Մասեփաթ ։ Եւ ասէ Սամուէլ ցամենայն ժողովուրդն ։ եթէ տեսանիցէք զոր ընտրեաց իւր Տէր , զի ոչ գոյ նման դորա յամենեսին ի ձեզ ։ Եւ ծանեան ամենայն ժողովուրդն և ասեն կեցցէ արքայ ։ Եւ ասէ Սամուէլ ժողովրդեանն զկրաւունս թագաւորին ։ և գրեաց ի մատեանի , և եդ առաջի Տեառն ։ Եւ արձակեաց Սամուէլ զամենայն ժողովուրդն ։ և գնաց իւրաքանչիւրոք ի տեղի իւր ։

Քաջութիւն Յովնաթանայ ։

Եւ եհաս Սաւուղայ թագաւորել ի վերայ Իսրայէլի ։ և տայր պատերազմ շուրջ ընդ ամենայն թշնամիս իւր ։ և ընդ Մովաբայ , և ընդ որդիսն Ամմնայ ։ և ընդ որդիսըն Եդովմայ ։ և ընդ այլազգիսն յանդի-

ման Բեթ ովրայ և ուր շրջէր փրկէր և առ-
նէր զօրութիւնս սատանիկս : Եւ էին որդիք
Սաւուղայ . Յովնաթան , և Յեսուբ , և
Մեղքիսուէ : Եւ էր պատերազմ սատանիկ
ընդ այլազգիսն զամենայն աւուրս Սաւուղայ .
և տեսեալ Սաւուղայ զամենայն որդի զօրու-
թեան , ժողովեաց զնոսա առ ինքն : Եւ
ասէ Յովնաթան ցպատանին ցկապարճակիրն
իւր . եկ անցցուք 'ի կիրճս անթլատիցն
այնոցիկ . թերևս արասցէ Լինչ մեզ Տէր . զի ոչ
է խտիր Տեառն ապրեցուցանել բազմաք կամ
սակաւուք : Եւ ասէ ցնա կապարճակիրն իւր .
արա զամենայն ինչ յոր և յօժարեսցի սիրտ
քո . ահաւասիկ ես ընդ քեզ եմ , որպէս սիրտ
քո սիրտ իմ : Եւ ասէ Յովնաթան . ահա-
ւասիկ մեք անցանեմք առ արան . և յտեսի-
թեարս երթիցուք առ նոսա : Եթէ ասիցեն
ցմեզ . 'ի բաց կացէք այդ ի մինչև պատմեսցուք
ինչ ձեզ . զտեղի կալցուք և մի՛ երկիցուք առ նո-
սա: Այսպէս եթէ ասիցեն ելէք առ մեզ . երթիցուք
զի մատնեաց զնոսա Տէր 'ի ձեռս մեր : Այս
լիցի մեզ նշանակ :
Եւ մտին երկոքեան 'ի կիրճս այլազգեացն .
եւ ասեն այլազգիքն ահա Եբրայեցիքն ե-

լանեն 'ի ծածկոյ իւրեանց, ուր թաքուցեալ
էին : Եւ պատասխանի ետուն արք կրճոյն և
ասեն ցՅովնաթան և ցկապարճակիրն . ելէք
առ մեզ և ծանուսցուք ձեզ բանս : Եւ ասէ
Յովնաթան ցկապարճակիրն իւր, Եկ զկնի իմ :
Եւ ելՅովնաթան յափսիթերս, և կապար-
ճակիրն նորա ընդ նմա, հայեցան ընդդէմ
Յովնաթանու, և եհար զնոսա . և կապար-
ճակիրն տայր ստէպ զհետ նորա : Եւ եղեն
առաջին հարուածքն՝ զոր եհար զնոսա Յով-
նաթան և կապարճակիրն իւր իբրև քսան ա-
րանց : Եւ ել Սաուղ և ամենայն ժողովուրդ-
քն որ ընդ նմա, և եկին մինչև ցպատե-
րազմն : Եւ ահա եղև սուր առն 'ի վերայ ըն-
կերի իւրոյ, և աղմուկ մեծ յոյժ : Եւ ծառայ
քին որ էին ընդ այլազգիսն որք լեալ էին ընդ
բանակին, դարձան անդրէն լինել ընդ Իս-
րայէլն, և ընդ Սաուղայ և ընդ Յովնաթա-
նու : Եւ ամենայն Իսրայէլ որ թաքուցեալ
էին 'ի լերինն Եփրեմի, իբրև լուան թէ
փախեան այլազգիքն . խմբեցան նոքա ևս
զհետ նոցա 'ի պատերազմ: Եւ փրկեաց Տէր
յաւուր յայնմիկ զԻսրայէլ . և պատերազմն
պատեցաւ զԲեթաւնաւ :

Յովնաթան որդի Դաւթի :

Եւ եղև իբրև վախճանեաց զմօսէն ընդ Սաւուղայ և ոգի Յովնաթանու կապեցաւ ընդ ոգւոյն Դաւթի . և սիրեաց զնա Յովնաթան ըստ անձին իւրում : Եւ առ զնա առ իւր յաւուր յայնմիկ . և ոչ ետ նմա դառնալ ի տուն հօր իւրոյ : Եւ ուխտեաց ընդ նմա Յովնաթան ուխտ առ ի սիրել զնա ըստ անձին իւրում : Եւ մերկացաւ Յովնաթան զլոգիին որ զի՛ր էր և ետ զայն Դաւթի , և զվարսպանակս իւր մինչև ցսուսեր իւր , և ցաղեղն իւր և ցկամար իւր և ցշապարան իւր : Եւ երթայր Դաւիթ ամենայն ուրեք ուր և առաքէր զնա Սաւուղ , և իմաստնանայր . Եւ կացոյց զնա Սաւուղ ի վերայ արանց պատերազմի . և հաճոյ եղև առաջի աչաց ամենայն ժողովրդեանն . նա՝ առաջի աչաց ծառայից Սաւուղայ : Եւ եղև ի մտանել նոցա իբրև դարձաւ Դաւիթ ի սպանանելոյ զայլազգիան ելին պարաւոր յամենայն քաղաքացն Իսրայէլի երգել և պար առնուլ ընդ առաջ Սաւուղայ արքայի , թմբկօք և ուրախութեամբ և ծնծղայիւք :

Եւ նուագէին կանայք խաղալիկք և ասէին ։ եհար Սաւուղ զհազարս , և Դաւիթ ըզբիւրս : Եւ զչարեցաւ Սաւուղ բանիցն այնոցիկ և ասէ ։ Դաւթի ետուն զբիւրս և ինձ ետուն զհազարս : Եւ եղև ի վաղիւ սնդր , և հարաւ այս չար յաստուծոյ ի վերայ Սաւուղայ , և մարգարէանայր ի մէջ տան իւրոյ ։ և Դաւիթ երգէր ձեռամբ իւրով որպէս հանապազն : Եւ գեղարդն ի ձեռին Սաւուղայ : Եւ ասէ հարիցց կարեցից ընդ որմն ։ և ձգեաց Սաւուղ ։ և խոյս ետ յերեսաց նորա երկիցս : Եւ էր Դաւիթ խելամուտ յամենայն ճանապարհսն իւր ։ և Տէր էր ընդ նմա : Եւ սիրեաց Մեղքող դուստր Սաւուղայ ըզ Դաւիթ ։ և ասդ եղև Սաւուղայ և հաճոյ թուեցաւ բանն յաչս նորա : Եւ ասէ Սաւուղ տաց զնա նմա ի կնութիւն , և եղիցի նմա գայթակղութիւն ։ և էր ի վերայ Սաւուղայ ձեռն այլազգեացն : Եւ պատուիրեաց Սաւուղ ծառայից իւրոց և ասէ ։ խօսեցարուք դուք լուռելեայն ընդ Դաւիթ և ասացէք՝ ահա արքայ հաճեալ է ընդ քեզ , և ամենայն արք նորա սիրեն զքեզ , և արդ՝ փեսայացիր դու արքայի : Եւ խօսեցան ծա-

ռայքն Սաուղայ ըստ բանիցս այսոցիկ : Եւ ասէ Դաւիթի թեթև՝ իցէ յաչս ձեր փեսայանալ արքայի . և ես այր մի տառապեալ եմ և ոչ փառաւոր : Եւ պատմեցին Սաուղայ ծառայքն իւր ըստ բանիցս այսոցիկ՝ զոր խօսեցաւ Դաւիթ :

Եւ ասէ Սաուղ , ասասջիք ցԴաւիթ . Թէ ոչ կամի արքայ վարձանս , այլ հարիւր անթլպատութիւն այլազգեաց , առնուլ վրէժ ի թշնամեաց արքայի . և Սաուղ խորհէր արկանել զնա ի ձեռս այլազգեացն : Եւ պատմեցին Դաւիթի ծառայքն Սաուղայ ըստ բանս զայսոսիկ . և հաճոյ թուեցաւ Դաւիթի փեսայանալ արքայի : Եւ յարեաւ Դաւիթ և գնաց ինքն և արք իւր , և եհար յայլազգեացն արս երկերիւր . և եբեր զանթլպատութիւնս նոցա , և ելից զնոսա առաջի արքայի . և փեսայացաւ արքայի : Եւ ետ Սաուղ զմեղքոյ դուստր իւր նմա ինուիթեան : Եւ տեսեալ Սաուղ և ծանեաւ Եթէ Տէր է ընդ նմա , և ամենայն Իսրայէլ սիրէր . և յաւելեալ ակնածել ի Դաւիթէ . և եղև Սաուղ թշնամութեամբ ընդ Դաւիթի զամենայն աւուրս նորա :

Եւ խօսեցաւ Սաուղ ընդ Յովնաթանու որդւոյ իւրում, և ընդ ամենայն ծառայս իւր սպանանել զԴաւիթ : Եւ պատմեաց Յովնաթան Դաւթի և ասէ . Հայր իմ ինդրէ սպանանել . զգէշ լեր վաղիւ ընդ առաւօտն . և թագջիր , և նստիջիր ընդ թագստեամբ : Եւ ես ելից և կացից մօտ առ հօր իմում յանդիման ուր և իցես դու անդ . և ես խօսեցայց վասն քո ընդ հօր իմում . և տեսից եթէ զինչ իցէ և պատմեցից քեզ : Եւ խօսեցաւ Յովնաթան վասն Դաւթի բանս բարիս ընդ Սաուղայ հօր իւրում , և ասէ մի՛ մեղիցէ արքայ 'ի ծառայ իւր Դաւիթ . զի ոչ ինչ մեղաւ նա քեզ . և գործք նորա բարութեամբ են յոյժ : Եւ եդ զանձն իւր 'ի ձեռին իւրում, և եհար զայլազգին . և արար փրկութիւն մեծ . և ամենայն Իսրայէլ տեսին և ուրախ եղէն . և ընդէ՞ր մեղանչիցես յարիւն արդար՝ սպանանել զԴաւիթ տարապարտուց : Եւ լուաւ Սաուղ ձայնի Յովնաթանու , և երդուաւ Սաուղ և ասէ . կենդանի է Տէր եթէ մեռանիցի : Եւ կոչեաց Յովնաթան զԴաւիթ , և պատմեաց Յովնաթան զամենայն բանս զայսոսիկ . և տարաւ

գնա առ Սաուղ. և էր առաջի նորա որպէս յերէկն և յեռանդն։

Եւ յաւել ևս լինել պատերազմ, և զօրացաւ Դաւիթ տալ պատերազմ ընդ այլազգիսն. և եհար ի նոցանէ հարուածս մեծամեծս յոյժ. և փախեան յերեսաց նորա։ Եւ եղև այս չար ի վերայ Սաուղայ. և ինքն նստէր ի տան, և գեղարդն ի ձեռին նորա. և Դաւիթ երգէր ձեռամբ իւրովք։ Եւ խնդրէր Սաուղ հարկանել զգեղարդն ընդ Դաւիթ և ընդ որմն. և խոյսեաց յերեսաց Սաուղայ, և եհար զգեղարդն յորմն և Դաւիթ ել գնաց և զերծաւ։ Եւ եղև ի գիշերին յայնմիկ առաքեաց Սաուղ հրեշտա՛ս ի տուն Դաւթի պահել զնա. զի սպանցէ զնա ընդ առաւօտն։ Եւ պատմեաց Դաւթի Մեղքող կին իւր և ասէ. եթէ ոչ ապրեցուցես զանձն քո ի գիշերիս յայսմիկ վաղիւ մեռանելոց ես։ Եւ իջոյց Մեղքող զԴաւիթ ընդ պատուհանն, և փախեաւ գնաց և ապրեցաւ։ Եւ առ Մեղքող պաճուճապատանս, Ի. եդ ի վերայ մահճացն և լերարդ այծեաց ակծիկ մազոյ եդ ի անորի և ծածկեաց զնա հանդերձիւ։ Եւ առաքեաց

Սաւուղ հրեշտակս ունել զԴաւիթ ։ և ասեն թէ խօթ է ։ Եւ առաքեաց ի վերայ դարձեալ և ասէ ։ Հանէք զնա մահճաւք առ իս և սպանից զնա ։

Եւ եկին հրեշտակքն , և ահա պաճուճապատանքն ի վերայ մահճացն , և լերարդ այծեաց և կծիկ մազոյ ի սնարս ։ Եւ ասէ Սաւուղ ցՄեղքող ընդէ՞ր խաբեցեր զիս և արձակեցեր զթշնամին իմ և ապրեցաւ ։ Եւ ասէ Մեղքող ցՍաւուղ ինքն ասաց թէ արձակեա՛ զիս ։ ապա թէ ոչ սպանանեմ զքեզ ։ Եւ Դաւիթ փախեաւ և ապրեցաւ , և եկն առ Սամուէլ յԱրիմայեմ , և պատմեաց նմա զամենայն ինչ զոր արարն նմա Սաւուղ ։ Եւ գնացին Սամուէլ և Դաւիթ և նստան ի Նաւաթ Հռամայ ։ Ազգ եղև Սաւուղայ և ասեն ։ ահա Դաւիթ ի Նաւաթ Հռամայ է ։ Եւ փախեաւ Դաւիթ ի Նաւաթայ Հռամայ , և եկն խօսեցաւ առաջի Յովնաթանու և ասէ ։ զի՞նչ արարի , և զի՞նչ վնաս է իմ , և զի՞նչ մեղայ առաջի հօր քոյ ։ զի խնդրէ զանձն իմ ։

Եւ ասէ ցնա Յովնաթան ։ քա՛ւ քեզ , ոչ մեռանիցիս ։ զի ահա ոչ առնէ հայր իմ բան

մի մեծ կամ փոքր զի ոչ յայտնէ յունկն իմ. և զնա՞ լուգ ի՞ցէ. զի թաքուցանի՞ցէ յինէն՝ զբանդ զայդ. չէ՞ այդպէս։ Պատասխանի՝ ետ Դաւիթ և ասէ ցՅովնաթան. գիտելով գիտէ հայրն քո, զի գտի շնորհս առաջի քոյ, և ասէ թէ՝ մի՛ գիտասցէ Յովնաթան զուցէ ոչ կամիցի. այլ կենդանի է Տէր և կենդանի է անձն քո. զի որպէս ասացի վճարեալ ընդ իս և ընդ հայրն քո մինչև ցմահ։ Եւ ասէ Յովնաթան ցԴաւիթ. զի՞նչ ցանկայ անձն քոյ, և արարիցէ քեզ։ Ասէ Դաւիթ. ահա վաղիւ ամսամուտ է, և ես նստելով՝ ոչ նստայց ուտել հաց ընդ արքայի. և առաքեսցես զիս՝ և թաքեայց՝ ի դաշտի աստ մինչև ցերեկ աւուրն երրորդի։ Եթէ առնելով առնիցէ այր զինէն հայրն քո, ասասցես եթէ հրաժարելով հրաժարեաց յինէն Դաւիթ երթալ մինչև ցԲեթղահէմ քաղաք իւր. զի զոհ աւուրց է անդ ամենայն ցեղին։ Եթէ ասասցէ բարւոք է, խաղաղութիւն է ծառայի քում. ապա եթէ խստիւ տայցէ պատասխանի, գիտասջիր եթէ վճարեալ չարութիւն առ՝ի նմանէ։ Եւ արասցես ողորմութիւն ընդ ծառայի քում. զի յուխտ

Տէտուն մաւծեր ընդ ծառայի քում, զու իսկ
սպան զիս, և ընդէ՞ր հասուցանես առ Հայր
քո։ Եւ ասէ Յովնաթան. քաւ լիցի քեզ.
զի եթէ գիտէլով գիտացից եթէ վճարեալ
է չարութիւն առ Հօրէ իմմէ գալ՝ի վերայ
քո՝ եթէ ոչ՝ի քաղաքն քո իսկ պատմեցից
քեզ։ Եւ ասէ Դաւիթ ցՅովնաթան՝ պատ-
մեսցէ ինձ եթէ խստիւ պատասխանի տայցէ
քեզ Հայր քո։ Եւ ասէ ցնա Յովնաթան.
վաղիւ ամսամուտ է և խնդրեսցիս. քանզի
խնդրեսցի աթոռ քո։ Եւ երեքօր նստեսցիս
և երեկեսցես՝ի տեղի ուր թագեարն յա-
ւուրն գործոյ. նստցիս առ երկաքաւդ այ-
գուիկ։ Եւ ես երեքկնեցից փքնօք յորս ա-
ծել և ձգել յամատարայն։ Եւ արձակեցից
զպատանեակն, և ասացից, երթ գտ՝ զքը-
քինն։ Եւ եթէ ասելով ասացից ցպատա-
նեակն. ՝ի քէն և այսր է փքինն. և այսր
առ զնա, եկեսջիր. զի խաղաղութիւն է քեզ
և չէն ինչբանք կենդանի է Տէր։ Ապա թէ
ասացից ցպատանին. ՝ի քէն և անդր է փքինն
գնասջիր. զի արձակեաց զքեզ Տէր։ Եւ թա-
քեաւ Դաւիթ յանդին. և ե՛հաս ամսամու-
տըն. և եմուտ արքայ՝ի սեղանակն ուտել հաց։

Եւ նստաւ արքայ յաթոռ իւր որպէս միանգամն և միւս անգամ ամենառատ յոմայեցոն և ժամանեաց Յովնաթան. և նստաւ Աբներ 'ի կողմանէ Սաւուղայ. և ինդրեցաւ տեղին Դաւթի: Ոչ խօսեցաւ Սաւուղ և ոչ ինչ յաւուր յայնմիկ: Եւ եղև 'ի վաղիւ ամսամտին յաւուրն երկրորդի ինդրեցաւ տեղին Դաւթի, և ասէ Սաւուղ ցՅովնաթան որդի իւր. զի՞ է զի ոչ եկն որդին Յեսսեայ երեկ և այսօր 'ի սեղանս: Պատասխանի ետ Յովնաթան և ասէ ցՍաւուղ, Հրաժարեաց յինէն երթալ 'ի Բեթղեհէմ: Եւ բարկացաւ Սաւուղ 'ի վերայ Յովնաթանու. և ասէ ցնա աղջկորդի անձնամատն, ես ոչ գիտեմ. զի դաշաւորես դու ընդ որդւոյն Յեսսեայ յամօթ քո: Զի զամենայն աւուր, որչափ որդին Յեսսեայ կենդանի է, ոչ հաստատեսցի թագաւորութիւն քո, որդ առաքեա՛ կա՛ղ զպատանին. զի որդի մահու է նա: Պատասխանի ետ Յովնաթան Սաւուղայ և ասէ ցնա. ընդ՞ի՞նչ մեռանիցի զի՞նչ գործեաց: Եւ վերացոյց Սաւուղ զգեղարդն 'ի վերայ Յովնաթանու սպանանել զնա. և գիտաց Յովնաթան թէ վճարեալ է չարութիւն հօր սպա-

նանել զԴաւիթ : Եւ զիմաց Յովնաթան 'ի սեղանոյ անտի ալտաքս բարկութեամբ և սրտմտութեամբ . զի բեկաւ վասն Դաւթի . զի վճարեաց չարութիւն վասն նորա :

Եւ եղև ընդ առաւօտն եկ Յովնաթան յանդն որպէս ժամագիր եղև Դաւթի 'ի վըկայութիւն . և մանուկ փոքրիկ ընդ նմա : Եւ ասէ ցպատանեակն , ընթա՛ գիա զփքինն զոր ձգեցից . և ընթացաւ պատանեակն . և նա ձգեաց զփքինն : Եւ չոքաւ պատանեակն մինչև ցտեղի փքինն զոր ձգեաց Յովնաթան . և ազաղակեաց Յովնաթան զկնի պատանեկին և ասէ 'ի քէն և անդր է փքինն փութացեալ արագեա՛ և մի՛ կացցես . և վազեաց մանուկն Յովնաթանու և եբեր առ Տէր իւր զփքինն : Եւ յարեաւ Դաւիթ առ ժամայն , և անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր , և երկիրեսպագ նմա երիցս անգամ , և համբուրեաց իւրաքանչիւր զընկեր իւր և եկաց իւրաքանչիւր 'ի վերայ ընկերի իւրոյ մինչև ցմեծ վախճան : Եւ ասէ Յովնաթան ցԴաւիթ . երթ 'ի խաղաղութիւն . և որպէս երդուաք մեք երկոքին յանուն Տեառն խօսեցաք և Տէր լիցի ընդ իս և

ընդ քեզ, և ի մէջ զաւակի իմոյ և ի մէջ զաւակի քո. մինչև յաւիտեան: Եւ յարեաւ Դաւիթ և գնաց. և Յովնաթան եմուտ ի քաղաքն:

Սաւուղ հաշտի ընդ Դաւիթ:

Եւ եղև իբրև դարձաւ Սաւուղ յայլազգեացն, ասդ եղև նմա և ասեն. ահաւանիկ Դաւիթ յանապատին Գադդայ է: Եւ առ ընդ իւր երիս հազարս արանց ընտրելոց յամենայն Իսրայէլէ, և գնաց խնդրել զԴաւիթ. և զարսն նորա յանդիման Եղիմայ որսոյն եղջերուաց: Եւ եկն ի պատակս հօտիցն որ առ ճանապարհսն. և անդ էր այր մի, և եմուտ Սաւուղ հանդչել. և Դաւիթ և արք նորա նստէին ի ներքնամի այրին: Եւ ասեն արք Դաւթի ցնա. ահա այս օր է, զորմէ ասաց Տէր ցքեզ. մատնել զթշնամիս քո ի ձեռս քո. և արասցես ընդ նա, որպէս և հաճոյ թուի յաչս քո: Եւ յարեաւ Դաւիթ և եհատ զտտուն լոգկին Սաւուղայ գաղտ: Եւ եղև յետ այնորիկ, զղջացոյց

զԴաւիթ սիրտն իւր ։ զի ես հատ զտտուն լոդ-
կի նորա ։ Եւ ասէ դաւիթ ցարս իւր ։ քա՛ւ
լիցի ինձ ի Տեառնէ , զի արարի բանդ զայդ
տեառն իմում օծելոյ Տեառն , մխել ի նա
զձեռս իմ ։ զի օծեալ Տեառն է ։

Եւ հաձեաց Դաւիթ զարսն իւր բանիւք ,
և ոչ ետ նոցա յառնել և սպանանել զՍա-
ուուղ ։ Եւ յարեաւ Սաուուղ յայրէ անտի և էջ
ի ճանապարհն ։ Եւ յարեաւ Դաւիթ զկնի
նորա ել յայրէ անտի ։ և աղաղակեաց
Դաւիթ զհետ նորա և ասէ ։ տէր իմ արքայ
և հայեցար Սաուուղ ի թիկունս իւր , և
անկաւ Դաւիթ ի վերայ երեսաց իւրոց յեր-
կիր , և երկիր եպագ նմա ։ Եւ ասէ Դա-
ւիթ ցՍաուուղ ։ ընդէ՞ր լսես բանից ժողովր-
դեանն՝ որ ասեն Դաւիթ խնդրէ զանձն քո ։
Ահա յաւուր յայսմիկ տեսին աչք քո , և
ո՞ւրպէս մատնեաց զքեզ Տէր այսօր ի ձեռս
իմ յայրի անդ , և ոչ կամեցայ սպանանել
զքեզ ։ և խնայեցի ի քեզ և ասացի թէ ոչ
ձգեցից զձեռն իմ ի տէր իմ , զի օծեալ Տեառն
է նա ։ Եւ տես հայր իմ։ ահա տտուն
լոդկին քո ի ձեռին իմում։ ես հատի ըզ-
տտուն հանդերձի քո , և ոչ սպանի զքեզ ։

Եւ ծանիր և տես այսօր • զի ոչ գոյ 'ի ձեռին իմում չարութիւն , և ոչ արհամարհութիւն , և ոչ ամբարշտութիւն , ոչ մեղայ ինչ քեզ • և պաշարեցեր զոնձն իմ առնուլ զնա :

Դա՛մ արասցէ Տէր ընդիս և ընդ քեզ • և առցէ զվրէժ իմ 'ի քէն , և ձեռն իմ մի՛ եղիցի 'ի քեզ : Եւ իբրև կատարեաց Դաւիթ խօսել զբանսն զայսոսիկ ընդ Սաուղայ , և ասէ Սաուղ • այդ քո՞ ձայնն իցէ որդեակ իմ Դաւիթ : Եւ ամբարձ Սաուղ զձայն իւր և ելաց : Եւ ասէ Սաուղ ցԴաւիթ , դու արդար ես քան զիս • զի դու հատուցեր ինձ բարիս • և ես հատուցի քեզ չարիս : Եւ դու պատմեցեր ինձ այսօր զոր արարեր ինձ բարիս • և երթէ ո՞րպէս փակեաց զիս Տէր այսօր 'ի ձեռս քո • և ոչ սպաներ զիս : Զի որպէս գտանէ ոք զթշնամիս իւր 'ի նեղութեան , և արձակիցէ զնա բարեաւ ընդ ճանապարհ , և Տէր հատուսցէ նմա բարիս • որպէս դու արարեր այսօր : Եւ արդ գիտեմ • զի թագաւորելով թագաւորեսցես , և հաստատեսցի 'ի ձեռս քո թագաւորութիւն Իսրայէլի :

Մասն Սաւուղայ ։

Եւ այլազգիքն պատերազմէին ընդ Իսրայէլի և փախեան արք յերեսաց այլազգեացն և անկանէին վիրաւորք ի լերինն Գիլբուայ ։ Եւ հասին այլազգիքն ի Սաւուղ և յորդիս նորա , և հարին այլազգիքն զՅոնաթան և զԱմինադաբ և զՄելքիսուէ զորդիս Սաւուղայ ։ Եւ ծանրացաւ պատերազմ ի վերայ Սաւուղայ ։ և գտին զնա արք կորովիք աղեղնաւորք և վիրաւորեցաւ ընդ կարաւանդէն ի ներքս ։ Եւ ասէ Սաւուղ ցկապարճակիրն իւր ։ մերկեա զսուր քո և խոցեա զիս նովաւ ։ գուցէ գայցեն անթլպատքն և խոցոտիցեն զիս , և խաղայցեն զինև ։ Ոչ կամեցաւ կապարճակիրն , քանզի երկեաւ յոյժ ։ և առ Սաւուղ զսուսերն իւր և անկաւ ի վերայ նորա ։ Իբրև ետես կապարճակիրն եթէ մեռաւ Սաւուղ անկաւ և նա ի վերայ սուսերոյ իւրոյ և մեռաւ ընդ նմա ։ Եւ մեռաւ Սաւուղ և երեքեան որդիք նորա և կապարճակիրն իւր ։ և ամենայն արք նորա յաւուր յայնմիկ ի միասին ։ Եւ իբրև տեսին արք Իսրայէլի որ յայնկոյս յովտացն , և որ յայնկոյս

Յորդանանու . եթէ փախեան տրք Իսրայէլի , և թէ մեռաւ Սաւուղ , և որդիք Նորա՝ թողին զքաղաքս իւրեանց և փախեան . և այլազգիքն բնակեցան 'ի նոսա : Եւ եղև 'ի վաղիւ անդր եկին այլազգիքն մերկացուցանել զդիակունսն . գտին զՍաւուղ և զերիս որդիս նորա անկեալս 'ի լերին Գեղբուայ : Եւ հատին զգլուխ նորա , և առաքեցին յերկիրսն այլազգեաց շուրջանակի ուխտաւորս 'ի կուռս իւրեանց 'ի ժողովուրդըս : Եւ եդին զկարասին նորա Յաստարտիոն , և զմարմինս նոցա կախեցին զփայտէ 'ի Բեթսանա : Եւ լուան զնոցանէ ժողովուրք Յաբիսայ Գաղաադացւոց զոր ինչ արարին այլազգիքն ընդ Սաւուղ : Եւ յարեան ամենայն այր զօրութեան , և գնացին զգիշերն ամենայն . և առին զմարմինն Սաւուղայ և մարմինն Յովնաթանու որդւոյ նորա 'ի պարսպէն Բեթանայ և բերին զնոսա Յաբիս և այրեցին զնոսա անդ : Եւ առին զոսկերս նոցա և թաղեցին զնոսա անդ անդիման յԱբիսայ և պահեցին զեօթն օր :

Ողբ Դաւթայ 'ի Սաւուղ և Յովնաթան :

Եւ եղև յետ մահուանն Սաւուղայ , և Դաւիթ դարձաւ 'ի Հարկանելոյ զԱմաղէկ և անդ այր եհաս 'ի բանակէ զօրուն և հանդերձք իւր պատառեալ , և հող զգլխով իւրով : Եւ ասէ ցնա Դաւիթ . ուստի՞ գաս դու . և ասէ ցնա 'ի բանակէն Իսրայէլի զերծեալ եմ ես : Եւ ասէ ցնա Դաւիթ . զի՞նչ գրոյց է պատմեա՛ ինձ : Եւ ասէ . փախեաւ ժողովուրդն 'ի պատերազմէն , և անկան բազումք 'ի ժողովրդոց և մեռան : Եւ ողբաց Դաւիթ զողբս զայս 'ի վերայ Սաւուղայ և 'ի վերայ Յովնաթանու որդւոյ նորա : Արձանացի՛ր Իսրայէլ 'ի վերայ բլրոցն 'ի բարձունս քոց վիրաւորաց . զի՞արդ անկան զօրաւորքն : Մի՛ պատմէք 'ի Գէթ և մի՛ տայք զայս աւետիս յերս Ասկաղոնի . զի մի՛ երբէք ուրախ լիցին դստերք այլազգեացն , և մի՛ ցնծասցեն դստերք անթլփատիցն : Լեռինք Դեռբուայ մի՛ իջցէ 'ի ձեզ ցօղ . և մի՛ եկեսցէ 'ի վերայ ձեր անձրև յանդաստանս պտղոց . զի անդ ապականեցաւ ասպար զօրաւորաց . վահան Սաւուղայ ոչ օծաւ իւղով ;

Յարեն վիրաւորաց ի Ճարպոյ զօրաւորաց աղեղն Յովնաթանու ոչ դարձուցաւ յետս, և սուրն Սաւուղայ ոչ ամիսփեցաւ դատարկացեալ: Սաւուղ և Յովնաթան սիրելիք և գեղեցիկք և վայելուչք, չմեկնեալք ի կենդանութեան իւրեանց, և ոչ մեկնեցան ի մահուան իւրեանց, թեթևագոյն քան զարծուի, զօրացան առաւել քան զառիւծունս: Դստերք Իսրայէլի լացէք ի վերայ Սաւուղայ, լացէք ի վերայ նորա, որ զգեցուցանէր զձեզ կարմիրս հանդերձ զարդուց ձերոց, որ արկանէր զարդս ոսկւոյ ի վերայ հանդերձից ձերոց: Զի՞նչ անկան զօրաւորքն ի մէջ պատերազմի, Յովնաթան ի վերայ բարձանց քոց վիրաւոր: Յա՛ւ է ինձ ի վերայ քո եղբայր իմ Յովնաթան, գեղեցկացար ինձ յոյժ, զարմանալի եղև սէր քո ինձ քան զսէր կանանց: Զի՞նչ անկան զօրաւորքն, և կորեան անօրէք պատերազմականք:

Թագաւորք Դաւիթ ի վերայ Իսրայէլի:

Եւ եղև յետ այնորիկ եհարց Դաւիթ ի Տէրանէ և ասէ Եթէ ելանիցեմ՞ ի մի ի քա-

ղաքացն Յուդայ . և ասէ ցնա Տէր՝ ել : Եւ ասէ Դաւիթ յո՞ ելից . և ասէ՝ի Քեբրոն : Եւ եկին արք Հրէաստանի և օծին անդ ըզ-Դաւիթ՝ի թագաւոր : Եւ էր պատերազմ սաստիկ՝ի մէջ տանն Սաւուղայ և՝ի մէջ տանն Դաւթայ . և տունն Դաւթի երթայր և զօրանայր, և տունն Սաւուղայ երթայր և տկարանայր : Եւ եկին ամենայն ցեղքն Իսրայէլի առ Դաւիթ՝ի Քեբրոն . խօսեցան և ասեն ահաւասիկ ոսկերք քո եմք և մարմին քո եմք : Եւ յէրէկն և յեռանդն մինչ էր Սաւուղ թագաւոր՝ի վերայ մեր . դու էիր՝ որ մուծանէիր և հանէիր զԻսրայէլ . և ասաց քեզ Տէր հովուեսցես ժողովրդեան իմոյ Իսրայէլի և դու լիցիս յառաջնորդ՝ի վերայ Իսրայէլի : Որդի ամաց երեսնից Դաւիթ՝ի թագաւորել իւրում . և քառասուն ամ թագաւորեաց :

Եւ չոգաւ Դաւիթ և արք նորա յԵրուսաղէմ առ Յեբուսացին բնակեալ յերկրին . և ասացաւ Դաւթի թէ ոչ մտցես դու այսր . քանզի ընդդէմ դարձան կոյր և կաղք՝ և ասեն . մի՛ մտցես այսր Դաւիթ : Եւ առ Դաւիթ զՍիոն և զամրոց նորա . այն է քաղաք

Դաւթի : Եւ երթալով երթայր Դաւիթ և մնծանայր . և Տէր ամենակալ էր ընդ նմա : Եւ առաքեաց Քերամ արքայ Տիւրոսի հրեշտակս առ Դաւիթ և փայտս եղևնեայ , և հիւսունս փայտից , և ճարտարապետս քարանց . և շինեցին տուն Դաւթի : Եւ գիտաց Դաւիթ եթէ հաստատեաց զնա Տէր թագաւոր 'ի վերայ Իսրայէլի . և թէ բարձրացաւ թագաւորութիւն վասն ժողովրդեան նորա Իսրայէլի : Եւ առ ևս Դաւիթ կանայս և հարսս յԵրուսաղիմէ յետ գտանելոյ նորա Քեբրոնէ . և եղեն Դաւթի ևս այլ ևս ուստերք և դստերք : Եւ այս են անուանք ծնելոց որդւոց նորա յԵրուսաղէմ . Սամաաթ Յեսիբաթ , Նաթան , Սողոմոն ' Յեբար , Թեմեսուս , Ելփալատ , Նագեթ , Նոփեկ , Յենաթան , Եղիսամա , Բաղիդատ Եղիփալէտ :

Թագաւորէ Սողոմն :

Եւ արքայ Դաւիթ ծերացեալ և անցել զաւուրքք . և ծածկէին զնա հանդերձիւք , և ոչ ջերմնայր : Եւ Ադոնիա որդի Ագիթայ

ամբառնայր ։ ասէ՝ ես թագաւորեցից ։ Ե. արար իւր կառս և հեծեալս , և յիսուն այր սուրհանդակս ընթանալ առաջի նորա : Եւ հայրն ոչ արգելոյր զնա ։ և ոչ երբէք ասէր թէ ընդէ՞ր արարեր զայդ : Եւ եղեն բանք նորա ընդ Յովաբայ որդւոյ Շարոհեայ , և ընդ Աբիաթարայ քահանայի ։ և օգնէին Ադոնիայ : Եւ Սադովք քահանայ , և Բանայ որդի Յովիդայեայ՝ և Նաթան մարգարէ և Սեմեէ , և Հռէի , և որդիք զօրաւորք Դաւթի չէին զհետ Ադոնիայ : Եւ եղեն Ադոնիայ ոչխարս , և եզինս և գառինս , առ վիմին Սողեթեայ որ է մօտ յերիկրն Ռովգեղայ ։ և կոչեաց զամենայն եղբարս իւր որդիս արքայի : Եւ զՆաթան մարգարէ , և զԲանայիա , և զզօրաւորս , և զՍողոմոն զեղբայր իւր ոչ կոչեաց : Եւ խօսեցաւ Նաթան մարգարէ ընդ Բերսաբեայ մօր Սողոմոնի և ասէ՝ ո՞չ լուար ։ զի թագաւորեաց Ադոնիա որդի Ագիթայ ։ և Տէր մեր արքայ Դաւիթ ոչ գիտաց : Եւ արդ եկ տաց քեզ խրատ , և ապրեցուսցես զանձն քո և զանձն որդւոյ քո Սողոմոնի : Երթ մուտ առ արքայ Դաւիթ և խօսեսցիս ընդ նմա և ասասցես ։ մի՞ դու

արքայ երդուար աղախնոյ քում և ասացեր թէ Սողոմոն որդի քո թագաւորեսցէ յետ իմ և նա նստցի յաթոռս իմ, և այն զինչ է . զի թագաւորեաց Ադոնիա :

Եւ եմուտ Բերսաբէէ առ արքայ 'ի սենեակն, և արքայ ծերացեալ էր յոյժ : Եւ խոնարհեցաւ Բերսաբէէ եւ երկիր եպագ արքայի . և ասէ արքայ զի՞ է քեզ : Եւ նա ասէ . տէր իմ արքայ . դու երդուար 'ի Տէր Աստուած քո աղախնոյ քում և ասացեր . թէ Սողոմոն որդի քո թագաւորեսցէ յետ իմ, և նա նստցի յաթոռս իմ : Եւ ահա Ադոնիա թագաւորեաց . և դու Տէր իմ արքայ ոչ գիտացեր : Եւ Տէր իմ արքայ աչք ամենայն Իսրայէլի 'ի քեզ են, պատմել նոցա թէ ո՞վ նստցի յաթոռս Տեառն իմոյ արքայի յետ նորա : Եւ եղիցի եթէ ննջեսցէ տէր իմ արքայ ընդ հարս իւր, և լինիցիմ ես և որդի իմ Սողոմոն ՁԱասապարտք : Եւ մինչդեռ նա խօսէր ընդ արքայի, եկն Նաթան մարգարէ և եմուտ առաջի արքայի, և երկիր եպագ արքայի 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր : Եւ ասէ Նաթան . տէր իմ արքայ դո՞ւ ասացեր եթէ Ադոնիա թագաւորեսցէ զկնի

իմ, և նստցի յաթոռ իմում: Զի էջ այսօր և եղէն արքառս և ոչխարս և գառինս բազումս, և կոչեաց զամենայն որդիսն արքայի և զիշխանսն զօրուն, և զԵբիւթար քահանայ. և ահա ուտեն և բմպեն առաջի նորա և ասեն կեցցէ արքայ Ադոնիա: Եւ զիս զծառայ քո. և զՍադովկ քահանայ՝ և զԲանիա որդի Յովիդիայ, և զՍողոմոն զծառայ քո ոչ կոչեաց: Եթէ ի ձեռն տեառն իմոյ արքայի եղև բանն այն. և ոչ ցուցեր ծառայի քում թէ ո՞ նստցի յաթոռ տեառն իմոյ արքայի յետ նորա:

Պատասխանի ետ Դաւիթ արքայ և ասէ. կոչեցէք առիս զԲերսաբէէ և եմուտ առաջի նորա: Եւ երդուաւ արքայ և ասէ կենդանի է Տէր, եթէ Սողոմոն որդի քո թագաւորեսցէ յետ իմ, և նա նստցի յաթոռ իմ փոխանակ իմ, եթէ ոչ այսպէս արարարիցս յաւուր յայսմիկ: Եւ կոչէ Դաւիթ զՍադովկ քահանայ. և զՆաթան մարգարէ և զԲանիա որդի Յովիդայեայ. և մտին առաջի արքայի: Եւ ասէ ցնոսա արքայ. առէք ընդ ձեզ ըզծառայս տեառն ձերոյ և հեծուցէք զՍողոմոն զորդի իմ ի ջորւոջ իմում, և իջուցէք զնա

'ի Գեհոն : Եւ օծցեն զնա անդ Սադովկ քահանայ և Նաթան մարգարէ 'ի թագաւոր վերայ Իսրայէլի . և փող հարէք եղջերաւն և ասասջիք կեցցէ արքայ Սողոմոն : Եւ նա թագաւորեսցէ ընդ իմ . եւ ես ետուս լինել նմա առաջնորդ 'ի վերայ Իսրայէլի եւ 'ի վերայ Յուդայ : Եւ էջ Սադովկ քահանայ , եւ Նաթան մարգարէ , եւ Բանիա որդի Յովիդայեայ , եւ Փերեթին , եւ Ոփելեթին , եւ հեծուցին զՍողոմոն 'ի ջորւոջն արքայի Դաւթի , եւ տարան զնա 'ի Գեհոն :

Եւ առ Սադովկ քահանայ զեղջիւր իւղոյ 'ի Խորանէն . եւ օծ զՍողոմոն . եւ հարին զփողն եղջերեայ , եւ ասէ ամենայն ժողովուրդն կեցցէ արքայ Սողոմոն : Եւ էլ ամենայն ժողովուրդն զհետ նորա , եւ պարառեալ պարուք ուրախ լինէին մեծաւ ուրախութեամբ . և հնչեաց երկիրն 'ի բարբառոյ նոցա :

Եւ մերձեցան աւուրք Դաւթի մեռանելոյ . և պատասխանի ետ Սողոմոնի որդւոյ իւրում և ասէ . ես երթամ զճանապարհ ամենայն երկրի . և դու զօրացիս և եղիցիս յայր :

Եւ պահեսցես զպահպանութիւնս Տեառն Աստուծոյ քոյ, գնալ 'ի ճանապարհս նորա. և պահել զպատուիրանս նորա և զկրաւունս, եւ զդատաստանս եւ զվկայութիւնս նորա. զգրեալս յօրէնս Մովսիսի. և 'ի միտ առնուցուս զոր առնիցես, ըստ ամենայնի՝ զոր պատուիրեմ քեզ: Եւ ննջեաց Դաւիթ ընդ հարս իւր, եւ թաղեցաւ 'ի քաղաքի Դաւթի: Եւ աւուրք զոր թագաւորեաց Դաւիթ 'ի վերայ Իսրայէլի ամք քառասուն. 'ի Քեբրոն՝ ամս եօթն, եւ յԵրուսաղէմ ամս երեսուն եւ երիս: Եւ Սողոմոն նստաւ յաթոռ Դաւթի հօր իւրոյ ամաց երկոտասանից, եւ թագաւորութիւն նորա մեծացաւ յոյժ:

Ընդ որս Ուղղմանի:

Եւ սիրեաց Սողոմոն զՏէր գնալ ըստ հրամանաց Դաւթի հօր իւրոյ: Եւ երեւեցաւ Տէր Սողոմոնի 'ի Գաբաւոն 'ի քուն գիշերոյ. և ասէ Տէր ցՍողոմոն, խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ: Եւ ասէ Սողոմոն, դու արարեր ողորմութիւն մեծ ընդ Դաւթի հօր իմոյ,

որպէս և շրջեցաւ ճշմարտութեամբ եւ արդարութեամբ եւ ուղղութեամբ սրտի ընդքեզ, եւ պահեցեր նմա զողորմութիւնս զայս մեծ տալ որդւոյ նորա նստել յաթոռ նորա որպէս եւ յաւուր յայսմիկ : Եւ ասաց Տէր Աստուած իմ, դու ետուր զծառայ քոյ փոխանակ Դաւթի հօր իմոյ, եւ ես եմ մանուկ փոքրիկ եւ ոչ գիտեմ զելս և զմուտ իմ : Եւ ծառայ քո 'ի մէջ ժողովրդեան քոյ է, զոր ընդրեցեր անթիւ և անհատմար 'ի բազմութենէ : Տացցես ծառայի քում սիրտ լսելոյ և դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ 'ի խելամուտ լինել 'ի մէջ բարւոյ և չարի. քանզի ո՞ կարիցէ դատել զայս ժողովուրդ քո ծանր :

Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի Տեառն, եւ ասէ ցնա Տէր, փոխանակ զի խնդրեցեր յինէն զբանդ զայդ և ոչ խնդրեցեր քեզ աւուրս բազումս, և ոչ խնդրեցեր մեծութիւն, եւ ոչ խնդրեցեր զանձինս թշնամեաց քոց, այլ խնդրեցեր դու քեզ խելամուտ լինել և լսել զկրաւունս : Ահա արարի ըստ բանիդ քում ահա ետու քեզ սիրտ իմաստուն եւ հանճարեղ իբրեւ զքեզ ոչ ոք եղեւ յառաջ քան ըզքեզ, եւ յետ քեզ ոչ ոք յարիցէ նման քեզ :

Եւ զոր ոչ եւս ինդրեցեր ետու քեզ զմեծութիւն եւ զփառս, որպէս ոչ ոք եղեւ նման 'ի թագաւորս զամենայն աւուրս քոյ : Եւ զարթեաւ Սողոմոն եւ ահա երազէր. եւ յարեաւ եկն յԵրուսաղէմ, եւ եկաց առաջի սեղանոյն յանդիման տապանակի ուխտին Տեառն 'ի Սիոն, եւ մատոյց ողջակէզս, եւ արար խաղաղականս եւ արար խրախութիւն մեծ իւր եւ ամենայն ծառայից իւրոց :

Դ. Պատմութեան Սողոմոնի

Յայնժամ երեւցան երկու կանայք, և կացին առաջի արքայի. եւ ասէ մի կինն, յիս տէր իմ. ես և կինս այս էաք 'ի միում տան, և ծնայ 'ի տանն : Եւ եղև յաւուրն երրորդի ծընաւ և կինս այս. և մեք առանձինն էաք, և ոչ ոք գոյր ընդ մեզ 'ի տանն՝ բայց 'ի մէնջ երկոցունց 'ի տանն : Եւ մեռաւ որդի սորա 'ի մէջ գիշերի, քանզի ննջեաց 'ի վերայ նորա : Եւ յարեաւ 'ի հասարակ գիշերի, և էառ զմանուկն իմ 'ի գրկաց իմոց. և աղախին քո 'ի քուն էր, և ննջեցոյց 'ի ծոց իւրում և զորդին

իւր զմեռեալսն ընջեցոյց ի ծոց իմում։ Եւ յարեայ ընդ առաւօտն դիւեցուցանել զորդին իմ, և նա էր մեռեալ։ և հայեցայ ընդ նա այգուանն, և ահա չէր որդին իմ զոր ծնայ։ Եւ ասէ միւս կինն, ոչ։ այլ որդի քո է մեռեալն, և որդի իմ կենդանին։ Այսպէս խօսեցան առաջի արքայի։ Եւ ասէ ցնոսա արքայ։ դու ասես թէ այս որդի իմ է։ որ կենդանիսէ և որդի դորա մեռեալն։ և դու ասես։ ոչ։ այլ որդին քո մեռեալն, և որդի իմ կենդանին։ Եւ ասէ արքայ ածէք զսուրն։ և բերին առաջի արքայի։

Եւ ասէ արքայ կտրեցէք զմանուկն զսանդի աց զկենդանի յերկուս, և տուք զկէսն դմա և զկէսն նմա։ Եւ պատասխանի ետ կինն որոյ որդին կենդանի էր, և ասէ ցարքայ քանզի խռովեցան աղիք նորա ի վերայ որդւոյն իւրոյ, յիս տէր տուք։ նմա զմանուկն կենդանի, և մահու մի՝ սպանանէք զնա։ և միւսն ասէր, մի՝ իմ լիցի և մի՝ դորա, կտրեցէք ընդ մէջ։ Պատասխանի ետ արքայ և ասէ։ որ ասաց մահու մի՝ սպանէք զդա նա է մայր դորա։ Եւ լուաւ ամենայն իսրայէլ զդատաստան զոր դատեցաւ արքայ և զահի հարան յերե-

սաց արքայի ։ զի տեսին թէ իմաստութիւն Աստուծոյ է ի նմա առնել իրաւունս ։

Փառք Սողոմանէ

Եւ Սողոմն իշխանէր թագաւորութեանց ի գետոյ երկրին այլազգեաց մինչեւ ի սահմանս Եգիպտոսի ։ Եւ այս ռոճիկք էին Սողոմանի ի միում աւուր ։ երեսուն քոռ նաշխուոյ , և քառասուն քոռ ալեր գերմակոյ ։ Եւ տասն եզն ընտիր ։ և քսան կով արօտական , և հարիւր ոչխար թող զեղջերու և զայծեամն , և զընտիրս հաւուց պարարելոց ։ Եւ բնակեալէր Յուդայ և Իսրայէլ վստահութեամբ իւրաքանչիւրոք ընդ ոստիոք և ընդ թզենեաւ իւրով ։ ուտէին և ըմպէին ի Դանայ մինչեւ ցԲերսաբէէ զամենայն աւուրս Սողոմանի ։ Եւ էին Սողոմանի քառասուն հազար մատակ ձիոց ի կառս , և երիտասան երիվարաց ։ Եւ տային այնպէս ռոճիկ գործակալքն արքայի Սողոմանի ։ և զամենայն հրամանս սեղանոյ արքայի զիւրաքանչիւր ամիս ։ և ոչ սխալէին բան մի։ Նոյն-

պէս և զգարին և զյարդն երիվարացն և կառամտացն, բերէին 'ի տեղին՝ ուր էր արքայ իւրաքանչիւրոք ըստ իւրումն սահմանի: Եւ ետ Տէր իմաստութիւն Սողոմանի՝ յոյժ, քան զհանճարնախնեաց ամենայն մարդկան, և քան զամենայն իմաստնոց Եգիպտոսի: Եւ իմաստնացաւ քան զամենայն մարդիկ. և իմաստնացաւ քան զԵթեթան զԱրաացի, և զԱեման զԷաղքաղ և զԴարդան որդիս Մաւուլայ. և էր անուանի յամենայն ազգս շուրջանկի:

Եւ խօսեցաւ Սողոմն երիս հազար առակսն. և էին օրհնութիւնք նորա հազար և հինգ: Եւ խօսեցաւ զփայտից՝ եղևնափայտէն որ 'ի Լիբանան, մինչև ցղոպայ՝ որ յորմն ելանէ. և խօսեցաւ զանասնոց, և զթռչոց, և զձկանց: Եւ գային ամենայն ազգք լսել զիմաստութիւնն Սողոմանի և յամենայն թագաւորաց երկրի, որ լսէին զիմաստութիւն նորա: Եւ շինեաց Սողոմն զԳազեր, և զԲեթերոն զՆերքին, և զԲաղշաթ և զԹերմոն յանապատի և յերկրի անդ. և զամենայն քաղաքս բնակութեանց որ էին Սողոմանի, և զքաղաքսն կառաց, և զամենայն քաղաքս երիվարաց: Եւ արար նաև արքայ Սողոմն 'ի

Գասիոն գաբէր, որ է մերձ յԷղեմ, յեղեր Կարմիր Ծովուն յերկրին Եդոմայ : Եւ առաքեաց Քիրամ ընդ նաւսն 'ի ծառայից իւրոց նաւորդս հմուտս նաւարկութեան ծովու ընդ ծառայս Սողոմոնի : Եւ չոգան 'ի Սոփերայ, և առին անտի ոսկի չորեք հարիւր և քըսան տաղանդ և բերին առքայի Սողոմոնի :

Թագուհին Սաբայ :

Եւ Տիկինն Սաբայլուսաւ զանուն Սողոմոնի և եկն փորձել զնա առակօք : Եւ եկն յԵրուսաղէմ զօրու ծանուս յոյժ, և ուղտիւք որ բարձեալ բերէին խունկս, և ոսկի բազում յոյժ և ականս պատուականս, և եմուտ առ Սողոմոն, Ի. խօսեցաւ ընդ նմա զամենայն ինչ որ էր 'ի սրտի իւրում : Եւ մեկնեաց նմա Սողոմոն զամենայն բանս նորա, և ոչ էր բան սխտեալ յարքայէ զոր ոչ մեկնեաց նմա : Եւ եռեաս Թագուհին զամենայն իմաստութիւն Սողոմոնի, և զտունն զոր շինեաց, և զխորտիկսն Սողոմոնի և զաթոռ ծառայից նորա, զկարգ պաշտօնէից նորա, և զհանդերձանս

նորա , և զմատուակս նորա և ողջակէզն նորա զոր մատուցանէր Տեառն , և յիմարեցաւ : Եւ ասէ ցարքայ Սողոմոն . Ճշմարիտ էր բանն՝ զոր լուայ յերկրէն իմում վասն բանից քոց , և վասն իմաստութեան քոյ : Եւ ոչ հաւատացի խօսելոցն առիս , մինչեւ ինձէն եկի՝ և տեսին աչք իմ . և ահա 'ի կէս չէ զոր պատմեցին ինձ իմաստութեանդ զոր յաւելեր և բարութեան , և ամենայն համբաւոյն զոր լսէին յերկրի իմում : Երանելի են կանայք , և երանելիեն ծառայք քո , որ կան առաջի քո՝ և հանապազ լսեն զիմաստութիւն քո :

Եւ եղիցի Տէր Աստուած քո օրհնեալ՝ որ հաճեցաւ ընդ քեզ տալ յաթոռդ Իսրայէլի վասն սիրելոյ Տեառն զԻսրայէլ հաստատել յաւիտեան . և կացոյց զքեզ արքայ 'ի վերայ նոցա , առնել իրաւունս և արդարութիւն յատեանս նոցա : Եւ ետ Սողոմոնի հարիւր և քսան տաղանդ ոսկւոյ և խունկս բազումս յոյժ , և տկանս պատուականս և ոչ էին եկեալ այնպիսի խունկք բազմաք և անուշունք , զորս ետ տիկինն Սաբայ արքայի Սողոմոնի : Եւ արքայ Սողոմոն ետ տիկնոջն

Սաբայ զամենայն ինչ զոր կամեցաւ ։ և զոր խնդրեաց , բայց յայնմանէ՝ զորս տուեալէր Նորա 'ի ձեռս արքայի Սողոմոնի ։ և դարձաւ և գնաց յերկիր իւր՝ ինքն և ամենայն ծառայք իւր : Եւ մեծացաւ Սողոմոն քան զամենայն թագաւորս երկրի մեծութեամբ և իմաստութեամբ : Եւ ամենայն թագաւորք երկրի խնդրէին տեսանել զերեսս Սողոմոնի , և լսել զիմաստութիւն Նորա , զոր ետ տէր 'ի սիրտ Նորա :

Եւ մնացորդք բանից Սողոմոնի , և զամենայն ինչ զոր արար , և ամենայն իմաստութիւն Նորա , աւանիկ գրեալէ 'ի գիրս բանից Սողոմոնի : Եւ աւուրք զորս թագաւորեաց Սողոմոն յԵրուսաղէմ 'ի վերայ ամենայն Իսրայէլի ամք քառասուն : Եւ ննջեաց Սողոմոն ընդ հարս իւր ։ և թաղեցին զնա 'ի քաղաքի Դաւթի հօր իւրոյ ։ և Ռոբովամ որդի Նորա թագաւորեաց յետ Նորա :

Գ Երոնիմոն Բաբելացւոյ

Եւ եղեւ յամին ինն երրորդի թագաւորութեան Սեդեկիայ եկն Նաբուգոդոնոսոր

արքայն Բաբելոնի, և ամենայն զօրք իւր 'ի վերայ Երուսաղէմի. և բանակեցաւ զնովաւ և շինեաց շուրջ զնովաւ պարիսպ: Եւ պաշարեաց զքաղաքն մինչեւ ցամն մեռասաներորդ Սեդեկիայ արքայի: Եւ սաստկացաւ սովն 'ի քաղաքին, և ոչ գոյր հաց ժողովրդեան երկրին: Եւ խրամատեցաւ քաղաքն, և ամենայն արք պատերազմի ելին տրտաքս 'ի գիշերի ընդ ճանապարհ դրանն 'ի մէջ պարսպացն, որ էր առ պարտիզաւն արքունի. և սնդեցան զօրքն Քաղդէացւոց զհետ Թագաւորին. և հասին նմա յարաբովդ երիքովայ. և ամենայն զօրք նորա ցրուեցաւ ի նմանէ: Եւ կալան զնա, և ածին առ արքայն Բաբիլոնի 'ի Դեբղաթա. և խօսեցաւ ընդ նմա դատաստանօք: Եւ զորդիսն Սեդեկիայ սպան առաջի նորա, զաչսն Սեդեկիայ կուրացոյց. և կապեաց զնա կապանօք և տարաւ 'ի Բաբելոն: Եւ այրեաց զտունն Տեառն, և զտուն Թագաւորին և զամենայն տունս Երուսաղէմի այրեաց հրով: Եւ զաւերեալս ժողովրդեանն զմնացեալս 'ի քաղաքին, և զանկեալսն յարքայն Բաբիլացւոց. և զայլ ևս խուժան ժողովրդեանն խաղացոյց Նաբու-

զարդան դահճապետան :

Եւ 'ի թագաւորութեան Կիւրոսի Պարսից յամին առաջնում յեօթանասուներրորդամի գերութեանն Հրէաստանի, յարոյց Տէր զոգի Կիւրոսի թագաւորին Պարսից. և հրամայեաց Կիւրոս յամենայն թագաւորութեան իւրում քարոզ կարդալ և ասել : Այսպէս ասէ թագաւորն Պարսից Կիւրոս. ինձ յայտնեաց թագաւորն ամենայն տիեզերաց Տէր Աստուած Իսրաէլի, Տէր բարձեալ. և նշանակեալ յայտնեաց ինձ շինել նմա տաճար յԵրուսաղէմ Հրէաստանի. արդ ո՞ք և իցէ կայցէ առ նմա յազգացն Հրէից. և Տէր Աստուած եղիցի ընդ նմա : Եւ ամենայն ոք որ յիւրաքանչիւր տեղիս բնակեալքն, օգնեսցեն նոցա ոսկով և արծաթով. ձիովք և ամենայն խաշամբք, և ամենայն կազմածովք իւրեանց նուիրեսցեն 'ի տաճար Տեառն Աստուծոյ յԵրուսաղէմ: Եւ կացցեն իշխանք ըստ ազգացն և հայրապետաց ազգին Յուդայ և ցեղին Բենիամինի. և քահանայիցն և Ղևտացւոց. և ամենեցուն՝ զորոց զարթոյց Տէր զոգիս նոցա, ելանել և շինել զտունն Տ՚ն յԵրուսաղէմ: Օգնեսցեն ամենեքեան ոսկով

և արծաթով, ձիովք և խաշամբ, ուր տեսցեն Տեառն որչափ և ի միտս իւրեանց անկցի : Եւ Թագաւորն Կիւրոս ետ բերել զսուրբ սպասս տան Տեառն զոր բերեալ էր Նաբուգոդոնոսորայ յԵրուսաղէմ, և եդեալ էր 'ի պահ 'ի տան կռոցն իւրոց :

Եւ հրամայեաց տալ զսպասն Միթրիդատայ գանձաւորի իւրոյ, և նորա համարեալ ետ զՍաղմանասար հանդերձապետ Յուդայ : Եւ ժամանեաց ետ ամին եօթներորդ, և էին որդիքն Իսրայէլի յիւրաքանչիւր քաղաքս և ժողովեցան ամենայն ժողովուրդն իբրև զմի այր յԵրուսաղէմ : Եւ յառաջնում ամսեանն եօթներորդի, սկսան մատուցանել զողջակէզս Տեառն Աստուծոյ, և տունն ոչ ևս էր հիմն արկեալ : Եւ ետուն արծաթ քարահատացն և հիւսանցն, և կերակուր, և ըմպելիս, և ձէթ Սիդոնացւոց՝ և Տիւրացւոց, և բերէին փայտս մայրս 'ի Լիբանանէ ընդ ծով 'ի Յոպպէ որպէս և հրամայեաց նոցա Կիւրոս Թագաւոր Պարսից : Եւ յերկրորդ ամի ելանելոյն նոցա յորժամ եկին 'ի տաճարն Տեառն յամսեանն երկրորդի, սկսաւ Զօրաբաբէլ Սաղաթիէլեանց և Յեսու Յովսեդեկեանց

և եղբարք նոցա , և քահանայքն , և Ղևտացիքն և ամենայն եկեալքն ի գերութենէն յԵրուսաղէմ. և կացուցին զՂևտացիսն ի քսան ամենից և ի վեր վերակացուս ի վերայ գործոց տանն Տեառն : Եւ արկին հիմն , և սկսան շինել զտուն Տեառն , և կային քահանայքն զգեցեալ զպատմուճանն , և հարկանէին զփողս իւրեանց . և Ղևտացիքն որդիք Ասարայ ծնծղայիւք օրհնէին զՏէր Աստուած՝ որպէս և կարգեաց Դաւիթ թագաւոր Իսրայէլի : Եւ ասեն այր ցընկեր իւր . խոստովան եղերուք և գոհացարուք զՏեառնէ . զի քաղցր է . զի յաւիտեան է ողորմութիւն նորա ի վերայ Իսրայէլի : Եւ ամենայն ժողովուրդն մեծաձայն օրհնէին զՏէր Աստուած Իսրայէլի . վասն զի արկին հիմունս տան Տեառն : Եւ բազումք ի քահանայիցն և Ղևտացւոցն և յիշխանացն և ի հաղարապետացն և ի ծերոցն որոց տեսեալ էր զտաճարն Տեառն և յայնժամ տեսին աչօք իւրեանց զհիմն նորա , լային մեծաձայն . և ժողովուրդն ամենայն նշանակէին զուրախութիւն և բարձրացուցանէին զձայնս իւրեանց : Եւ ոչ ոք էր ի ժողովրդեանն որ կարէր դիտել և լսել զձայն

ուրախութեան ։ վասն զի ժողովուրդն աղաղակէր մեծաձայն և լսելի լինէր ձայնն մինչև ի հեռաւորս ։

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ։

Ծնունդ Քրիստոսի ։

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ելն Հրամանն յՕգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս ։ Եւ երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քաղաքի ։ Եւ և Յովսէփ ի Գալիլէէ ի քաղաքէ Նազարեթէ ի Հրէաստան ի քաղաք Դաւթի , որ կոչի Բեթղահէմ ։ վասն լինելոյ նորա ի տանէ և յազգէ Դաւթի՝ մտանել յաշխարհագիր Մարիամաւ հանդերձ զորխոսեալն էր նմա ։ և էր յղի ։ Եւ եղև ի հասանել նոցա անդր , լցան աւուրքն ծնանելոյ նորա և ծնաւ զորդին իւր զանդրանիկ ։ և պատեաց ի խանձարուրս , և եդ զնա ի մսուր ։ զի ոչ գոյր նոցա տեղի ի Քէլեանի ։ Եւ հովիւքն էին ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք , որ պահէին զպահպանութիւն գիշերոյ հօտից իւրեանց ։

Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ նոցա, և փառք Տեառն ծագեցին առ նոսա. և երկեան երկիւղ մեծ: Եւ ասէ ցնոսա հրեշտակ մի՝ երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեան: Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր 'ի քաղաքի Դաւթի: Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս և եդեալ 'ի մսուր: Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած և ասէին: Փառք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն 'ի մարդիկ հաճութիւն: Եւ եղև իբրև վերացան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. եկայք երթիցուք մինչև ցԲեթղահէմ, և տեսցուք զկնչէ բանս այս որ եղև. զոր Տէր եցոյց մեզ: Եկին փութանակի, և գտին զՄարիամ և զՅովսէփ, եւ զմանուկն եդեալ 'ի մսուր: Եւ ծանեան վասն բանին որ ասացաւ նոցա զմանկանէն: Եւ դարձան հովիւքն փառաւոր առնէին եւ օրհնէին զԱստուած վասն ամենայնի՝ զորս լուան եւ տեսին, որպէս պատմեցաւ նոցա: Եւ

իբրև լցան տուրք ուխտ թլպատելոյ գնա, եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս։

Մոգք յԱրևելից

Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղահէմ Հրէաստանի յաւուրս Հերովդէի արքայի՝ ահա մոգք յարևելից եկին յԵրուսաղէմ։ Եւ ասեն, ուր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարևելս, եւ եկաք երկիր պագանել նմա։ Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, եւ ստուգեաց ի նոցանէ ժամանակ աստեղն երևելոյ։ Եւ արձակեալ զնոսա ի Բեթղահէմ, ասէ, գնացէք ստուգեցէք վասն մանկանն, եւ յորժամ գըտանիցէք ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիրպագիցս նմա։ Եւ նոքա իբրև լուան ի թագաւորէն գնացին, եւ ահա աստղն զոր տեսին յարևելս առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց ի վերայ՝ ուր էր մանուկն։ Եւ իբրև մտին ի տուն, տեսին զմանուկ հանդերձ Մարիամաւ մօրն իւրով, եւ անկեալ երկիրպագանէին նմա, եւ բացեալ ըզ-

գանձս իւրեանց մատուցին նմա պատարագս ոսկի, եւ կնդրուկ, եւ զմիւռս։ Եւ հրաման առեալ 'ի տեսլեան, չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհ իւրեանց։ Եւ երբեւ գնացին նոքա յանտի, ահա հրեշտակ Տեառն երեւէր 'ի տեսլեան Յովսէփու, եւ ասէր. արի՛ առ զմանուկդ եւ զմայր իւր, եւ փախի՛ր Յեգիպտոս, եւ անդ լինիջիր ցորժամ ասացից քեզ. քանզի՝ 'ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ։ Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր իւր 'ի գիշերի՝ եւ գնաց յԵգիպտոս։ Եւ 'ի վախճանին Հերովդի եկեալ բնակեցաւ 'ի քաղաքին՝ որ կոչէր 'Նազարէթ. զի լցցի բան մարգարէին, թէ Նազովրեցի կոչեսցի։

Յեսուս ընդ Վարդապետս Օրէնից

Եւ մանուկն աճէր եւ զօրանայր լի իմաստութեամբ. եւ շնորհք Աստուծոյ էին 'ի վերայ նորա։ Եւ երթային ծնողք նորա ամի ամի յԵրուսաղէմ 'ի տօն զատկին։ Եւ

իբրև եղև նորա ամ երկոտասան , յելանել նոցա յԵրուսաղէմ ըստ սովորութեան տօնին եւ կատարել զաւուրսն եւ դառնալ անդրէն մնաց Յիսուս մանուկն յԵրուսաղէմ . եւ ոչ գիտացին ծնողքն : Եւ եղև յետ երից աւուրց գտին զնա 'ի տաճարին , զի նստէր ընդ վարդապետսն , լսէր 'ի նոցանէ եւ հարցանէր զնոսա : Զարմանային ամենեքեան որ լսէին 'ի նմանէ . ընդ իմաստութիւնն եւ ընդ պատասխանին : Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ եւ շնորհօք յԱստուծոյ եւ 'ի մարդկանէ :

Երրորդաւն Աղաւէտին :

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 'ի լեառն կալ յաղօթս . և հանէր զգիշերն 'ի գլուխս յաղօթսն Աստուծոյ : Եւ իբրև այգ եղեւ կոչեաց զաշակերտսն իւր և ընդրեաց 'ի նոցանէ երկոտասանսն , զոր և առաքեալս . անուանեաց . զՍիմովն՝ զոր և Պետրոսն անուանեաց , և զԱնդրէաս եղբայր նորա , և զՅակոբոս , և զՅովհաննէս , և Փիլիպպոս և

զԲարթուղիմէոս: Եւ զՄատթէոս, և զԹովմաս, և զՅակոբոս Ալփեայ, և զՍիմոնն զկոչեցեալն նախանձայոյզ: Եւ զՅուդայ Յակովբայ, և զՅուդայ Իսկարիովտացի, որ եղև իսկ մատնիչ: Եւ իջեալ նոքօք Հանդերձ 'ի տեղի մի տափարակ. և ժողով աշակերտացն նորա և բազմութիւն յոյժ ժողովրդեանն յամենայն Հրէաստանէ, յԵրուսաղէմէ, և յայնմ կողմանէ Յորդանանու, և 'ի ծովեզերաց Տիւրոսի և Սիդոնի:

Եւ եկեալ 'ի գաւառ իւր ուսուցանէր զնոսա 'ի ժողովրդեան նոցա. մինչև զարմանալ նոցա և ասել. սա ուստի՞ իցէ այս իմաստութիւն և զօրութիւն: Ո՞չ սա է Հիւսանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիամ. և եղբարք սորա Յակոբոս, և Յովսէփ և Սիմոնն և Յուդայ: Եւ քոյրք սորա ո՞չ ամենեքեան առ մեզ են. և արդ ուստի՞ է սա այս ամենանայն: Եւ դայթակղէին 'ի նա. բայց Յիսուս ասէ ցնոսա. չէիք մարգարէ անարգեմէ ոչ յիւրում գաւառի և յիւրում տան: Եւ ոչ արար անդ զօրութիւնս բազումս վասն անՀաւատութեան նոցա:

Կին Սամարացի :

Գայ նա 'ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սեքար, մերձ 'ի գեղն՝ զոր ետ Յակոբ որդւոյ իւրում Յովսեփայ : Եւ անդ էր աղբիւր մի Յակոբայ . և Յիսուս վաստակեալ 'ի ճանապարհին , նստէր 'ի վերայ աղբերն և էր ժամ իբրև վեցերորդ : Գայ կին մի 'ի Սամարիայ հանել ջուր . ասէ ցնա Յիսուս . տուր ինձ ըմպել : Զի աշակերտք նորա երթեալ էին 'ի քաղաք անդր գնել զկերակուր : Ասէ ցնա կինն Սամարացի . դու որ հրէայ ես՝ զի՞արդ յինէն ըմպել խնդրես 'ի կնոջէ Սամարացւոյ . զի ոչ երբէք խառնակին Հրէայք ընդ Սամարացիս : Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ . եթէ գիտէիր դու ըզպարգևսն Աստուծոյ 'և ով է որ ասէդ ցքեզ թէ տուր ինձ ըմպել , դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ , և տայր քեզ ջուր կենդանի : Ասէ ցնա կինն . Տէր . դու քանզի եւ դոյլ իսկ ոչ ունիս . և ջրհորս խորէ . իսկ արդ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի : Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ . ամենայն որ ըմպէ 'ի ջրոյ յայդմանէ՝ միւսանգամ ծարաւէ : Բայց որ

ըմպէ՝ ի ջրոյն զոր ես տաց նմա , մի՛ ծարաւեսցէ յաւիտեան : Այլ ջուրն զոր ես տաց նմա եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ ի կեանսն յաւիտենականս : Ասէ ցնա կինն . Տէր թուի ինձ թէ մարգարէ իցես դու : Եթող կինն զսափորն իւր և չոգաւ ի քաղաքն , և ասէ ցմարդիկն : Եկայք տեսէք զայր մի՝ որ ասաց ինձ զամենայն որ ինչ իմ գործեալ է . մի՞ թէ նա իցէ Քրիստոսն : Ելին ի քաղաքէն և եկին առ նա : Իսկ իբրև եկին առ նա Սամարացիքն , աղաչէին զնա լինել առ նոսա . և եղև անդ աւուրս երկուս : Եւ ևս բազումք հաւատացին ի նա վասն բանին նորա . և ասէին ցկինն թէ ոչ այսուհետև վասն քո խօսիցդ հաւատամք . զի մեզէն իսկ լուաք ի դմանէ . և գիտեմք եթէ դա է ճշմարիտ փրկիչ աշխարհաց : Եւ յետ երկուց աւուրց ել անտի և գնաց ի Գալիլիա :

Քրիստոս փարոյշ ժողովրդոց

Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազում՝ ի Գալիլիէ , և ի Դեկապոլեայ , և ՅԵրուսաղէմէ և ի Հրէաստանէ , և յայնկոյս

Յորդանանու, և բժշկեաց զնոսա: Եւ տեսեալ զժողովուրդն ել 'ի լեառն. և իբրև նըստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա: Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, և ասէր: Երանի աղքատաց հոգւով. զի նոցա է արքայութիւնն երկնից: Երանի սըգաւորաց. զի նոքա մխիթարեսցին: Երանի հեզոց. ի նոքա ժառանգեսցեն զերկիր: Երանի՝ որ քաղցեալ և ծարաւիք իցեն արդարութեան. զի նոքա յագեսցին: Երանի ողորմածաց. զի նոքա ողորմութիւն գտցեն: Երանի այնոցիկ, որ սուրբք են սրտիւք. զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի խաղաղարարաց. զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի՝ որ հալածեալ իցեն վասն արդարութեան. զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ: Որ ոք լուծցէ մի ինչ 'ի պատուիրանացս յայսցանէ 'ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից: Բայց ասեմ ձեզ. զի եթէ ոչ առաւելուցու

արդարութիւն ձեր առաւելքան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից: Լուարուք ասացաւ. սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո: Այլ ես ասեմ ձեզ, սիրեցէք զթշնամիս ձեր. օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց. և աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ՝ որ լկեն զձեզ և հալածեն: Զի եղիջիք որդիք հօր ձերոյ, որ յերկինս է. զի զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց:

Յէ«ռ»ս 'է ՀԼ Մրրէ:

Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զիւրև՝ հրամայեաց երթալ յայնկոյս: Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. վարդապետ եկից և ես զկնի քո յոր վայր և երթիցես: Ասէ ցնա Յիսուս. աղուէսուց որջք գոն, և թռչնոց երկնից բոյնք. այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր գլխէ զգլուխ իւր: Եւ իբրև եմուտ 'ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքնո-

բա : Եւ ահա շարժումն մեծ եղև 'ի ծովուն մինչ նաւին ծածկիլ յալեաց անտի . և ինքն ննջէր : Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն . Տէր փրկեա՛ զմեզ . զի կորնչիմք : Եւ ասէ ցնոսա . ընդէ՞ր վատասիրտք էք սա՛կաւահաւատք : Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն , և եղև խաղաղութիւն մեծ : Եւ մարդիկն զարմացան և ասէին ո՞րպիսի ոք իցէ սա , զի հողմք և ծով հնազանդին սմա :

Առակ պարպաքէարց :

Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս և ասէ . Տէր քանի՞ցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ , և թողից նմա . մինչև ցեաթն անգամ . Ասէ ցնա Յիսուս . ոչ ասեմ քեզ թէ մինչև ցեօթն անգամ , այլ մինչև ցեօթանասնեկին յեօթն : Կայր թագաւոր ոք , որ կամեցաւ հաշիւ առնել 'ի մէջ ծառայից իւրոց : Եւ իբրև սկսաւ եկն առնա պարտապան մի հազար քանքարոյ : Իբրև ոչ ունէր հատուցանելոյ՝ հրամայեաց Տէր նորա վաճառել զնա , և զկին

և զորդիս , զամենայն որ ինչ և ունիցի , և հատուցանել : Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա և ասէր . երկայնամիտ լեր առիս և զամենայն հատուցից քեզ : Գթացեալ տէր ծառային այնորիկ . արձակեաց զնա , և փոխն եթող նմա : Եւ ելեալ ծառայն եգիտ զմի 'ի ծառայակցաց իւրոց , որ պարտէր նմա հարիւր դահեկան և կալեալ զնա խեղդէր և ասէր , հատո՛ ինձ զոր պարտիս : Արդ անկեալ ծառայակցին առ ոտս նորա , աղաչէր զնա և ասէր , երկայնամիտ լեր առիս և հատուցից քեզ : Եւ նա ոչ կամէր . այլ չոգաւ արկ զնա 'ի բանտ մինչև հատուցանիցէ զպարտսն : Իբրև տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղևն տրտմեցան յոյժ , և եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն որ ինչ եղևն : Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ասէ . ծա՛ռայ չար , զամենայն զպարտսն քո թողի քեզ , վասն զի աղաչեցեր զիս : Իսկ արդ ո՞չ էր պարտ և քեզ ողորմիլ ծառայակցին քում , որպէս և ես քեզ ողորմեցայ : Եւ բարկացեալ Տէրն մատնեաց զնա դահճաց , մինչև հատուսցէ զամենայն զպարտսն : Նոյնպէս և Հայր իմ որ յերկինս է , արասցէ ձեզ , եթէ ո՛չ թողուցուք իւ-

բաքանչիւր եղբօր իւրում ի սրտից ձերոց զյանցանս նոցա :

Առակ պատմն Տաղանդաց :

Այր մի գնացեալ ի տար աշխարհ , կոչեաց զծառայս իւր և ետ նոցա զինչս իւր : Ումեմն ետ հինգ քանքար , և ումեմն երկուս , և ումեմն մի , իւրաքանչիւր ըստ կարի և գնաց : Զոգաւ վաղվաղակի որ առ զհինգն , գործեաց նօքօք , և շահեցաւ այլ եւս հինգ : Նոյնպէս եւ որ զերկուսն՝ շահեցաւ այլ եւս երկուս : Եւ որզմինն առ, գնաց փորեաց զերկիր , եւ թագոյց զարծաթ Տեառն իւրոյ : Յետ բազում ժամանակի , գայ Տէր ծառայիցն այնոցիկ , եւ առնէ համարս ի մէջ նոցա : Եւ մատուցեալ որ զհինգ քանքարն առ , մատոյց այլ եւս հինգ քանքար եւ ասէ . Տէր հինգ քանքար ետուր ցիս , արդ ահաւասիկ հինգ այլ եւս քանքար ի վերայ շահեցայ : Ասէ ցնա Տէրն իւր , ամենի ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես , ի վերայ բազմաց կացուցից զքեզ

մուտ յուրախութիւն Տեառն քո։ Պատուեցեալ եւ որոյ զերկուս քանքարսն առեալ էր, ասէ. Տէր երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս եւս այլ քանքարս՝ զոր ի վերայ շահեցայ։ Ասէ ցնա Տէրն իւր, ազնիւ ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի՝ իվերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն Տեառն քոյ։ Պատուեցեալ եւ որոյ զմի քանքարն առեալ էր, եւ ասէ Տէր գիտէի զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր. եւ ժողովես՝ ուստի՝ ոչ սփռեցեր։ Երկեայ, զընացի եւ թագուցի զքանքարն քո յերկրի. արդ ուստիկ քոյդ ցքեզ։ Պատասխանի ետ Տէրն եւ ասէ ցնա. ծառայ չար եւ վատ. գիտէիր թէ հնձեմ ուստի՝ ոչ սերմանեցի, եւ ժողովեմ ուստի՝ ոչ սփռեցի։ Պարտ էր քեզ արկանել զարծաթն իմ ի՝ սեղանաւորս, զի եկեալ տոկոսեաւք պահանջէի զիմն։ Արդ առէք ի դմանէ զքանքարդ եւ տուք այնմ որ ունիցի տասն քանքար։ Զի ամենայնի՝ որ ունիցի տացի եւ յաւելցի, եւ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցի՝ բարձցի ի նմանէ։

Բարի Սամարացին :

Եւ ահա յարեաւ ոմն օրինական փորձէր զնա և ասէր . վարդապետ զի՞նչ գործեցից՝ զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից : Եւ նա ասէ ցնա . յօրէնս զի՞նչ գրեալ է . որպիսի՞ ընթերնուս : Նա պատասխանի ետ և ասէ . Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ , և յամենայն մտաց քոց . և զընկեր քո իբրև զանձն քո : Եւ ասէ ցնա . ուղիղ ետուր պատասխանիդ , զայդ արա՝ և կեցցես : Նա իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս՝ և ո՞վ է իմ ընկեր : Պատասխանի ետ Յիսուս և ասէ . այր մի իջանէր յԵրուսաղէմէ յԵրիքովս , և անկաւ ի ձեռս աւազակաց , որք մերկացուցին զնա և վէրս ի վերայ եդին , և թողին կիսամահ և գնացին : Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհս , և տեսեալ զնա զանց արար : Նոյնպէս և Ղևատացի մի եկեալ ընդ նոյն տեղի , եւեւս և զանց արար : Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն առնովաւ , և տեսեալ զնա գթացաւ : Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա , արկեալ ՚ի վերայ ձէթ և գինի

և եդեալ ի վերայ գրաստու իւրոյ, ած զնա ի պանդոկ մի, և դարմանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի՝ հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ. դարման տար զմա, և զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ գալստեանս իմում հատուցից քեզ: Արդ ո՞յերիցունց ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լինել անկելոյն ի ձեռս աւազակացն: Եւ նա ասէ որ արար ողորմութիւն. ասէ ցնա Յիսուս. երթ և դու արա նոյնպէս:

Յարութիւն Ղազարու:

Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս՝ի Բեթանիա: Առաքեցին քորք նորա առ Յիսուս եւ ասեն. Տէր ահաւասիկ զոր դուն սիրէիր հիւանդացեալ է: Իբրև լուաւ Յիսուս, ասէ. այն հիւանդութիւն չէ՝ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ. զի փառաւոր լիցի որդի Աստուծոյ այնուիկ: Եւ սիրէր Յիսուս զՂազար եւ զքոյս նորա: Իբրև լուաւ թէ հիւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն ուր էր աւուրս երկուս: Ապա յետ այնորիկ ասէ ցնա-

սա։ Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթեալ զարթուցից զնա։ Ասեն ցնա աշակերտքն։ Տէր եթէ ննջեաց՝ ապա ապրի։ Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս, Ղազարոս մեռաւ։ բազումք 'ի հրէից անտի որք եկեալ էին առ Մարթա եւ Մարիամ, զի մխիթարեսցեն վասն եղբօրն։ Մարթա իբրև լուաւ թէ Յիսուս գայ, ընդառաջ գնաց նորա բայց Մարիամն սատէր անդէն 'ի տան։ Ասէ Մարիամ զՅիսուս։ Տէր եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ։ Այլ եւ արդ գիտեմ, թէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ տացէ քեզ Աստուած։ Ասէ ցնա Յիսուս յարիցէ եղբայրն քո։ Եւ գնաց կոչեաց զմարիամ զքոյր իւր լռելեայն եւ ասէ։ վարդապետն եկեալ է եւ կոչէ զքեզ։ Նա իբրև լուաւ յարեաւ վաղվաղակի, եւ եկն առ նա։ Յիսուս իբրև ետես զնա զի լայր եւ որ ընդ նմայն էին՝ զի լային խռովեցաւ յոգի իւր իբրև զայրացեալ։ Եւ ասէ ուր եդիք զնա։ ասեն ցնա՝ Տէր եկ եւ տես։ Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր։ գայ 'ի գերեզմանն։ Եւ ասէ 'ի քանց արարէք զվէմն։ Եւ իբրև 'ի վեր առին զվէմն։ Յիսուս ամբարձ զաչս

իւր ի վերս, եւ ասէ. Հայր գոհանամ ըզքէն զի լուար ինձ: Եւ ես գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ վասն ժողովրդեան որ շուրջ կան առնեմ, զի հաւատացցեն ինձ թէ դու առաքեցեր ինձ: Զայս ի բերան ասացեալ, ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ. Ղազարէ արի՛ եկ արտաքս: Եւ էլ մեռեալն ոտիւք կապեալովք, եւ ձեռօքն երիզապնատօք եւ երեսօքն վարշամակապատովք. եւ ասէ ցնոսա Յիսուս, լուծէք զդա եւ թողէք երթալ:

Նենգուելն Յուդայի

Յայնժամ ժողովեցան քահանայապետքն և դպիրքն և ծերք ժողովրդեան. և արարին խորհուրդ զի նենգութեամբ կալցին զՅիսուս և սպանցեն: Յետ այսորիկ եկն Յիսուս ի Բեթանիա ի տուն Սիմոնի բորոտի: Յայնժամ գնաց միւս երկոտասանից անուանեալ Յուդայ իսկարիովտացի առ քահանայապետսն: Եւ ասէ. զի՞նչ կամիք տալ ինձ, և ես մատնեցից զնա ձեզ: Եւ նոքա կշռեցին նմա երեսուն արծա-

թի: Եւ յայնմ հետէ խնդրէր պարապ զի մատնեսցէ զնա նոցա: Եւ առաջնում աւուր բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս և ասեն. ուր կամիս զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն: Եւ նա ասէ ցնոսա. երթայք ի քաղաքն առ այս անուն, և ասացէք ցնա. վարդապետ ասէ ժամանակիս մերձեալ է, առ քեզ առնեմ զզատիկ աշակերտօքս հանդերձ: Եւ արտրին աշակերտքն որպէս հրամայեաց նոցա Յիսուս, պատրաստեցին զզատիկն: Եւ իբրև երեկոյ եղև կայր բազմեալ ընդ երկոտասան աշակերտսն:

Եւ մինչ դեռ ուտէին նոքա, ասէ. ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս: Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի գեղ մի որում անուն էր Գեթսեմանի, և ասէ ցնոսա. նստարո՛ւք այդր, մինչև երթայց կացից յաղօթս: Եւ առեալ ընդ իւր զՊետրոս և զերկուս զորդիսն Զեբեդեայ, սկսաւ տրտմիլ և հոգալ: Յայնժամ ասէ ցնոսա, տրտում է անձն իմ մինչև ի մահ, կացէ՛ք աստ և հսկացէք ընդիս: Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի անկաւ ի վերայ երեսաց իւրոց, կաց յաղօթս և

ասէ. Հայր իմ, եթէ հնարէ. անցցէ բա-
ժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կա-
միմ այլ որպէս դու: Յայնժամ գայ առ
աշակերտսն և ասէ ցնոսա. ննջեցէք այսու-
հետև և հանգերուք. զի ահա հասեալ է
ժամ, և Որդի Մարդոյ մատնի ի ձեռս մեղա-
ւորաց: Արիք երթիցուք ասի, զի ահա
ւասիկ եհաս որ մատնելոց է զիս: Եւ մինչ-
դեռ նա զայն խօսէր, ահա Յուդայ մի յեր-
կոտասանից եկն, և ընդ նմա ամբոխ բա-
զում սրովք և բրօք ի քահանայապետից
և ի ծերոց ժողովրդեանն: Եւ որ մատնե-
լոցն էր զնա ետ նոցա նշան և ասէ. ընդ ո-
րումն ես համբուրեցից՝ նա է. զնա ունիցիք:
Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս՝ ա-
սէ. ողջո՛ր վարդապետ. և համբուրեաց
զնա: Եւ Յիսուս ասէ ցնա. ընկեր վասն
ո՞րոյ եկիրդ. Յայնժամ մատուցեալ արկին
ձեռս ի Յիսուս և կալան զնա:

Մահ Քրիստոսի:

Իբրև այդ եղև, խորհուրդ արարին ամե-
նայն քահանայապետքն և ծերք ժողովը-

դեան վասն Յիսուսի սպանանել : Կապե-
ցին զնա , և առին զնացին և ետուն 'ի ձեռն
Պոնտացւոյ Պիղատոսի դատաւորի : Յայնժամ
տեսեալ Յուդայի որ մատնեացն զնա , թէ
պարտաւորեցաւ , զդ Ջացաւ . և դարձոյց զար-
ծաթն առ քահանայապետսն և ծերսն ժո-
ղովրդեան : Եւ ասէ մեղայ զի մատնեցի զա-
րիւն արդար : Եւ նոքա ասեն մեզ չէ փոյթ
դու գիտես : Եւ ընկէց զարծաթն 'ի տաճա-
ռին և գնաց . և չոգաւ խեղդեցաւ : Եւ
Յիսուս եկաց առաջի դատաւորին : Եւ 'ի
չարախօսելն նորա 'ի քահանայապետիցն և
և 'ի ծերոց . յայնժամ ասէ ցնա Պիղատոս . մի՞ չ
լսես որչափ դոքա հակառակ քո վկայեն :
Եւ ոչ ետ նմա պատասխանի և ոչ բան մի ,
մինչ զարմանալ դատաւորին յոյժ : Եւ մինչ
նստէր յատենին , առաքեաց առ նա կինն
իւր և ասէ , չկայ իմ և քո ինչ արդարոյն այնո-
րիկ զի բազում անգ անցին ընդ իս յանուրջս
վասն նորա : Իսկ քահանայապետքն և ծերք
հաւանեցուցին զժողովուրդն , զի կորուսցեն
զՅիսուս : Եւ ասէ դատաւորն , զինչ չար
արար : Եւ նոքա ևս աղաղակէին և ասէին
խաչեսցի : Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչինչ

օգնէ , այլ առաւել խռովութիւն լինի , առ
եալ ջուր լուացզնեռս առաջի ժողովրդեան ,
և ասէ քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այ-
դորիկ ։ դուք գիտասջիք : Պատասխանի ետ
ամենայն ժողովուրդն և ասէ արիւն դորա ՝ի
վերայ մեր և ՝ի վերայ որդւոց մերոց : Յայն-
ժամ զինուորք դատաւորին առին զՅիսուս
յապարանս և ժողովեցին ՝ի վերայ նորա զա-
մենայն զգունդն : Մերկացուցին զնա , և ար-
կին զնովաւ քղամիտ կարմիր : Եւ բոլորեալ
պսակ ՝ի փշոց եդին ՝ի գլուխն նորա , և եղէգն
յաջոյ ձեռին նորա , ՝ի ծունր իջեալ առաջի
նորա , կատակէին և ասէին ։ Ողջ ՝էր Թագա-
ւոր Հրէից : Եւ թքեալ ՝ի նա առնուին զե-
ղէգն և ծեծէին զգլուխ նորա : Եւ յորժամ
ձաղեցին զնա , մերկացուցին ՝ի նմանէ զքը-
ղամիդն կարմիր և ագուցին նմա զիւր հանդերձ
և տարան զնա : Եւ հանին զնա ՝ի խաչ ։
բաժանեցին զհանդերձսն նորա վիճակաւ ։
զի լցցի բանն որ ասացաւ ՝ի մարգարէէն ։
բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս , և ՝ի
վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին :
Եւ նստեալ պահէին զնա : Եւ եդին ՝ի վե-
րայ գլխոյ նորա գրեալ զվնաս նորա թէ՝

ENGRAVED BY SAM DRUN SORNO KER

ԱՀԱ ՅԻՍՈՒՍ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ։

Որով առեալ՝ խաչեցին ի փրկութիւն աշխարհի, և ի փառս Հօրն յաւիտենականի։

Թաղումն Քրիստոսի

Եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ և արդար։ Սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա։ Արիմաթեայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ։ Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի։ Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պաստառակալաւ, և եդ ի կռածոյ դերեզմանին։ ուր չէր բնաւ զոք եդեալ։ Եւ օրն էր ուրբաթ, և ի շաբաթ լուսանայր։ Եւ երթային զհետ նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա ի Գալիլեէ։ տեսին զդերեզմանն, և որպէս եդաւ մարմին նորա։ Դարձան, և պատրաստեցին խունկս և իւղս։ և ի շաբաթուն հանդարտեցին վասն պատուիրանին։

Յարութեան Քրիստոսի :

Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթն, եկն Մարիամ, Մագդաղենացի և միւս Մարիամն տեսանել զգերեզման: Եւ ահա՛ շարժումն մեծ եղև. զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից, մատուցեալ 'ի բաց թաւալեցոյց զվէմն 'ի դրանց անտի՝ և նստէր 'ի վերայ նորա : Եւ տեսիլ նորա իբրև զփայլակն, և հանդերձ նորա իբրև զձիւն : Եւ ասէ հրեշտակն ցկանայս մի՛ երկնչիք դուք, գիտեմ զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք՝ չէ՛ աստ, այլ յարեաւ որպէս ասացն : Եւ վաղվաղակի՛ երթայք ասացէք աշակերտաց նորա, թէ յարեաւ. և ահա յառաջանայ քան զձեզ 'ի Գալիլիա, անդ տեսանիցէք զնա : Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս և ասէ, ո՞ղջ է՛ք, մի՛ երկնչիք. այլ ասացէ՛ք եղբարցն իմոց, զի երթիցեն 'ի Գալիլիա և անդ տեսցեն զիս : Իսկ նոքա գընացին 'ի լեառն՝ ուր ժամադիր եղև նոցա Յիսուս : Իբրև տեսին զնա երկրիպագին նմա : Եւ մատուցեալ Յիսուս ասէ, Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկ-

ըի : Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ : Ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ ։ և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի :

ՎԵՐՋ